

Alipyan F.

Առավելի հայացած  
կատ կրպիւ սովորութ,  
Արդիւ կէ և Անզագար  
կրպիւ:

15n

1781

1999

ԵԼԻԶԵ ԹԵԿՈՒԹԻՒ

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

60.0




ԹԱՐԳԱՄԱՑ

Մ Ի Ա Բ Ա Ն

Վ.Ա.Պ.Օ.Բ.Զ.Ս.Պ.Ս.Տ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՑ ԿԱԹ. ԵՀԱՄԻԱԾՆԻ



1891

ԵԼԻԶԵ ՈՒԿՈՂԻԿ

ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԿՈ.Մ.

ԱՐԱՔՈՒ ԱԽԱՋԱՆՔ

698/

ՈՒՐՑԻԾ ԼԻԾ

ԴՐԱՅՈՒԹՅՈՒՆ

Ե



Ա.Դ.Ա.ԶԱԽՈՐ Ա.ՍԻՆ

ՏԵՂՄԱՆ ՎԵՐԱՎԵՐԱ

Հ. Մակե

1984 թվական Զ. Մակե

Հ. Բ. Մակե

Մ. Մ. Մակե

Ս. Վ. Ա. Պ. Ա. Վ. Ա. Վ.

Խ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.



1890

# ՄԱՍԱՅԻ ԺԱՐԱԳՈՅ

ՊԵՏՐԱԿ ԱԱ-ՀԱՅ

ՀՐԱՄԱՆԱԿ  
ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՄԱԿԱՐԱՅ  
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՄՐԲԱԶՆԱԳՈՅՆ  
ԿԱԹՈՒԴԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

ՅՈՒՐԱՎԱՐ

41281. ԱՅ

38 1787

0081



Ա Զ Պ

Գրանիացի հոչակաւոր աշխարհագիր Էլիզէ  
Ռէկլիւի բազմահատոր Նոր Ընդհանուր Աշխարհա-  
գրութիւնից», որ գեռ ամբողջացած չէ և շարու-  
նակւում է հրատարակուել օգտակար համարեցինք  
Հայերէն թարգմանութեամբ ի լոյս ընծայել գոնէ  
այն գլուխները որոնք վերաբերում են մեզ մեր  
Հայրենիքին և մեր հարևան ազգութիւններին:  
Առ այժմն թարգմանուած և պատրաստ են տպագ-  
րութեան համար հետեւեալ գլուխները. «Լազիս-  
տան, Հայաստան և Քուրդիստան» կամ մի խօսքով  
ասած՝ Տաճկա-Հայաստան, «Ռուսական Հայաստան  
կամ Արաքսի աւազանը», «Ուրմիա լիճ», «Յառա-  
ջակողման կամ Առաջաւոր Ասիա» (Ընդհանուր  
նկատողութիւններ), «Փոքր Ասիայի, Ասորիքի, Պա-  
ղեստինի և Միջագետքի բնակիչներն ու կրօնները»:  
Եթէ հիւանդութիւնը մեզ արգելք չլինի, մտա-  
դիր ենք սրանց վրայ աւելացնել և «Կուրի աւա-  
զանը»: «Ճորոխի Ռիսնի և Խնդուրի աւազանները»:

«Գաղեստած» և «Պարսկաստանի բնակիչներն ու  
կրօնները»։ Այսպիսով կունենանք թարգմանական  
յօդուածների մի ամբողջացած շարք՝ մեր հայրե-  
նիքի և մեր հայրենակից և դրացի օտար աղգերի  
վերաբերութեամբ։ Գլուխները անկախ են միմեան-  
ցից և քաղուած էլիզէի ֆրանսերէն բնագրի Վ.  
և 19 Հատողներից։ Այս առաջին տետրակի բովան-  
դակութիւնն է «Արաքսի աւաղանը», «Ուրմիա լիճ»  
և «Առաջաւոր Ասիա»։

## ԹՈՒՍՍԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐԱՐԱՏ, ԱՐԱԳԱՇ, ՍԵԽԱՆ ԼՃԻ ԲԱՐՁՐԱ-  
ԻԱՆԴԱԿԻ ԵՒ ԱՐԱՔՍԻ ԱԻԱԶԱՆԻ.

Արաքսի աւաղանը իւր ամբողջութեամբ ներ-  
կայացնում է աշխարհագրակտն մի մեծ միու-  
թիւն։ այս մի լայն գօտի է որ տարածւում  
է կիսաշրջանաձև իւրանի բարձրաւանդակի  
հիսուսում, իւր կորնթարդ կողմը դարձրած  
գեպի հարաւ։ Մեծամեծ լեռներ և հզօր հան-  
դէպի հիպագոտիներ սահմանափակում են այս եր-  
կրը ամեն կողմից, բացառութեամբ կասպիա-  
կան ծովի սահմանների, ուր փուռում են Արաք-  
սի և Կուրի բերած սիկահողով ծածկուած դաշ-  
տերը։ Այս երկողեակ գետերից և ոչ մին չէ  
ոռոգում միայն մի ցեղաբանական աշխարհ։  
Կուրի ափերում յաջորդում են միմեանց Հա-  
յերը, Վրացիները և Թաթարները։ Արաքսի  
հովտում Հայերը, Քուրդեր և էլի Թաթարներ  
ապում են կողքի, սակայն սրանց մէջ

անտարակոյս Հայերն են որ գերակշռում են ոչ  
միայն քաղաքակրթութեամբ և ազդեցութեամբ,  
այլ և թւով։ Քաղաքական տեսակէտից Արաքսի  
աւազանը նմանապէս տրոհուած է։ ակերի բըշ-  
խած տեղը պատկանում է Թուլքիային, Արաք-  
սի աջ ափը իւր ընթացքի մեծ մասով պարսկա-  
կան հող է, բայց աւազանի ամենամեծ մասը  
Ուռուսաց տիրապետութեան տակ է և սրանց  
ձեռքումն են ռազմագիտական այն կետերը,  
որոնք դիւրացնում են՝ հենց առաջին հանդիպա-  
ծին, Եփրատի հովիտն իջները։ Ուռուսաստանը  
մինչև անգամ Եփրատի ակերը և նրա վերին  
օժանդակները իրան էր վեր առել, մինչև Դիա-  
դինից ներքեւ, բայց անգլիական ազդեցութիւ-  
նը գերակշռեց և Ուռուսաստանից յետ առնուեց,  
Բերլինի վեհաժողովում, ինչ որ տրուած էր  
նրան Սան Ստեֆանոյի դաշնագրով։ Հուչակա-  
ւոր Արաքսի սարը, Անդր - Կովկասի հսկան,  
և էջմիածնի վանքը՝ Հայերի կրօնական մայրա-  
դաքը և ազգային կեղրոնը, գտնում են ռու-  
սական հողի վրայ։

Արաքսի ակերից դէպի հիւսիս գտնուող լեռ-  
ները, որոնց հիւսիսային կողերը հակուած են  
դէպի Սև ծովը, կտրատուած են ձորերով և

հովիտներով բազմաթիւ հանդիպագօտիների և  
լեռնաշղթաների, ինչպէս օրինակ՝ Քիրէճի, Սու-  
ղանլի, Զլտոր լեռները, որոնք միանում ե-  
նութում են Կարսի աւազանի հիւսիսում, լճե-  
րի բարձրաւանդակում, որոնց արևելեան սահ-  
մանումն են Աբովլ և Սամսար հրաբուզիները։  
Այս խառնիխուռն լեռնաշղթաները գծուա-  
րացնում են հաղորդակցութիւնը մի կողից  
միւս կողը, բայց չեն համոււմ Կովկասի և  
Անդր - Կովկասի ահագին զանգուածների բար-  
ձրութեանը։ Կըզըլ կամ Կարմիր սար ամենա-  
բարձր գագաթը, Կարսի աւազանի և Զլտոր լճի  
միջև, միայն 3140 մետր բարձրութիւն ունի,  
և այսպիսով ցած է մնում յաւերժական ձնե-  
րի իդէալական սահմանագծից։

Արաքսի ակունքներից դէպի հարաւ՝ լեռների  
գոտին աւելի նեղ է, բայց աւելի բարձր։ Նա  
բաղկացած է միայն մի ջըբաժան լեռնաշղ-  
թայից, որ ձգւումէ արևելուտքից արևելք, Ա-  
րաքսի և Եփրատի զուգահեռական հովիտների  
միջև։ Բայց բազմաթիւ, հանգած խառնարան-  
ներով գագաթներ, որ շարուած են այս հրա-  
բիսային լեռնակատարի վրայ, անցնում են  
3000 մետրից։

Եեռնաշղթայի մէջ տեղում՝ Փերլի՝ գաղը և  
և Զինգիլը՝ արևելեան ծայրում, այն լեռնանց-  
քի մօտ, որ Արևանի դաշտից տանում է դէպի  
Բայազիլի դաշտը, երկուն էլ մօտաւորապէս  
3150 մետր բարձրութիւն ունին:

Արաքսին օժանդակ բազմաթիւ վտակներ  
Աղ Հուր (Տուզլա Սուլ) անունով ցոյց են  
տալիս իրենց ջրերի յատկութիւնը, գետ-  
նից դուրս ցայտելուց առաջ անցնելով աղա-  
նիստերի միջով : Փերլի սարից հիւսիս՝ (Երկ-  
րաբանական) երրորդական նստուածքից կազմ-  
ուած դաշտում, որին իշխումէ Բարդող (\*) սա-  
րի կոնուսը, գտնում է Կողբի լեռնը, աշ-  
խարհի ամենամեծ աղաքարի զանգուածներից  
մին: Այդ տեղից ոչ հեռու՝ Արաքսը, դեռ ևս  
չուռած Արփա Հայի արևմտեան խառնուր-  
դով, սողոսկում է մի նեղուցով, որ սեղմուած  
է խանձաքարի (բազալտի) երկու պատմէշի մէջ:  
Երջապատի բլուրները գուրկ են բուսականու-  
թիւնից և կազմուած են կաւից և գոյնզգոյն՝

(1) K. Koch. Vandernungen im Oriente.

(\*) Բարդող — Թէքէլթու, Ծ. թ.

կարմիր, կապոյտ, կանաչ, գորշ կը ակաերից  
(marne), որ տալիս են երկըին ամենատարօրինակ  
խայտաճամուկ կերպարանք: Ինքը՝ աղաբեր  
լեռնը, կազմուած է բազմերանգ շերտերից,  
բարձրանում է արևելքում թեթև, աննշմա-  
րելի զառիվայրով, մինչդեռ արեմոքում կը տ-  
րուած է անակընկալ կերպով, մօտ երկու քի-  
լոմետր երկարութեամբ և վերջաւորում է  
եռաստիճան գահավէժ ժայռերով, որոնց բաց-  
ուած պատերը երևան են հանում աղի զանդ-  
ուածը՝ շերտ շերտ սպիտակ՝ վարդադոյն  
կամ կանաչ գոյներով և բաժանուած կամ  
ծալքերով, որ փայլում են արեի տակ լուսնա-  
քարի (սելինիտ) անհամար բիւրեղներով: Աղա-  
յին ամենաբարձր շերտը, որ 15 մետր միջին  
թանձրութիւն ունի, երբէք չէ արդիւնագործ-  
ուած, իսկ ամենաստորինը, որ մասսամբ երե-  
ւում է գետնի մաշուածքում, նմանապէս ան-  
մշակ է թողուած քարհատներից, որ բանում  
են միմիայն միջին շերտում, որի թանձրու-  
թիւնը տարուքերուում է 30—64 մետր: Պոր-  
ուածքը հազիւ 600 մետր երկարութիւն ունի  
աղաժայռի ճակատին: Կողքի աղհանքը, Զինաւ-  
տանից դուրս, թերևս ամենահին, բազմաթիւ

դարեր շահագործուած բրածոն է: Հայերը  
պատմում են՝ որ Նոյը եկաւ այստեղից իւր ա-  
զի պաշարը բառնալու և ցոյց են տալիս մինչեւ  
անգամ այն տեղը, ուր նահապետը իւր բըր-  
ուածքը սկսեց:

Աղանքի անմշակ վեր թողած մասեւ  
ըստ շատ անգամ բանուորները գտնում  
են քարի մորճեր և լժակներ, որ մնացած են  
այն դարերից, երբ մետաղների գործածու-  
թիւնն անծանօթ էր: Այս հանքագործի գոր-  
ծիքները, որոնց կոթը կապում էին բարակ  
փոկերով՝ խրացներով, բոլորն էլ դիորիտ քա-  
րից են, որ այս երկրի և ոչ մի սարում չէ գրտ-  
նուել և որը հաւանականաբար աղագործները  
ստիպուած էին ձեռք բերել վաճառականու-  
թեամբ հեռաւոր աշխարհներից: Նահագոր-  
ծութեան եղանակները թէև առաջուանից ա-  
ւելի բարելաւուած, այսուամենայնիւ դեռ  
ևս բարբարոսական են, իսկ դիւրագնաց ճա-  
նապարհների պակասութիւնը սահմանափա-  
կում է Կողքի առուտուրը Թիֆլիզի և Երևա-  
նի նահանդներով: Միջին արդիւնաբերութիւ-  
նը քառասուն տարուայ ընթացքում, 1836-ից  
յետոյ, 4000-ից բարձրացել է 16300 տակա-

ռաչափի<sup>1)</sup>:

« Հայաստանի բարձրաւանդակի պատմական  
կեդըն » Արարատ սարը, որ Հին-Աշխարհի  
միջով՝ Բարեյուայ հրուանդանից մինչեւ Բե-  
րինգեան 2) նեղուցը ձգուած բարձր երկիր-  
ների և բարձրաւանդակների կեդընական  
գագաթն է բարձրանում է Արաքսի և Եփրա-  
տի սահմանորոշ լեռնաշղթայի արևելեան ծայ-  
րում, բայց իւր կոնաձեւ, սպիտակ, չինափայլ  
և սև աղտաքար-չեչաքարով (Scorie) ակոսա-  
ւորուած զանդուածով այնչափ բարձր է 2220-  
պատող լեռներից, որ կարծես ինքն իշխանն լի-  
նի և միւսները հետեւորդ, իսկ բլուրներն ու  
գարուփոս բարձրաւանդակները դաշտ լինին,  
փորուած իւր ոտքում: Բուն Արարատ անունը  
հաւանականաբար արամէական ծաղումից է և  
նշանակում է Մասիս, և ուղիղն էլ այս է, քանի որ  
սարը գտնուում է Հայաստանի հողում: Մա-  
սիսն ունի «Մեծ» կամ «Փառահեղի» նշանա-

1) Gustav Radde, Vier Vorträge über den Kaukasus.

2) Carl Ritter, Erdkunde, Asien, vol. X.

կութիւն : Թուրքերը տալիս են Արարատին « Ագրի - դաղ », կամ « Գահավեժ լեառ » անունը . (Արզի - դաղ — Արկեղ սար — Տապանի լեառ \*) մինչդեռ պարսիկները կոչում են Նրան կոհ - ի - Նուշ կամ Նոյի սար <sup>2</sup> : Բնական է որ այս սբանչելի, իւր փառքումն առանձնացած սարը, որ աւելի վեհ է քանի թէ Հելենների Ովմապոնները, ընդունուած է եղել Ափրատի հովտի բնակիչներից իբրև աստուածային կատար, և որ նրան համարել են արևելեան առասպելներում այն սրբազն դագաթը, որ տեղից իջան մարդիկ և անասունները աշխարհը լցնելու համար : Մինչեւ այս օր էլ Հայերը հեռուից ցոյց են տալիս ճիշտ այն տեղը, ուր կանգնեց Նոյի տապանը՝ « ամենաբարձր լեռների կատարներից քառասուն կանգուն բարձր » լողալուց, տարուբերուելուց յետոյ : Հըեղէն սրով զինուած ողիներ հսկում են սրբազն նաւին,

1) Vivien de Saint-Martin. Recherches sur les populations primitives du Caucase.

\*) Աղըր - դաղ — ծանր լեառ : σ. θ.

2) Carl Ritter, Erdkunde, Asien vol. x.

որ դարատափերի սէզի նման կանաչ գոյն ունի : Նախիջևանից Մասիսն երեսում է իբրև մի զանգուած, որ ուղղաձիգ տնկուած է հիւսիս - արևեմուտքում : բայց հարաւում՝ Բայշղից և Հիւսիսում՝ Երևանից լաւ երեսում է որ զանգուածը բաղկացած է երկու որոշ սարերից, շարուած մի գծի վրայ, Կովկասեան սարերի ուղղութեամբ : Մեծ - Արարատը իւր երկճիղ գագաթը վեր է համբարձել հիւսիս - արևեմուտքում, փոքր Արարատը — հարաւարեւելքում, անջատուելով հարեան վիթխարուց մի խոր ընկած գոգաւորութեամբ \* : Երկու գագաթը, իբենց հանդիպագօտիներով միասին, Բայշղիցի և Երևանի դաշտերի միջև, բռնած ունին մօտաւորապէս 960 քառակուսի

( ) James Creagh, Armenians, Koords and Turks.

\*) Արաքսի և շրջակայ դաշտերի բարձրութիւնը ծովի մակերեւոյթից.

Մեծ Արարատ	5160	մետր
Փոքր Արարատ	3596	"
Սրանց լերանցքամէջքը, ըստ Արինի	2705	"
Բայշղից (բերդը)	2043	"
Էջմիածին	865	"
Երևան	985	"

իւր՝ Կովկասի եռանկիւնաւորման<sup>\*</sup> աշխատութիւնները շարունակելու համար։ Այնտեղից դիտում էր նա հարաւարելքում Սաւալանը, 340 քիլոմետր հեռաւորութեամբ, հիւսիս-արևմուտքում Ելբրուսը, 440 քիլոմետր հեռաւորութեամբ և արևադարձ (héliotropique) նշաններով թղթակցում էր ուրիշ աստղաբաշխի հետ, որ հաստատուել էին Ախ-բաշի վրայ, Գեօկ-չայի բարձրաւանդակի միջավայրում։ 3475 մետր բարձրութեան վրայ լերան կողերը գեր ևս ամբողջովին ծածկուած են բուսականութեամբ, բայց 3750 մետրի վրայ սիզատեսակները (les graminées) վերջանում են. 3960 մետրից մինչև յաւերժական ձեան սահմանները, որ 4300 մետրից վերև են, հանդիպում է մարդ միայն Եւրոպայի բարձր Ալպերի բուսականութեանը<sup>†</sup>։ Վերին Արարատի բուսական տեսակները նոյնն են ալ-

\*) Triangulation-ը թարգմանում ենք՝ եռանկիւնաւորում, եռանկիւնաչափութիւն բառը վերապահելով trigonometrie բառին. ՞՞.

†) Г. Радде, Записки кавказского отдела Росс. Географ. Общества. Т 1, № 2.

քիլոմետր տարածութիւն։ Նրանց կողերը ամեւ նուրեք շատ զառիվայր չեն և դիւրամատոյց են նման էդնայի կողերին, բայց լաւայի (հրահռանք) հոսանքները և աւելի բարձրում՝ ձիւները, որ ամառը տաքութիւնից կակղում են և թուղանում, դժուար և տաժանելի են կացուցանում։ ճանապարհորդներին այս լեառը բարձրանալը։ Հայերը պատմում են մինչեւ անգամ հրաշքներ, որ յետ են կասեցըել ամբարիշտ հովիւներին, որոնք փորձել են վեր մագլցել «Աշխարհամայր լեառը»։ Իսկ Տուրնը Փորի և Մոռիէի անյաջող փորձերը նրանց աւելի հաստատեցին իրենց կարծեաց մէջ։ Երբ որ Պարուտը<sup>‡</sup> վերջնականապէս բարձրացաւ Մասիսի գագաթը 1829-ին, նրանք միարեցան հերքեցին այդ յաջող ձեռնարկութիւնը և երկար ժամանակ յաջողեցան կասկած յարուցանել այդ գիտնականի ասածների վաւերականութեան վրայ, որին սակայն յետոյ շատերը յաջողութեամբ հետեւեցին։ 1850-ին Խոցկոն ամբողջ հինգ օր մնաց գագաթում, այնտեղից

պեան կատարների բուժականութեան, Հետո  
բայց աւելի նուազ են թւով:

Ա. յսպէս օրինակ՝ ֆառլհորնի վրայ գտնուղը  
49 գանազան տեսակների փոխանակ, Արարա-  
տի համապատասխան գոտում գտնուում է 31  
տեսակ, որ անկասկած պէտք է վերագրել Հա-  
յաստանի լերան օդի չորութեանը: <sup>1)</sup> Իսկ ինչ  
վերաբերում է այս լերան կենդանիներին, լե-  
րան, որից արևելեան աւանդութիւնները ի-  
ջեցնում են բոլոր կենդանիներին, համեմատա-  
բար շատ աղքատ է՝ գայլը, բորենին, թերեւս  
յովագը՝ շրջում են ստորոտի թաւուաներում,  
ոչ հեռի Արաքսից, բայց Ամափսի բռեն, կողերի  
վրայ հանդիպում է մարդ միայն մի տեսակ  
այծքաղի (tour). Կուզի և նապաստակի մի տե-  
սակին. չկան մինչեւ անգամ չղչիկներ:

Արարատը թէւ Պիրենեան լեռներից միայն  
3 (լայնութեան) աստիճանով աւելի հարաւ է  
գտնուում, բայց աւելի շուտ է լերկանում  
Ճներից իւր զառիվայրերի ստորին մասում:  
Բայ Վագների 4220, ըստ Պալըռոտի 4370

1) Statkovskiy, Problèmes de la climatologie du Ca-  
case.

մետրի վրայով է անցնում յաւերժական ձիւ-  
ների ստորին սահմանագիծը, մօտ մէկ ու  
կէս քիլոմետր աւելի բարձր Պիրենեան լեռ-  
ների համապատասխանող գծից: Հայաստա-  
նի այս բարձր հրաբուզինը իւր կղզիացման  
պատճառով, որով ենթարկվում է արեգա-  
կան, ճառագայթների բոլոր ուժին և նրանց  
ստորին հովտից անդրադարձմանը, այլ և  
հողմերի շոգիացնցից ազդեցութեամբ ստիպ-  
ւում է մերկացնել իւր սև լաւայի գահա-  
վեժները՝ մինչև կատարին համելու հա-  
զիւ հազար մետր մնացած: Սակայն ձիւնն  
իջնում է շատ աւելի ներքե՝ լերան խրա-  
մատուած, մաշուած կողերի ծործոներում,  
այնպէս որ վարից նայելիս կարծես մի ման-  
եակ լինի, կանոնածեւ սուր ծայրերով: Այս  
ձեան հիւսերը ստանում են բիւրեղային հիւ-  
սուածք՝ կազմութիւն և փոխարկում են  
կատարեալ սառցարանների, որ միակն են Հա-  
յաստանում, որ 3000 մետրից (Յ. Մ. բարձ-  
րութեան) ցած են իջնում: Այս սառցարան-  
ներից գլխաւորը հիւսիս-արևմուտքում, Յ.  
Յակովինն է, որի կը կիսածե փոսորակը կազ-  
մակերպուել է աներկրայաբար Արարատի մի

նախկին բորբոքմամբ և նման է Մոնջիբելլյի  
կողերի վրայ գտնուած Դել-Բովէ խորածորի  
սառցարանին<sup>1)</sup>։ Արարատի սառցարանները  
շատ աւելի ներքեւ էին տարածուած երկրա-  
բանական նախընթաց շրջաններում։ այդ ե-  
րեսում է սառցային ակօսաւոր փորուածքնե-  
րից և ործաքար (trachyte) ժայռերի յղկուած  
մակերեսոյթից։ Տեղ տեղ խորտուքորտ պատ-  
նշները այնպէս լաւ յղկուած, ողորկուած են  
սառոյցների անընդհատ սահումից, որ ստացել  
են մետաղի փայլ և անդրադարձնում են ա-  
բեկ լոյսը կուրացուցիչ ճառագայթներով<sup>2)</sup>։  
Նատ հետաքրքրական է և այն, որ Մասիսը  
խայած իւր ձների ահազին քանակութեանը,  
որ ծանրանում են նրա բրդային վերջաւորու-  
թեան վրայ և լցնում բոլոր խառնարանները,  
է գրեթէ գլխովին անջուր։ Բնագէտ Վագները  
երկու աղբիւր միայն կարողացաւ գտնել այդ  
հզօր լերան ստորոտում և նրանցից բդիսած  
վտակները ջրի փոքրիկ երակներ էին, որ գալա-

- 
- 1) Abich, Beiträge zur Kentniss des russischen Reiches.
  - 2) Moritz Wagner, Reise nach dem Ararat.

լումէին խճերի միջով։ Մինչդեռ հարևան լեռ-  
ները, որ նմանապէս հրաբղխային ծագումն ու-  
նին, հոսեցնումեն իրենց ջրերը հեղեղատներով  
և լցնում են լայնածաւալ և խորին լճեր, Արա-  
րատի կողերը մնում են անջրդի և այրուած։  
Երաշտութեան եղանակներին նրանք մինչե-  
սկ աներնակելի են դառնում ստուերի և խո-  
նաւութեան պակասութեան պատճառով։ Հո-  
վիւները չեն վարում այնտեղ իրենց հօտերը,  
երեսում են հազիւ հազ հատ վայրի կեն-  
դանիներ, թռչուններն անգամ խուսափում  
են այս սև ժայռերով, թարշամած բռսակա-  
նութեամբ սարից։ Բացարձակ միայնութիւն  
է այնտեղ, ինչպէս աւագուտ անապատներում։  
Ուստի և հաւանական է որ ձեան և անձեռի  
ջրերը կորչում են գետնի ճեղքուածքներում,  
մոխիների և հրահոսանքների (լաւա) տակ,  
լճանալով երկրի ալքերում (խորերում) կամ;  
աւելի հաւանականաբար, սուզուելով և սըփ-  
ուուելով ստորերկրեայ գետային ցանցերում։  
Այս ստորերկրեայ ջրերը հրահոսանքի հը-  
նոցներից և երկրի խորքերի բնական ջերմու-  
թեան բարձր աստիճանից շոգիանում են,  
որով ևթերևս բացատրուի 1840 թուի սար-

սափելի ժայթքումը։ Այդ ժամանակ՝ մի նախկին խառնարան, որ գտնվում էր Սուրբ Յակովի վանքից ներքեւ, բացուեց յանկարծուստ, թանձը դողոշին բարձրացաւ դէպի երկինք, շատ աւելի բարձը Արարատի գագաթից, և տարածեց օդի մէջ ծծմբային հոտ։ Լեռն սկսեց մոնչել խուլ ձայներով և բացուածքներից ահագին քանսակութեամբ քարեր և ժայռեր դուրս ժայթքել, որոնցից մի քանիսը մինչեւ հինգ տակառաշափ էին կշռում։ Գետինը ճաքճաքուեց դուրս վիժելով շողու շատրուաններ, իսկ Արաքսի յատակից դուրս էին ժայթքում հանքային ջրեր մեծամեծ պլզպլզակներով։ Սուրբ Յակովի վանքը անհետացաւ փլուածքի տակ, ինչպէս նաև ճոխ Արագմամարդ Արկուոփ գիւղը, որ Հայերի ասելով ամենահինն էր աշխարհի երեսին։ Եւ իսկապէս Արկուոփ նշանակում է «որթ տնկել» և աւանդութեան նայած այդ տեղումն էր, որ նոյ նահապետը տնկեց առաջին որթը՝ իջնելով տապանից։ Արկուոփի երկու հազար զոհերը միակը չէին։ Երեան, Նախիջևան, Բայտղիում ուրիշ հազարաւոր մարդիկ ջարդուեցան երկրաշարժից, թէև բարեբազդաբար այդ

եղանակին դրեթէ ամբողջ բնակչութիւնը արներից դուրսն է լինում, երեկոյեան թարմ օդը վայելելու համար<sup>1)</sup>։

69.

Երկրաշարժից և ժայթքումից չորս օր յետոյ մի նոր աղէտ ջնջեց Արկուոփու դրեթէ բողոք մշակութիւնները. խառնարանում ժողովուած բողոքը ջրերն ու տիղմը կոտրեցին իրենց պատճեցը և վայր հոսեցին զառիվայրից՝ երկար, տղամային հոսանքով և դաշտը դարձրին ընդարձակ ճահիճ։ Ակուոփի<sup>\*)</sup> արտավիժումը առաջինն է, որ յայտնի է այս սարի պատմութեան մէջ, բայց Արարատը շատ անգամ ահեղ երկրաշարժների կեդրոն է եղել։ Ինչ վերաբերում է Ուշինեցու ճանապարհորդի պատմածին, որ իբր թէ 1735-ին բոց և ծովս է տեսել Մասիսի դագաթից դուրս ժայթքելիս, այդ շատ կասկածելի է։ Ոչ մի բնիկ Հայ չտեսաւ այդ երևոյթը։

Ալլահ-գէօղը (Աստուծոյ աչքը), կամ աւելի ճիշդ՝ Ալա-գէօղը, որ է «խայտաբղէտ լեառն»—

1) Moritz Wagner;—Abich;—Khodzko.

\*) Ուղիղ ձևն է Ակոսի, Արկուոփի ժողովը՝ դական ստուգարանութիւն է։ Ծ. Թ.

եթէ սակայն այս բառը հայկական Արագածի  
թբքական ձևը չլինի<sup>1)</sup> — Մասիսի դիմա-  
գէմն է, Երևանի (Արարատեան) դաշտի միւս  
կողմում: Այս մի հրաբխային զանդուած է շատ  
աւելի ցած Մասիսից, թէև իւր բութ կոնը հաս-  
նում է 4190 մետր բարձրութեան, բայց իւր  
տարածութեամբ և իւր հզօր հանդիպագոտի-  
ներով գերազանցում է իւր վեհ ախոյեանին:  
Հարաւում և արեւելքում իւր հրահոսաներնե-  
րը իջնում են մինչև Արաքսի հովիտը, արև-  
մուտքում և հիւսիսում, ուրիշ հոսանքներ են  
երևում, մնացած նմանապէս նախսկին Երկրա-  
բանական դարաշրջաններից, որ սահել են և  
թափուել Արփաչայի հովիտը Ալեքսանդրա-  
պոլի կողմով: Երկրի ներսերից դուրս ժայթ-  
քուած նիւթերի շեղերը բոնել են հարիւրաւոր  
քիլոմետր շրջապատ: Լեառը արժանի է իւր  
փայտաբղէտ կամ ծաղկեայ» անուանը (ալա),

1) Carl Ritter, Asien. vol. X.

\*) Այս վերջին մեկնութիւնն է ուղիղը: Բնիկ-  
ներից կոչում է ոչ թէ Ալագեօզ, այլ Ալագեազ:  
Ալա թբքական բառը դործ է դրում հայերէն  
ժողովոց, ծողիեայ բառերի տեղ: Ծ. Թ.

իւր հրաբխային չեչաքարերի, թեթև սպնդա-  
քարերի, սև, փայլուն վանաքարերի (օքսի-  
դիան) բազմերանգութեամբ, որոնց մէջ՝ տեղ  
տեղ շողշողում են կանաչն ու ծաղիկները:  
Հին խառնարաններից երեքը լցուած են փոք-  
րիկ լճերի ջրով, որ մթին են տալիս շրջա-  
պատի պատնէշների ստուերում: Արագածը  
Արարատի նման շատ քիչ աղբիւրներ է ար-  
ձակում դէպի դաշտը, սովորական ժամանակ  
ջրերը սուզում են չեչաքարի և մոխիլնե-  
րի միջով: Սարից հարաւ գտնուող մի լիճ՝  
Այղբը-գեօլը, իւր պաշարն ստանում է ստո-  
րելկրեայ ջրերից և ծնունդ է տալիս գեղեցիկ  
Սև—ջրի ակունքներին, որ հոսում են դէպի  
Արաքսը, ոչ հեռի այնտեղից ուր վերջինս լուա-  
նում է Հին Արմաւիր բերդաքաղքի ստորո-  
տը<sup>4)</sup>:

Արագածը Արարատի նման կղզիացած է և  
կապակցուած է ոչ շատ բարձր շեմերով հիւ-  
սիսային լեռների հետ: Այս լեռները ձգւում են  
զուգահեռաբար կովկասին և միաւորում են

4) Dubois de Montpréoux, Voyage autour du Caucase.

Ախալքալաքի բարձրաւանդակի հրաբխային  
լոռնաշղթան՝ Երևանից արևելք Սևան մեծ  
լճին իշխող լեռնային զանգուածների հետ;  
Այս լեռներն են Սոմբաէթի, Բամբակի սարերը  
և ուրիշները, որոնց գագաթները 2400-ից  
մինչև 3000 մետր բարձրութիւն ունին և  
բարձրաւանդակների սովորական լեռնակա-  
տարներ են; Երկուստեք էլ գետինը աստիճանաւ-  
բար բարձրանումէ դէպի լեռնանցքերի շեմ-  
քերը երկարաձիգ զառիվայրերով, որոնց շե-  
ղութիւնը—թեքուածքը թոյլ է: Եշակ—մէ յ-  
դանի լեռնանցքը, որ կտրում է այս լեռնաւ-  
շըթան, Թիֆլիսից Երևան տանող առևտրա-  
կան ճանապարհի վրայ, 2170 մետր բարձ-  
րութիւն ունի; Այս կէտում մարդ գտնւում է  
մի լեռնոտ բարձրաւանդակի հիւսիս-արևեմբ-  
տեան անկիւնում, ուր խաչում, միմեանց  
կտրում են Կովկասի զանազան առանցքները,  
կազմելով լեռնաշղթաների մի կատարեալ լա-  
բիւրինթոս, անցնելով հիւսիսից հարաւ, արև-  
մուտքից արևելք, հարաւ-արևմուտքից հիւ-  
սիս-արևմուտք. բայց տիրող ուղղութիւնը մը-  
նում է էլի հիւսիս-արևմուտքից դէպի հարաւ-  
արևելք, լինելով զուգահեռական մեծ-Կովկա-

սին: Միւս կողմից, լեռնակատարները մօտաւ-  
որապէս միենայն միջին բարձրութիւնն ունին  
և բարձրաւանդակի ահազին պատուանդանի  
վրայից վեր են բարձրանում մօտ 1000 մետր,  
միմիայն մի քանի հանգած հրաբխների կոներ  
հասնում են 1500 մետրի, յարաբերական  
բարձրութեան, այն է 3400 մետր բարձր ծովի  
մակերեսոյթից: Այս միաշափ բարձրութեան  
լեռնակատարների խաչակցելով—իրար կտրե-  
լով բացատրում է լայնածաւալ լճի կազ-  
մակերպութիւնը, որ լցնում է բարձրաւան-  
դակի փոսորակը, Սև ծովի մակերեսոյթից  
1932 մետր բարձրութեան վրայ, և որը դուրս  
է զեղում միմիայն ամառը դէպի Արաքսը,  
հարաւարեւմտեան կողմից, Զանգի (Հրազդան)  
գետով: Այս լիճն է Գէօկչայը կամ «Կապոյտ  
ջուրը» ըստ Թաթարների, և Հայերի Սևանը<sup>(\*)</sup>):  
Եաոդէնը առաջին երրոպացի ճանապարհորդն  
է, որ յիշում է այս լիճը, որի աւազանը 1370  
քառակուսի քիլոմետր մակերեսոյթ ունի, ու-  
րեմն մօտ երկու և կէս անգամ աւելի մեծ

(\*) Հնումը «Կապուտան» էր կոչում Ուրմիոյ  
լիճը: Ծ. Թ.

քան թէ ժընէւի լիճը։ Իւր խորութիւնը թէե  
չէ հասնում Աէմանի (ժընէւի լճի) խորութեա  
նը, սակայն բաւական մէծ է, միջին թւով  
45-ից մինչեւ 75 մետրի է հասնում։ Խորաշա-  
փը հասել է 110 մետրի՝ լճի երկայնութեան  
առանցքի վրայ, բայց աւազանի ամենասեղ-  
մուած մասում։ Սրա ջրերը քաղցը են ա-  
ւազանի հիւսիսային մասում, ինչպէս որ ար-  
տահոսող լճերի մեծամասնութեան ջրերն են  
լինում, բայց հարաւում փոքր ինչ աղի են,  
որովհետև այդ տեղում դանդաղ են նորոգ-  
ւում<sup>2</sup>։ Զեների տեսակներով հարուստ չէ  
այս լիճը և ունի դրանցից միայն հինգ տեսակ,  
ի թիւս որոց Կարմրախայտ և Իշխան։ Զնայե-  
լով տեսակների նուազութեանը ձուկը սաստիկ  
առատ է այդ լճում։ Պատահել է որ մի ուռ-  
կան նետելով բռնուել է միանուագ մինչեւ հա-  
զար և երկու հազար կարմրախայտ։ Զմեռ

1) Семеновъ, Словарь Российской Имперіи; Кеслеръ,  
Պետերբուրգի բնագէտների ընկերութեան  
յուշատետրերը (մեմուառ), ոռուերէն Հ.  
VIII, 1876.

2) Dubois de Montpereux, Voyage autour du Caucase.

որսում են նրանց կոտրելով սառողցը։

Այս լիճը Գէօգչայ անունն ստացել է իւր  
գեղեցիկ երկնադոյն ջրերից։ Եռանկիւնաձե  
է, մէջ տեղում սեղմուած է երկու հակադիր  
սարաւանդներով և ամբողջովին շըջապատ-  
ուած է լեռներով, որոնց առաջին երեսը գոր-  
շագոյն է, իսկ աւելի հեռուն նրանք կապուտին  
են տալիս միջանկեալ օդի շերտերից, տեղ  
էլ երիգաւորուած են ձիւնով։ Ընդհանուր տե-  
սարանը փառահեղ է և հանդիսաւոր, բայց  
շատ տիսուր։ Պորփիւրի և հրահոսանքի զարի-  
վայրերը գրեթէ գլխովին լերկ են, չէ երեսում  
և ոչ մի ծառ, նոյն իսկ լճափում։ Հնադա-  
րեան քաղաքներից մնացել են փլատակների  
կոյտեր միայն, որոնց մէջ գտնուել են Սասա-  
նեան շատ դրամներ։ Կիւղերը կուչ են եկած  
լաւ պարփակուած փոսորակներում, քարաժայ-  
ուերի ոտքում։ Երեսում են միայն գիւղակներ,  
ուր խրճիթները կիսով չափ փորուած են գետ-  
նի մէջ։ Բազմաթիւ գերեզմանական հողաբլուր-  
ներ, որ կոչւում են Յղուզների, այն է՝ «Հսկա-  
ների» շիրիմ, կանգնած են բարձրաւանդա-  
կի վրայ շատ տեղերում, երբեմն առան-  
ձին, երբեմն ամբողջ շարքերով դարատափերի

երեսին, նման այն գերեզմաններին, որ  
դժոնումնեն Արագածի և մինչեւ անդամ Փռքը -  
Մասիսի գագաթներին <sup>1</sup>: Բարձրաւանդակի  
գրեթէ բոլոր դաշտերը, կարծամանակ, թող-  
ուած էին խոպան, երկիրը ամայացել էր, ոչ  
մի նաւ չէր լողում ճի երեսին, կարծես այն  
ժամանակները լինէին, երբ լճային<sup>2</sup> բնակարան-  
ները բարձրանում էին ալիքներից վերև <sup>2</sup> :  
Զինորսներն անդամ չէին հեռանում ափից:  
Տարուայ երկու երրորդ մասը ձիւները պա-  
տում են բարձրաւանդակը և ձմեռը, չնայած  
որ կատաղի փոթորիկներն իջնում են լեռնե-  
րից, այսու ամենայնիւ յաճախի է պատահում  
որ լիճը ծածկում է սառոյցով, առաջ ափերի  
մօտ և յետոյ կամաց կամաց կեդրոնում: Նէի  
հիւսիսարևմտեան անկիւնում Սևանի վանքը,  
որ իննը դար շարունակ հռչակուած է Հայաս-

1) Bergé, Russische Revue, 1874 № 11.

(\*) Լճային են կոչւում նախապատմական մարդ-  
կանց բնակարանները շինուած լճերի մէջ, ցցերի  
վրայ: Թ. Թ.

2) Bayern. (Бавария), Сборникъ свѣдѣній о Кав-  
казѣ, I.

տանում, շինուած է հրահոսանքի մի կղզեակի  
վրայ, որ ջրերի յատակից արտածայթքուած  
մի կոնուս է:

Դժուարին է երկակայել մի աքսորավայր, որ  
աւելի տխուր, աւելի ձանձրոյթ բերող լինէր,  
քանի թէ այս սև ժայռերի կղզին, զուրկ բու-  
սականութիւնից և որի վանականները դատա-  
պարտուած են լուակեացութեան տարեբոլոր,  
բացի չորս օրից<sup>3</sup>): Բայց մերձակայ բարձրաւան-  
դակի գիւղերը բուժավայր են դարձել վատա-  
ռողջ Երևանի բնակիչների համար: Արագսի  
հովտի այնչափ սովորական և այնչափ վտան-  
գաւոր ջերմախտը չէ իշխում բարձրաւանդա-  
կին, որի օդը ջինջ է և կազդուրիչ:

Սևանի լճից և նորա շրջապատի հրաբուխ-  
ներից դէպի արեւելք, ուր հովիտները լցուած  
են հրահոսանքի արտավիժութեամբ, Դարա-  
բաղի խառնիխուռն և կարճ լեռնաշղթաների  
բաւիլլը տարածւում է արեւելքից դէպի հա-  
րաւարեւելեան ուղղութեամբ: Դարաբաղը  
վրացիներից կոչւում էր Ռանի, իսկ Պարսիկ-

(\*) Կռակեցութիւնը պարտադիր չէ Սևանում:  
Թ. Թ.

ներից և հին Հրէաներից՝ Առուան<sup>\*)</sup>:

Ահա այս՝ խորին կրծերով կտրատուած բնագաւառումն է, որ Գեօկչայի խորդութորդ զանգուածները ցցում են վեր իրենց ամենաբարձր կատարները, որոնք եթէ չեն համնում յաւերժական ձիւների գոտուն, դոնէ այնչափ բարձր են, որ նրանց ծործորները գրեթէ միշտ լեցուն են սպիտակ ձեան շերտերով։ Երեք կամ չորս սար միայն պահպանում են տարեքոլոր իրենց ձեան գտակները. այսպէս է Կէմիշ գագթը 3740 մետր, որտեղ գտնւում են Թարթառ (Տէրտէր) գետի ակունքը։ Այդպիսի են նաև Ղազան-գեօլ-դաղը և իւր հարաւային դրացին՝ Կափուջիշը (3715 մետր), որ ձգւում է հարաւում դէպի 0ըդուպատ քաղաքը գահավէծ լեռներով, սրածայր պատառուտուն գագաթներով և փուլքերով լեցուն։

Այս՝ արեելեան Հայաստանի ամենաբարձր գագաթներից դէպի հարաւ, Արաքսի նեղուցի միւս ափին, բարձրանում են միւնոյն բարձրութեան լեռներ՝ նմանապէս երիզաւորուած

(\*) Այս երկրի Առան նահապետի մասին տե՛ս Խորենացի գիրք Բ. դլ. Ը. Ծ. Թ.

Ճիւներով։ Կափուջիշի լեռնաշղթայի և Շուշուայ սարերի միջև բացուած է Զանգազոռի աւազանը, 1200 մետր միջին բարձրութեամբ, որ թւում է թէ մի ժամանակ եղել է Գեօկչայի աւազանի նման լճային գոդաւորութիւն և որի ջրերը դատարկուել են Բարգուշատի և Հաքարի երկու գետերով, որ և միախառնուում են Արաքսի հովիտը մտնելուց առաջ։ Այս աւազանի մէջ տեղում բարձրանում է Իշկուի կամ Քաջալ-դաղ կոնսածեւ սարը, որ 3000 մետրից աւելի բարձր է։ Նըակայ հրաբխներից զուրս ժայթքած հրաբխային մոխիբներն ու չեչատները շեղջակուտուել են նախկին լճի յատակում շատ հարիւրաւոր մետք թանձրութեամբ ծալքերով, որոնք ձորացել են և խորխոր ատներ են կազմել հեղեղներից։ Մոխիբների դարաստափերը, հացաբոյսի ցանքսերով մշակուած, վերջաւորուում են կանաչգեղ հովիտների գլխին, բազմերանգ՝ գորշ, կանաչ, կապոյտ, կամ մինչև իսկ ալ-բոսորային կարմիր զառիվայրերով, որ մաշուելով անձրեացիքից ստացել են սլաքների, կոթողների կերպարանք, տեղ տեղ կը ելով իրենց ծայրին վէմի խոշոր կտորներ, որ Ալպեան մի քանի գա-

ւառների «գլխածածք սիներին» են նման։  
Այս շարժուն հողերում գիւղացիք փորել են  
իրենց մառանները, ախոռները, մինչեւիսկ  
բնակարանները ։  
Սյս լեռնոտ գաւառների բուսականութիւնը  
զարմանալի կերպով նմանում է Եւրոպայի  
լեռների բուսականութեան։ Եթէ որևէ ճանա-  
պարհորդ կարողանար յանկարծակի փոխա-  
դրուել Ալպեան հովիտներից Արաքսի օժան-  
դակների ափերը, կարող էր հաւատալ որ ին-  
քը չէ փոփոխել երկիրը։ Նա կդանէր միենոյն  
հաճարիները (hêtre), կաղնիները, գեշիները  
(tremble - ը բարտու մի տեսակէ, դողդոջ տերե-  
ներով), միենոյն ընդանտառային մացառները  
և մինչև իսկ սէպերի մէջ՝ ծաղիկների միենոյն  
տեսակները<sup>2</sup>։ Բարձր հովիտները, ծածկուած-  
ուահողի թանձը շերտով, սաստիկ բերրի են  
և այս պտղաբերութիւնն է թերեւս պատճա-  
ռը, որ երկիրն ստացել է Դարաբաղ կամ «Աւ-  
պարտէզ» անունը<sup>3</sup>)։ Բայց անտառային շեր-

1) N. von Seiditz, Mittheilungen von Petermann, 1880

2) Moritz Wagner.

(\*) Դարա Բաղ կոչումը մեր կարծիքով ծագել

տերի անջրոյի զառիվայրերի վրայ գետինը ա-  
մառնային հարիւրաստիճանեան 40 աստիճանի  
տաքութիւնից խանճւում է և ընդհանրապէս  
ամուլ է, միմիայն եղեսպակները (sauge) և ու-  
րիշ հոտաւետ տունկերն են կազմում արօտա-  
կան բուսականութիւնը, իսկ վայրի կենդանի-  
ներն են գլխաւորապէս սողուններ, սարդեր,  
կարիճներ և սարսափելի մորմեր, որին  
ուռուները սովորաբար ֆալանգա են կոչում  
(phalangium araneoides)։ Դարաբաղի ձիերը, որ  
համբաւուած են իրեւ Անդրկովկասի, ամենա-  
լաւ և ամենագեղեցիկ նժոյգները, մագլցում  
են ժայռերի վրայ այծերի նման։

Արաքսը, բուն, գերազանց հայկական գետը,  
ծնունդ է առնում ուռասական հողից դուրս  
երգրումի հարաւում։ Խը սկզբնական վտակ-  
ներն ստանում են Բիւրակնեան կամ «Հա-  
գարլճեան լեռներից» (Բինգէօլ դադ), որոնց  
է բաշա (Բաղք) գաւառի անունից։ Թուրքերը  
փոխ առնելով հայկական անունները, կամ աղջա-  
տել են նրանց կամ տուել թրբական նշանակու-  
թիւն։ Օ. Թ.

1) Gustave Radde.

Հարաւային կողերը ուղարկում են մի քանի  
օժանդակներ դէպի Եփրատը։ Երբեմն ինքն  
Արաքն էլ կոչում է «Հազարլճեան գետ»<sup>1)</sup>։  
Ուստական Անդրկովկասը մտնելիս դեռ մի  
նուազ վտակ է, բայց կը ինսապատկում է իւր  
պարունակութիւնը, երբ որ ընդունում է Աւ  
խուրեանը կամ Արփաչայը, որ իջնում է Արա-  
գածի և Ալեքսանդրապոլի հրաբիսային բարձ-  
րաւանդակներից։ Այս օժանդակի շնորհի Աւ-  
րաքսը կարողանում է ոռողել Երեանի դաշտի  
մեջ մասը, որ առանց այդ ոռողմանը անսապատ  
կդառնար։ Վարաբաղի լեռներից և Գէօգչայի  
բարձրաւանդակից ստիպուած ծոռելով դէպի  
Հարաւ, նա անցնում է Նախկին լճային յատա-  
կով և այդ տեղից դուրս է գալիս լեռների նեղ  
կերճով, ջրենկեցներ կազմելով 60-ից մինչեւ  
80 մետր լայնութեամբ, ուր իւր աղմկալից  
ջրերը ընդհարուելով այս և այն քարափներին,  
ու, գահավէժ, սրածայր ժայռերի միջեւ, ցած  
են սահում միջին թւով 5 մետր մի քիլոմետրի  
վրայ և երբեմն մինչեւ 15 մետր՝ կը թէ թէր-

1) K. Koch, Wander. im Oriente.

ուած մասումը<sup>1)</sup>։ Օրդուպատը, Առասբարի  
կը մից վերեռում՝ Կասպից ծովից դեռ 929 մետր  
բարձրութեան վրայ է, իսկ այստեղից հազիւ  
100 քիլոմետր ներքեւ գետը մտնում է դաշ-  
տը։ Ընդունելով Բարգուշատը նա պատում է  
հարաւից «Քաջերի սարը» կամ «Դիրի-դաղը», որ  
առանձնացած կանգնած է դաշտում, յետոյ  
ընդունում է բաղմաթիւ հեղեղատներ պարս-  
կական լեռներից և միանում է վերջապէս Կու-  
րի հետ, ընդամենը 780 քիլոմետր ընթանա-  
լուց յետոյ։ Քաջերի լերան (որ այդ անունն է  
կը ում այն աւազակների պատճառով, որ դեռ  
մինչեւ 1877ը երեք հարիւր հոգու չափ գտնը-  
ւում էին իւր վրայ) ստորոտում գետն անց-  
նում է Խուդափերին կամուրջի տակով, որ  
աւանդութիւնը ընծայում է Պոմպէոսին, բայց  
որն անկասկած աւելի նորագոյն ժամանակի է  
պատկանում։ Խւելի վերև՝ երեսում են մի ու-  
րիշ կամուրջի աւերակներ, որը բնիկների ասե-  
լով շինուած է Աղեքսանդրից, և իսկ որ, թերեւ  
հռովմէական գործ լինի<sup>2)</sup>։ Խուդափերին կա-

1) Dubois de Montpréaux.

2) N. von Seidlitz.

մուըջը, որի վրայով բաւական մեծ առևտուը  
է լինում ուսւ և պարսկական ափերի միջև,  
վերջինն է Սրաքսի կամուրջներից։ Դրանից  
ներքև ջրաբաշխական աշխատութիւնները  
բարձի թողի են արուած։ Ոռոգման ջրանցք-  
ները, որոնք մի ժամանակ հանուած էին Սրաք-  
սի ստորին գնացքից և պտղաբերութիւն էին  
սփուռմ տափաստաններում, գրեթէ ամբողջո-  
վին լքուած են և Կուրի ճահիճների հետ միա-  
սին մի անիծեալ երկիր են դարձնում կատվա-  
կան ծովափի գտառները։ Սրաքսը, ասում են,  
նորից ձգտում է դեպի աջ դառնալ և բաժան-  
ուել կուրից, առանձին ծովը թափուելու հա-  
մար, ինչպէս որ էր Ստրաբոնի ժամանակ։

Սրաքսի հովիտը Առաջաւոր Ասիայի այն եր-  
կիրներիցն է, ուր մարդս չափազանց նեղւում է  
եղանակի ծայրայեղութիւններից։ Երեանի կիւ-  
ման Թիֆլիսիցն էլ չափազանց է։ Մինչդեռ ձր-  
մեռ ցըտութիւնն հասնում է—30 և մին-  
չե իսկ՝—33-ի, իսկ միջին թւով ամբողջ  
յունուարում—15 է, որ և բացատրում է  
դաշտավայրի բարձրութեամբ, որ մօտ հազար  
մետր բարձր է ծովի մակերեսոյթից, ամառ՝  
շոգերը անցնում են 40 աստիճանից և հաս-

նում են մինչեւ անգամ 44 և 45-ի։ Այդ ժա-  
մանակ այլ եսոր և է եւբոպացի չէ կարող դի-  
մանալ և ստիպուած է լինում ապաստանել լեռ-  
ների ձորերի հովանիներում։ Այս պատճառով  
էլ գծնդակ տենդերը և ուրիշ հիւանդութիւն-  
ներ շատ յաճախ են երեանում։ «Թիֆլիսում,  
Հայը, մատաղահասը ծերից չէ տար-  
բերում, Երեանում՝ կենդանին մեռածնե-  
րից։ Բարեբազդաբար՝ շոգերի ժամանակ Ե-  
րեանի դաշտը աւելում է իւրաքանչիւր երե-  
կոյ մի հիւսիս-արեւմտեան քամիով, որ Նորդան-  
վական մի տեսակն է և բուռն զօրութեամբ փլ-  
չում է Սրագածի սարերից ։\*) Այս քամին,  
միստրալի նման, առաջ է գալիս ձիւնապատ-  
բարձրութիւնների և խանձուած հովտի ջեր-  
մութեան աստիճանի տարբերութիւնից և սո-  
վորաբար սկսում է փշել երեկոյեան հինգ ժա-  
մին և տեսում է գիշերուայ ամենամեծ մասը։

(\*) Միստրալ է կոչւում Միջերկրական ծովի  
վրայի մի զով հողմ, որ փշում է հիւսիսային ա-  
րեւմտեան ուղղութեամբ։ Ծ. թ.

(\*\*) Այս հողմը Հայերից կոչւում է «Լուսա-  
ւորչի քամի»։ Ծ. թ.

Քանի որ վշտւմ է այս քամին բնակիչները փակւում են իրենց տներում ազատ մնալու համար փոշու, և մինչեւ իսկ խոշոր աւագի յործանքից, որ մըրկւումէ օդի մէջ: Երեանի շըջակայքում ճանապարհների ավին տնկուած և այդիները շըջապատող բոլոր բարտիները թեթեակի խոռարհուած են դէպի հարաւ-հարաւ-արեւելք<sup>1)</sup>:

Այս բըգաձեւ բարտիները մարդու ձեռքով տնկուած ծառեր են և Արաքսի հովտի դաշտանկարներում տիրապետում են, բայց շատ տեղերում, մանաւանդ քաղաքների մերձակայքում, մի ուրիշ ծառ տարածում է իւր ուղիշները մշակութիւններից վերև: Այդ ծառն է նէօլիչնու (Նովրանդ), թեղու պատուաստուած մի տեսակը, որի սաղարթները կանաչութեան ահագին շըջան են կազմում, որ բոլորովին անթափանցիկ է մնում արեւի ճառագայթներից: Այդ թեղին դոյութիւն ունեցող զարդարանքի ծառերից ամենագեղեցիկներից մինն է, բայց դեռ գտնուում է նա միմիայն ուուսական Հայաստանում: Ծիրանին աճում է բոլոր պարտէզներում և զիւզացիք մշակում են բրինձ

(որիզ), բամբակ, կնճիթ և գերչակ (սրոհունդ): ունին նաև այգիներ, որոնցից ստանում են մի մոլթ գոյնով հեղուկ, որ շատ հարուստ է ողիով և որը կարելի է համեմատել իբրև ազանցերի կինի, մաղերի և խերէսի հետ: Որթը այս տեղում գիմանում է այն պայմանաւ միայն, որ ցուըտ եղանակներին թաղուելու է հողի տակ, իսկ ամառուայ շողերին ջրուելու է, ինչպէս մարդուց մշակուած բոլոր բոյսերը:

Առանց ոռոգման ջրանցքների ամեն ինչ խամրումէ այս կլիմայի տակ և գետինը ցամաքումէ ինչպէս փուան կաւը: Բայց ուր որ հոսումէ բարերեր ջուրը, գետինն սկսումէ կանաչել և ծաղկել, անապատի մէջ ովասին է ծնում: Պարսիկներն են փորել այս երկի ոռոգման բոլոր կաւառները և մեծ հոգածութեամբ անց են կացըել առուներն ասորելիքեայ ներքնուղիներով, որպէսզի թանկագին հեղուկի գոլորշիացումը նուազ լինի: Ուրեմն և պարսիկներն են այն բարեբարները, որոնց պարտական են այս երկրի բնակիչները իրենց դոյութիւնը: Եթէ զուըը

1) Nicolas von Seidlitz, Mittheilungen von Petermann, 1880; — notes manuscrites,

կորչիր, մարդոն էլ ստիպուած է գաղթելու կամ  
նոյնպէս կորհչելու; Մի անգլիացի ճարտարա-  
պետ, ասում էն, գբազուած է Արքաչայի  
ջրերը հանելու դէպի հարաւարեւելը և նրանց  
յըուելու առունելով Սարդարապատի այժմեան  
անապատ գաշտերի վըայ, էջմիածնից դէպի  
արեւմուտք: Միւս կողմից խօսում էն արդէն  
հարիւր հազար գերմանացի, իրանդացի և ուսա-  
գաղթականների մասին: որ գալու էն այս հո-  
գերի վըայ հաստատուելու, հենց որ կենդանա-  
րար ջուրը գայ: Նմանապէս Արքափսի ստորին  
հովտում ամբողջ մի ժողովուրդ կարող է բնա-  
կութեան տեղ գտնել վազող ջրերի ափերին: \*)

Զրանցքներին սպասելով, որ նոր կենդա-  
նութիւն էն տալու դաշտերին, դրեւեւ ամբողջ  
ուստական Հայաստանի երկրագործութիւնը  
խեղճ-տարբական վիճակի մէջ է: Հայերը ճար-  
տար վաճառականներ էն, բայց հնապահ, նա-  
խապաշարուած երկրագործներ: Թաթարներն  
էլ նրանց լաւ մշակութեան օրինակ չեն կարող

\*) Առանց նոր գաղթականների էլ տեղական ժո-  
ղովուրդը չափազանց մեծ կարութիւն ունի  
մշակելի հողերի:

տալ երբէք: Նատ դաւառներում՝ վայրի խո-  
զերը, որ ամբողջ երամակներով ապրում էն  
Արքափսի մացառներում և շամբերում, երկրա-  
դործութեան մեծ պատուհաննեն: Նրանք  
աւերում են մերձակայ դաշտերը փորփորելով,  
կոխկոտելով և թաւալելով: Բայց թաթարնե-  
րը, իբրև լաւ մուսուլման, այնպիսի մեծ  
զգուաննը են զգում դէպի այս պիղծ անասուն-  
ները, որ բնաւ չեն կամենում պղծուել նրանց  
հալածելով, չեն էլ համաձայնում մինչեւ ան-  
գամ իրենց գրացիներին թոյլ տալ այդ կատա-  
րելու: Յաճախ մի վարազի սպանութիւն պատ-  
ճառ է գարձեւ կատաղի և բուռն տեսարանների  
այլացեղ գիւղացիների միջն: Երկրագործա-  
կան գործիքները ամենանախնական շինուածքի  
են: Դեռ մինչեւ այսօր էլ գործ են ածում՝ ցո-  
րենը յարդից բաժանելու համար, կոպիտ սահ-  
նակներ—կամեր, որոնց տակի երեսը զինուած  
է սրածայր գայլախազերի շաբքերով 2: Հնա-  
բանները կարող են կիւննինզամի հետ միասին  
հարցնել թէ այն անհամար քարի սլաքները,

1) Parrot;—Petzholdt.

2) N. von Seidlitz, notes manuscrites.

որ զտնուել են աշխարհի բոլոր մասերում, չե՞ն  
եղել արդեօք մասամբ ծառայած, Հայաստանի  
գայլախաղերի նման, երկրագործական խաղաղ  
զբաղմունքների:

«Արմէնիէնները» կամ լաւագոյն՝ Հայ, Հայք  
կամ Հայկեանները, ինչպէս իրենք իրենց ան-  
ուանում են, Արաքսի հովտում բնակուղդը՝  
խառը ազգն են: Իրենց թւով ամբողջ կով-  
կասի մէջ չորրորդ, իսկ ազգեցութեամբ, ուու-  
ներից յետոյ առաջին տեղն են բռնում: Ար-  
մէնիա կոչումը արամական ծագում ունի և  
հաւանականաբար նշանակումէ «բարձր երկիր»  
և շատ անորոշ մի անուն է, որ տրումէ այն  
բոլոր սարահարթերի խմբին, որոնց կենդրո-  
ւում տիրապէս բարձրանում է Արարատի երկ-  
ճիղ գագաթը: Ցուն Արմէնիան կամ Հայաս-  
տանը, որ նշանակում է Հայերի բնակութեան  
երկիր, ենթարկուելով քաղաքական դժբաղդ  
փոփոխութեանց և գաղթականութեանց, դա-  
րուց դար փոփոխեց նաև իւր սահմանները:  
Արդի ժամանակում Հայաստան կարելի է հա-  
մարել Արաքսի գրեթէ ամբողջ հովիտը, կուրի  
աւագանի մի նշանաւոր մասը, գետի աջ և ձախ  
ափերով, Եփրատի ամբողջ վերին աւագանիը,

մինչեւ նորա երկու ճիւղերի խառնուրդը, Վա-  
նայ լճի ափերը և Ուրմիա լճի աւագանում,  
Պարսկաստանի մի քանի կտորները: Հայաս-  
տանի ծանրութեան կեդրոնը հետզհետէ տե-  
ղափոխուել է դէպի հիւսիս, երբեմն այդ կեդ-  
րոնը դանուում էր Վանայ լճի մօտերքում և  
վերին Մուրատի կամ Արևելեան Եփրատի  
հովտում, ուր մինչեւ այժմ էլ մի գիւղ կրում  
է Հայ ազգի անունը: Բայց մուսուլման  
թուրքերին ենթարկուած երկիրը չէր կարող  
Հայերի սուրբ երկիր համարուել, ուստի և աշ-  
խարհի ամեն մասերից, ուր ցըռւած են Հայերը,,  
նոցա հայեացքը դառնում է դէպի Արարատ  
սարը և Արաքսի դաշտերը, ինչպէս դէպի իրենց  
բուն Հայրենիքը: Մեր օրերումն էլ հէնց այդ  
տեղումն է Նրանց ցեղի ժողովման կեդրոնա-  
տեղին, և ոչ մի տեղ այդպէս անհիւան օտար  
ազգերից և խառնթեամբ չեն ապրում Հայերը,  
ինչպէս այդ երկրում, ուր և լեզուն, ինչպէս  
ասում են, ամենամաքուրն է և եկեղեցում  
դործածուած Հայերէնին մերձաւրագոյնը:  
Վերջինը 14-րդ դարի վերջից անհետացել է  
բոլորովին գործածութիւնից:

1828—1830 թուականին, երբ ռուսները

տիլեցին երկրին, Պարսկաստանից և Թուրքիա-  
յից մօտ 130000 հայ գաղթեցին ուռա զօրքի-  
պաշտպանութեամբ և հաստատուեցան Արաբ-  
սի և Կուրի Հովիտներում՝ բռնելով քուրդերի  
և թաթարների տեղը, որոնք հակադարձաբար  
զաղթեցին մահմետականների ձեռքում մնա-  
ցած գաւառները։ Վերջին 1877-78 պատե-  
րազմի ժամանակ Երկուստեր հակադարձ գաղթ-  
ման յար և նման Երեցթը կրկնուեց։ Արտա-  
հանի զաւ սուր, Կուրի վերին Հովտում, և  
Կարսինը, Արտքսի աւազանում, մեծաւ մա-  
սամբ զբկուեցան իրենց մահմետական բնակիչ-  
ներից և ի տրիտուր ստացան բազմաթիւ հա-  
յեր, որոնք գալիս էին Եփրատի վերին աւա-  
զանից և Ճորոխի ափերից, մանաւանդ այն  
մասերից, որ Սան Ստեֆանոյի դաշնագիրը  
տուել էր Ռուսներին և Բեռլինի վեհաժողովը  
նորից յետ առել։ Այս ազգերի էւճն հանդի-  
պումը չեր առանց կոտորածի, սովի և տարա-  
փոխիկ հիւանդութեանց։ Սարսափելի բազմու-  
թեամբ մարդկային կեանք զոհ դնաց, և այժմն  
էլ դեռ չնայելով իւաղաղութեան հաստատուե-  
լուն, ցեղական և կրքնական ատելութիւնը  
պատճառ է գաւանում արիւնահեղ տեսարան-

ների: Այսու ամենայնիւ, ընդհանրապէս առած, ժողովուրդները աւելի լաւ տեղաւորուեցին, համեմատ իրենց բնական ձգտուններ:

Մինչեւ այժմ չկայ քիչ թէ շատ ճիշտ վիճաւ  
կազմութիւն Փռքը Ասխայում և ընդհանրա-  
պէս մահմետական հողի վերայ ապրող հայերի  
թուի վերաբերութեամբ, բայց հաւանական է  
որ այս կողմում ապրողները ուսւ հողի վրայ  
ապրողներից սակաւաթիւ լինին +:

Ա. մըող զագը, սովորաբար 3 և մի քանի  
հեղինակներից 2 մինչև 4 միլիոն համարուած,  
հաւանական է՝ որ 2 միլիոնից աւելի է:

Մի բացառիկ տարօրինակութեամբ, որ հայ-  
յերի ցըուածութեամբ է ցոյց տալիս, հայերով  
ամենաբազմամարդ քաղաքը. ոչ միայն Հայաս-

1) Հայերի հաւանական թիւլ

Կովկաս և Նորոպական Ռուսաստան	840 000
Թուբքական Հայաստան, ըստ Ռա- ւենստայնի	760 000
Պարսկաստան, ըստ Դիւլորիէի	150 000
Նորոպական Թուբքիայ	250 000
Ուրիշ Երկիրներ	60 000
<hr/>	
Գումար	2 060 000

## 2) Issaverdens, Armenia and the Armenians.

տանից այլ և Ասիայից դուրսն է գտնուում, որ  
է կոստանդնուպոլիսը, ուր Հայոց ազգը »  
200000 պակաս չպէտք է լինի: Թիֆլիս, երկ-  
րորդ հայկական քաղաքը իւր բնակիչների բազ-  
մութեամբ, Վրաստանի մասն է և ոչ—հայկա-  
կան հողի վրայ է շինուած: Նոյնպէս են և Ան-  
դըրկովկասի բազմաթիւ քաղաքները, որոնց  
բնակիչների մեծագոյն մասը Հայեր են: Առանց  
ազգային միութեան և առանց ազգային անկա-  
խութեան, դարերից հետեւ հայերը տարածուած  
են բոլոր արևելեան աշխարհում, սկսած Հե-  
րոդոտոսի ժամանակից, որ նրանց տեսել էր  
Բաբիլոնում:

Երբ որ նրանց երկիրը աւար զարձաւ աշխար-  
հականներին, լաւ համարեցին Հայերը «օտար  
լինել օտար երկրում» քան ստրուկ սեպհական  
հայրենիքում: » Եւ գաղթեցին բազմութեամբ:  
11 բդ դարից սկսած մտան նրանք Խուսաստան,  
Լեհաստան, Բուքովին, Գալիցիայ: Ներկա-  
յունս նրանց կհանդիպիս բոլոր շահաստան քա-  
ղաքներում՝ Լոնդոնից մինչև Մինչապուր և  
Շանխայ, և ամենուրեք նրանցից շատերը նշա-  
նաւոր վաճառականներ են: Շատ անգամ հա-  
յերին համեմատէլ են հրեաների հետ, որ նրանց

նման ցրուած են աշխարհի երեսին, և այս հա-  
մեմատութիւնը շատ կէտերում ուղիղ է: Հայ-  
կանները Խորայէլեաններից յետ չեն մնում  
ոչ կրօնական առկունութեամբ, ոչ խմբական  
համերաշխ ուղուվ, ոչ շահաղետ բնազդմամբ և  
ոչ վաճառական ճարպիկութեամբ. բայց հրեա-  
ների չափ բազդախնդիր չեն: Մինչդեռ աշխար-  
հի ծայրումն էլ կը հանդիպես մենմենակ հրեա-  
յին, որ առանց թուլանալու կեանքի պատե-  
րազմն է մկում, Հայն, ընդհակառակը, գաղ-  
թում է իւմբովին և ամբապինդ հասարակու-  
թեամբ: Բայց յայսմանէ Հայերի մեծամասու-  
թիւնը մնացել են իրանց ծննդավայրում և  
Հրեանների նման չեն զգւում հողագործութիւ-  
նից: Անդրկովկասի շատ գաւառներում գիւ-  
ղացիք ամբողջովին հայեր են: Միւս կողմից,  
ինչպէս Վարաբաղի մի քանի գիւղերում, բնա-  
կիչները գաղթում են ժամանակաւորապէս  
միայն, բանելով իրեւ քարտաշ կամ ատաղձա-  
գործ: Մինչդեռ աշխարհի և ոչ մի անկիւ-  
նում կտանեք հրեայ: Որ իւր ապրուստը այս  
ձեռվ ճարեր:

) N. von Seidlitz, Mittheilungen von Petermann,  
1880—Notes manuscrites.

Սակայն հաւանական է որ սեմական տարրը  
մեծ բաժին ունի հայ ժողովրդի կազմակերպու-  
թեան մէջ, որովհետեւ հրէական բազմաթիւ  
գաղթականութիւններ, մինչ իսկ, խմբովին  
տեղափոխութիւններ կատարուել են Պաղես-  
տինից դէպի Հայաստան։ Ընդհանրապէս  
առած «Հայկայ սերունդը» Արիաներ են, շատ  
մերձաւոր Պարսիկներին, բայց յընթացս չո՞ս  
հազար տարուայ՝ պատերազմ, աշխարհակա-  
լութիւն, աքսոր անդադար յեղափոխել և  
Արիաներին խառնել են դրացի ազգերի հետ։  
Հրէաները ստիպուեցան խըմբովին տեղափո-  
խուիլ Հայկական լեռները, գլխաւորապէս իրեւ  
Ասորի աշխարհակաների գերիներ։ Օքինակ՝  
Բագրատունի ցեղը, Հայաստանում և Վրաս-  
տանում թագաւորող ամենահամբաւառը հա-  
ըստութիւնը, իւր ծագումն յառաջ է բերում  
Հրէաներից և ճնողաբանութիւնն հասցնում է  
մինչև Դաւիթ, մարդարէ—թագաւորը։ Հա-  
յաստանի զանազան էկանոպէտէցից յայտնի է  
նաև Մամիկոնեան ցեղը, իբրև ազգի վրայ  
ահաղին ազգեցութիւն ունեցող, որ ձենաց,

2) Carl Ritter, Asien. vol. X.

այն է՝ Զինաստանի մի իշխան բերեց Սոմիսէթ  
և Հայաստան, Փըկչի թուականութեան Յ դ  
դարում; Ժամանակադիրների պատմութիւն-  
ները պարզ կերպով ապացուցանում են որ  
այս օտարականների մեծագոյն մասը, Նոր-  
մանկների և Վառէկների նման, պատե-  
րազմողներ էին և վարձուում էին կուելու՝  
անխափի թշնամու կամ բարեկամի համար և  
նոյնպէս իրանցի (Արիա) էին և հաւանականա-  
բար պատկանող այն ճիւղին, որից հի Օքսու-  
գետի աւագանի Տաճիկները<sup>2)</sup>։  
Բոլոր քերականները հայոց լեզուն գասում  
են արիական ընտանիքում։ Այդ լեզուի մեծա-  
գոյն նմանութիւնը զենդի հետ է՝ քերականա-  
կան կազմութեամբ ամբողջովին իրանական է,  
իսկ բառերով շատ նման է յոյն և սլաւոն լե-  
զուներին։ Թէև շատ կոշտ և բաղաձայներով  
լեցուն, հայ լեզուն բառերի և քերականական  
ձեւերի հարստութեամբ հաւասար է յունակա-  
նին, ունենալով կազմութեան նոյն ձկունու-

1) Saint-Martin, Mémoire sur l' Arménie.

2) Schweiger—Lerchenfeld, Armenien;—Fr. von Hell-  
wald; Central—Asien.

կական արձանագլուխեամբ բնեռածեւ գըե-  
րով: Հայկական ու ըիշ միշտակարաններ գըը-  
ռած են յոյն և պարսիկ գըերով և սկսած  
փրկչական 4-դ դարից, որ գըականութեան  
ամենածաղկեալ միջօցն է և երբ 300 դպրոց  
բացուած էր պատանիների համար, հայերէնը  
սեփական այբուբեն ունեցաւ, որ մինչեւ օրս եւ  
գործածութեան մէջ է: 14-դ դարում Անկ-  
թամուրի արշաւանքը յանկարծակի վերջ դըեց  
Հայաստանի զասական գըականութեան: Ներ-  
կայումն հայերը, մեծապէս նախանձախնդիր  
իրենց ընտանեաց, ջանք են գործ դնում իրենց  
որդիներին ուսման առաւելութիւնները մատա-  
կարաբելու և չկայ հասարակութիւն որ դպրոց  
չունենայ կամ չպահէ . . . : Գիտական և  
գունենայ շաբումը շատ զօրեղացել է և հա-  
յերը, համեմատած իրենց թուին, ամբողջ  
ուռւ կայսերութեան մէջ թերես առաջին  
ազգն են գիրք տակելում: Առաջ հայ գըակա-  
նութիւնը բաղկացած էր աստուածաբանական,  
պատմական, ընագանցական և քերականական  
գըքերից, իսկ այժմն նա սկսել է ձեռք զարնել  
ուղղոր ճիւղերին և հարատանում է օտար նշա-  
նաւոր գըքերի թարգմանութեամբ: Պատմում

թիւնը և բարդ բառեր ստեղծելու անսահման  
կարողութիւն, ձշմարիտ է թէև որ նոր հա-  
յերէնը, բաժանուած բազմաթիւ բարբառնե-  
րի, շատ բառեր, բացատրութիւններ առել է  
թուըք և վրացի լեզուներից, մանաւանդ Արաք-  
սի ստորին հովտում, ուր հայերը ըլջապա-  
տուած են թաթարներով) և խօսում են մի այ-  
լանդակ գաւառաբարբառ, որի մէջ երբեմն  
թուըքերէնը առելի շատ է քան հայերէնը, իսկ  
Եփուանում, կովկասեան շղթայից հարաւ, շատ  
հայ գիւղեր մուացել են հայերէնը: Այս տե-  
սակ փոփոխութիւնները անխուսափելի են  
ցեղի ցըուածութեան պատճառով: Բազմաթիւ  
հայեր շատունց հեռացած լինելով մայր հայ-  
քենիքից, ինչպէս իուքովին և Տրանսիլուանիա-  
յի հայերը, մոռացել են իրենց նախնեաց լե-  
զուն: Էջմիածնի նուիրական վանքում, ուր  
խօսում է դասական հայերէնի ամենամերձ  
բարբառը, հայ լեզուն է, մինչեւ այժմս էլ, զուտ  
իրանական բարբառ, միւս կողմից՝ հայ գըակա-  
նութիւնը երկու հազար տարուց առելի է որ  
օրից օր հարատանում է անընդհատ և ցոյց է  
տալիս լեզուի պատճութիւնը և նորա ծագումը:  
Վասնի երկրում ժայռերը ծածկուած են հայ-

Են ճանապարհորդները որ Անատոլիայի խորչքերում անգամ հանդիպում ես Փրանսագէտ Հայերի որ ծանօթ են Փրանսական գրականութեան։ 1854 թուին դեռ, Եւրոպացում և Ասիայում գոյութիւն ուներ առ նուազն 22 հայ տպարան։ Հայ լրագիրներ են հրատարակւում Թիֆլիզում, Կոստանդնուպոլսում և ուղիշ քաղաքներում<sup>1)</sup>։ Այլ և այլ միաբանութիւններ՝ Մոսկուայում, Վիեննայում, Պարիզում, Վենետիկում զբաղուած են Հին Լեզուի երկերի հրատարակութեամբ։ Հայերի օտար երկրներում ունեցած հաստատութիւններից նշանաւորագոյնն է Միփթար, որ է «սփոփիչ» աբեղայի, 1717-ին, Ս. Ղազարի կղզում Հիւնարկած վանքը, Վենետիկի և Խիդոյի միջև, գոն դողների անցած՝ ծովախորշի մուտքի ջրանցքի մօտ։ Այս վարդագոյն կղմինդրով շինուած և պարտէզներով շրջապատուած վանքում հրատարակւում են թանկագին յիշատակարաններ և գտնուում է արեւելեան հազուագիւտ ձեռաւգիրների մի մատենադարան։

1) Հայ լրագիրներ 1880-ին. Կոստանդնուպոլիս. Վիեննա. Էջմիածին. Մասկ. 1. Վենետիկ. 1.

Ահնեստկի Միփթարեանները, ինչպէս և Անդըլկովկասից և Թուրքիայից դուրմն ապրող հայերի մեծ մասը, — Խաչքալ Հայեր (պատպական) են, Կաթոլիկ Եկեղեցու դաւանութեան, միանգամայն պահած իրենց աւանդական ծէսերից մի քանիսը։ Բայց Հայ ազգի ամենամեծ մասը Եվրատի և Արաքսի հովիտներում, Հաւատաշը է մնացել Նախնական քրիստոնէական կրօնին։ Խակ այն քաղաքներում ուր երկու դաւանութեան պատկանողները կողք կողքի են ապրում, թշնամաբար են վարւում և կարելի եղածին չափ խոյս են տալիս մինչեւ անգամ վաճառականական յարաբերութեանց մէջ մըտնելոց։ Բուհն Հայկական և Կաթոլիկ Եկեղեցիների մէջ եղած տարբերութիւնը՝ Յիսուս—Քրիստոսի բնութեան, գծոխքի և քաւարանի, ժողովների հեղինակութեան, Եկեղեցական դասակարգութեան և զանազան ծիսակատարութեանց վրայօք է, բայց թէ այս և թէ այն դաւանութեանց մէջ էլ կան շատ, Հին կրօններից մնացած, սովորութիւնք։ Հայաստանի ժողովուրդը առաջինն է բոլոր ազգերից, որ խմբովին քրիստոնէութիւնն ընդունեց Դ. Պարիսկ սկզբում գրիգոր «Առաստարչի» ձեռամբ, բայց առիրիդոր «Առաստարչի» ձեռամբ,

տուածները փոխելով, նա չկորցրեց իւր աւանդութիւնները և հետ զհետէ միայն փոխեց իւր դաւանութիւնը, դարձը կատարուեց աստիճանաբար: Դեռ այժմս էլ, ինչպէս և Զրադաշտի ժամանակ, տօնում են աստուածային կրակը, Ամանորի տօնին Նորապսակների մի զյուղպնձէ ամանի մէջ այրում են բարերար երկրի տուած լաւագոյն պտուղները՝ ամեն տեսակ ծաղիկներ, քիստով հասկեր, դափնուճիւղեր, խաղողի տերեւալից որթեր: Կեանքի բոլոր նշանաւոր գործաւնութեանց ժամանակ նայում են արեգակին, կարծես նորշանից զօրութիւն իննդրելով: Նշանածները դէմքերը դարձնում են դէպի նա, նրան վկայ բռնելով իրենց սիրուն, հիւանդները նրանից առողջութիւն են իննդրում, մեռնողները իրենց վերջին շունչը նրան են աւանդում և մեռեալներին թաղում են դեռ նրա ճառագյութները չանհետացած: Մէծ տօներին հա-

յերը ցուլ և խոյ<sup>1</sup> են բերում եկեղեցի կամ նուիրական ծառերին, պսակում են նրանց ծաղիկներով և վառած մոմերով զարդարում, յետոյ և մորթում են այդ կենդանիներին, երգելով և ազօթելով: Այս ակներեւ՝ Միհր աստուծոյ զոհն է, որ հին կրօնքը ժառանդութիւն է ժողովել նորին:

Հայոց հոգեւոր գլուխը «Աթուղիկոսն» է, որի իշխանութիւնը կապուած է մի թանկագին մասունքի հետ, այն է նահատակ Գրիգորի աջը: Կաթուղիկոսն ընտրուամէ էջմիածնի բարձր պաշտօնեաներից, Եթէ որ իւր նախորդը կանխապէս մէկին չէ նշանակել: Կաթուղիկոսին հնագանդում են բոլոր (Քրիգորեան) լուսաւորչական դաւանութեան հայերը: Կաթուղիկոսն է կարգում առաջնորդ եպիսկոպոս, որ գըեթէ միշտ կուսակրօններից է լինում, իշխումէ Պոլսի և երուսաղէմի պատրիարքներին: Հէնց այս է պատճառը որ ուուս կառավարութիւնը շատ մեծ նշանակութիւն է տալիս Արարատ սրբազն սարի և էջմիածնի նուիրական վանքի տի-

1) Cirbied, Mémoire de la Société des antiquaires de France, tome II, 1820,—Bodenstedt, Die Völker des Kaukasus;—Moritz Wagner, Reise nach dem Ararat.

1) N. von Seidlitz, Mittheilungen von Petermann, 1880;—Notes manuscrites.

բապետութեանը։ Աշխարհիս այս կտորին տիւրելով, որ այնչափ հռչակաւոր է բոլոր արեւելքում՝ ուսւ վարչութիւնը ապահով է 2 միւլիոն ժողովրդեան հոգեոր Տիրոջ հաւատարմութեանը։

Յայտնի է արդէն թէ որքան մեծ բաժին են ունեցել հայերը Կոստանդնուպոլսում, իրենց 0 սմանլի տէրերի անուան տակ, կառավարութեան զրծելում։ Պետերբուրգում նոյնպէս սկսել են իրենց գերը խաղալ, ինչպէս երբեմն խորամանկ Խտաղացիները Ֆրանսայում։ Սնդրկովկասումն էլ, կամաց կամաց տիրանում են հոլին. իբրև կալուածատէր, մշտապէս դրացի թուրքերնը իւլում են։

Ֆիզիքական տեսակէտից նկատուած, Սնդրկովկասի հայերը շատ սակաւ են տարբերում վրացիներից։ Հայի գծադրութիւնն աւելի խոշոր է, գէմքը աւելի կլոր, վիզը կարճ և աւելի հաստ, շատերը պարարտանում են (Հաստափոր), թերևս նստակեաց կեանքի պատճառով։ Խիտ և սե մազերը ծածկում են նրանց գլուխը, կանանցը գրեթէ միշտ զարդարուած է լինում ծաղիկներով։ Հայերը մեծ մասամբ ունին սե, խոշոր և տարփալի աշ-

քեր, երեսում են միշտ քաղցրաբարից, գլեթէ մելամաղձում։ Ի բնէ թէեւ շատ հանդաբար բայց քաջութեամբ յետ են մզում իրենց վրաց յարձակուովներին, ինչպէս նրանք այդ ապացուցեցին 18 ըգ դարի սկզբում եօթնամեայ պատերազմի ժամանակ, անկախութեան համար, որ մղեցին նրանք ընդդէմ պարսիկների՝ Պարարագի լեռներում։ Այնուհետև բազմաթիւ տեղական ապստամբութեանց ժամանակ ընդդէմ թուրքերի։ Սովորական կեանքում ոչ մի հայ զինուած չէ, մինչդեռ վրացու գլեսարը, մանաւանդ Ուխնի աւազանում, ոտից գլուխ ատրճանակների և դաշոյնների մի ամբողջ զինարան է։ Այսուեղ հենց ակներեւ յայտնուում է երկու պազերի հակասական բնաւորութիւնը։ Եւ զարմանալին այն է, որ անզէնը, լծին հնագանողը, խաղաղասերը, այն է Հայը, աւելի կարողացել պահպանել իւր պատութիւնը։ Նա չունի ազնուականներ, ազատաբար ընտրումէ իւր գլխաւորներին և ամեն բար լինուածինց իւր գլխաւորներին և ամեն ժամանակ կարողացել է գերծ մնալ անտանելի ճամանակ կարողացել է զերծ մնալ անտանելի ճորտութիւնից (Հողային ստրկութիւն), որ ընդհակառակնեղել է և այսօր էլ ու-ըիշ անուան տակ է վրացիների մեծագոյն մասի մամն և տակ է վրացիների մեծագոյն մասի մամն

բաժինը։ Արաքսի հայերը, ընդհանրապէս շատ տղէտ թէեւ, բայց ունին բնական մեծ ընդունակութիւն և երբ ուսանելու յարմար գեպքի են համդիպում, սովորում են զարմանալի արագութեամբ։ Նրանք Ալաներին անգամ գերազանցում են իրենց օտար լեզուներ սովորելու հրաշալի դիւրութեամբ։

«Հայը խելքը զլիսումն ունի, իսկ վրացին աչքերում» : Գրականութեան նայելով, հայերը ուրիշ ազգերի մէջ հազուգիւտ պակասութիւնն ունին, այն է չափազանց ծանրաբարոյ են և ընդունում են ամեն բան չափազանց լրջօրէն։ Ուտանառի ներդաշնակութիւնը նրանց վրայ քիչ է ազդում<sup>1)</sup>, թէեւ ունեցել են լաւ բանառակցներ և այժմս էլ մեր օրերում, արժանաւոր զրոյներ երգել են ընութիւնը և հայրենիքը։ Սիրում են մասնաւորապէս ճառել աստուածաբանութեան, բնազանցութեան և քերականութեան վրայ, և գիտնական երկամբութիւններով նշանաւոր են եղել զրական պատմութեան մէջ։ Յոյն հայրերի մի քանի

գրուածքներ, որ կարծւում էին անդառնալի կորած, ինչպէս Եւսեբիոսի, Փիլոնի, Ոսկեբերանի գրուածքներից կտորներ, գտնուեցան հայկական հին թարգմանութեանց մէջ, ունենալի և Վիճնայի Մխիթարեանց ձեռքով։

Դրեթէ բոլոր երկրներում, ուր ապրումն հայերը, իրենց մեծ հոգածութեամբ հեռու են պահում ուրիշ ցեղի և լեզուի մարդկանցից։ Այս էլ կայ, որ վաճառականութեան շնորհիւ առանձին դասակարգ են կազմում։ Վրացի և թուրք գիւղերում՝ ու քաղաքներում՝ նրանք նոյնչափ հարկաւոր են, որչափ և ատուած ու արհամարհուած, ինչպէս հրեաները արևելեան Եւրոպայում։ Այսու ամենայնիւ, առանց մեծ չափազանցութեան կարելի է հայ գիւղացուն վերագրել Տուրքնը Փորի առածը։ «Հայերը աշխարհի ամենալաւ և տմենազնիւ ժողովուրդն են», կամ՝ Բայրոնի ասածը թէ՝ «Հայերի առաքինութիւնը իրենցն է, իսկ մոլութիւնը ուրիշներից առած»։ Այլազգիների ընկերակցութիւնից դուրս եղող հային շատ պէտքն է թէ ինչ կարծիքի են իւր մասին։ Հին սովո-

1) Bodenstedt, Die Völker des Kaukasus.

) Dularier, Revue des Deux Mondes, 15 avril 1854.

ըութեանց հաւատարիմ հայը, լինի երկրագործ  
թէ վաճառական, բոլորովին առանձնացած է  
իւր ընտանիքի մէջ: Նահապետական սովորու-  
թինները դեռ գործ են դրսում: Պապը հը-  
րամյումէ, որդիք, փեսաներ, թոռները լը-  
սում են, կին արմատը դատապարտուած է  
լուելու, գոնէ մինչև իւր առաջին ծննդաբե-  
րութիւնը, պարանոցը և դէմքի ստորին մասը  
կապումէ հաստ ծածկոցով, որով փակւումէ  
բերանը. ինչպէս համը ստիպուած է նշաննե-  
րով խօսելու: Երբ որ մայր գարձաւ իրաւունք է  
ստանում տան մէջ եղած կանանց հետ ցած  
ձայնով խօսելու, իսկ ազատութեամբ խօսելու  
համար պիտի սպասէ հասուն հասակին կամ  
ծերանալուն: Տան բոլոր հոգսերը նրա վերայ  
են ընկած մինչև տալերից մինի հարս գնալը <sup>1)</sup>:  
Հազիւ է պատահում որ օտարականը հրա-  
վիրուի հայի տուն: Կարելի է հազար գիւղ  
անցնել առանց կասկածելու անդամ թէ այդ  
տեղ մարդիկ են բնակւում: Տներն ու պար-  
տէզները շըջապատուած են բարձր պատով և  
աչքից պահուած: Նատ տիսուր և տգեղ են,

մանաւանդ կանաչից զուրկ դաշտերում,  
այդ կաւից շինած բարձր պատերի երկար  
պողոտաները, որոնց դիւզ անունն են  
տալիս:

Արաքսի ստորին ափերում բնակուող թա-  
թարները, ոչ լեզուով, ոչ կրօնքով և ոչ էլ սո-  
վորութեամբ տարբարումեն կուրի հովտում  
բնակուող թուրք ցեղերից: Բոշաներ էլ կան  
հայկական երկրում, իսկ ինչ վերաբերումէ  
հովիւներին, որոնք թափառումեն Արա-  
քսի պառեկներում, Արագածի կողերի և  
Սևանի ափերի վրայ, դըանք գրեթէ բոլորն  
էլ ժամանակաւոր գաղթականներ են, եկած  
Քուրդիստանից, Պարսկաստանից և Թուր-  
քիայից: Այս հովիւների մէջ կան և հա-  
րվաւոր նզիդներ, որոնք ինչպէս սատանայի  
երկրպատուներ, սարսափով են նկատուած  
դրացիներից: Հայկական Անդրկովկասում, մի-  
այն Զանգազուի գաւառի մէջ, Գեօք - չայից  
հարաւարեկելք, գտնեւում են հաստատա-  
հարաւարեկելք, գտնեւում են հաստատա-  
հարակ քըզեր: Բայց այս գաւառի 12—13 հա-  
զար քուրդն էլ հագնեւում են թաթարի նման,

(1) James Greag, Armenians, Koord and Turks.

Հետզհետէ խօսում են նրանց լեզուն և նրանց  
հետ ձուլուելու վրայ են<sup>1)</sup>:

Նկատողութիւն թարգմանչի կողմից:

Ա. Օտար ճանապարհորդները, սկսեալ Քսենոփոնից մինչեւ մեր օրերը, բազմաթիւ տեղեկութեանց հետ տուել են մեզ նաև շատ թիւը և սխալ փաստեր, ուստի և ամեն բան, ինչ որ գրուած է օտարից, պէտք չէ լնդունել հալածիւզի տեղ: Օրինակ՝ Ելիզէն հայոց թիւը 2 միլինից աւելի չէ կարծում և համարում է թէ՝ Թուրքիայում աւելի սակաւաթիւ են հայերը քան թէ Ռուսաստանում, որ ամբողջապէս հակասումէ մեր ունեցած տեղեկութիւններին:

Բ. Հայոց լեզուն համարում է կոշտ և բաշխայնէրք լեցուն<sup>2)</sup>: Եւ յիշաւի, եթէ լատինական այբուբենով գրենք մեր բառերը, կստանակ բաղահայնների կուտակութիւն, մեր մի

1) N. von Seidlitz, Mittheilungen von Petermann, 1880;—Notes Manuscrites.

2) Ըստ Դիւլորիէի:

Արաքսի վերին հովտի, որին մասամբ տիրել են Առանելիքը, գլխաւոր քաղաքն է շնորհալի

ձայնն ստանալու համար (օր. ձ, ձ, չ, ելն.) հարկաւոր է լինում նրանց 2—3 բաղաձայնը: Մեր նուրբ և փափուկ էն դառնում է կոշտ առ: (Օր. սէր, մեր, հայր, մայր ելն. բառերում): Եւ որ գլխաւորն է՝ մեր չ ձայնաւորը մոռացում է միշտ: Առնենք օրինակ Մկրտիչ բառը, և զրենք լատին տառերով—Mkrtch առանց նշանակութու չ տառը, ինչպէս զժբաղար անում են շատերը, և կունենանք մի բառում է վելլ բաղաձայն և մի ձայնաւոր միայն: Մինչդեռ չը կա Մկրտիչ բառում կայ 3 ձայնաւոր, մի փափուկ րէ և միայն չորս բաղաձայն: Հայ մանկավարժներին լաւ ծանօթ է, որ մեր մանուկները օտար լեզու սովորելիս շատ զժուարանում են մինչեւ անգամ՝ երկու բաղաձայն միասին կապել առանց ըթի: Ուռաց շոլք, ուսկաձայն բառերը արտասանում էն շոտով, ըսկազալ—փոխանակ հնչելու սաով, սկազալ:

Գ. Գալով հողային սորկութեան կամ ճորտութեան, որ մեզանում բնաւ չէ եղել և որի պատճառով թէ Ռէկլիւն և թէ ուրիշ

Վաղրզուաներ (Աաղբզման), թաղուած միգաֆեր  
ծառերի՝ ինձորենիների, տանձենիների սալու-

Եւրոպացիներ մեզ դովեստներ են շուայլում, պէտք է ասել, որ յիբաւի, մինչդեռ բոլոր  
Եւրոպայում և ամբողջ քըխտօնեայ աշխալու  
հում, գրեթէ մինչեւ մեր օրերը, դոյտթիւն  
ունէր այդ հակամարդկային և հակաքրիստո-  
նէական գրութիւնը, Հայաստան այդ երբէք  
մուտ չգործեց: Եւ արդար լինելու համար,  
պէտք է աւելացնել, որ ոչ ի շնորհս մեր քա-  
ջութեան, այլ շնորհիւ մահմետական տիրա-  
պետութեան: Մահմետական երկըներում եր-  
բէք չէ եղել հողային ստրկութիւն այն մորով,  
ինչպէս այդ կար վրաստանում, Ուուսաստա-  
նում են:

Դ. Զանց ենք առնում ուրիշ մանր մռնը  
ոչ անենի ու հնացած տեղեկութիւնները ուղ-  
ղել ինչպէս օր. կաթուղիկոսական ընտրու-  
թեան, կանանց լուակացութեան վերաբերեալ  
են, որ իւրաքանչիւր ընթեցող կարող է  
ինքնին նկատ': Հայ ժողովրդեան վերաբերեալ  
այս հատուածը արդէն մի անգամ տպուել է  
1877-ին Արարատում, եր. 405—413:

ընիների, կեսամիների, ծիրանիների, աղեղձի-  
ների, թթենիների, ընկույզենիների և փաթա-  
թուող որթի տակ: Աերին ուուսական Հա-  
յաստանի մայրաքաղաքը և միանգամայն նոր  
առնուած երկիրների ամենաբազմամարդը՝ Հըռ-  
չականը Կարսը, գտնելում է նմանապէս Արաք-  
սի աւազանում, մի երկրորդական օժանդակ  
գետի հովտում: Այս քաղաքին տիրելը շատ  
թանկ է նպտել: Արդէն 1828-ին առաջին ան-  
գամ ուղև Պատկեհչը տիրեց: Նրան: 1855-ին  
ներս մտաւ այդ քաղաքը Մուրաւիովը, երկա-  
րատեւ պաշարումից և անյաջող յարձակում-  
ներից յետոյ՝ սովածութեամբ յաղթելով պա-  
շարուածներին; 1877-ին վերջապէս Ուումները  
նորից ներս մտան այդտեղ, նրան վերջնակա-  
նապէս սլաւական կայսերութեան հետ միաց-  
նելու համար: Կարսը Ուուսների թուբքերի հետ  
ունեցած պատերազմներից առաջ էլ շատ յար-  
ձակումներ է տեսել: Իններորդ և տասներորդ  
դարերում մի հայկական թագաւորութեան մայ-  
րաքաղաք էր և աւերուեց Լանկթամուրից Սմու-  
րատ Գ-ից, Պարսիկներից: Եւր ամբութիւնների  
կարեւորութիւնը հէնց սկզբից ամեն աշխարհա-  
կալի ուշադրութիւն իւր վրայ եր գրաւում: Եւ  
3

իրօք, նա կեդրոնական դիբք ունի բռնած կուրի,  
ձորոխի, Արաքսի և Եփրատի վերին աւազանների  
միջև և իշխում է այս բոլոր գետերի միջում  
եղած լեռների անցքերին։ Տեղադրութիւնն էլ  
շատ յարմար է պաշտպանուելու, դիմադրու-  
թեան։ Քաղաքի մօտ Կարսի գետը, սեղմբ-  
ւելով ժայռերից, կազմում է կը կին հեղեղատու-  
որոնցից առաջինը կիսով չափ շըջափակում է  
քաղաքը, մինչդեռ երկրորդը բերդաքաղաքի  
շուրջն է տալիս։ Կարսը իւր սերազալտեայ  
քարաժայռի բարձրութիւնից, շինուած հրա-  
հոսանքի խոշոր վեմերով կարող եր հին ժա-  
մանակները դիմադրել յաջնորութեամբ սակա-  
ւաթիւն պաշարողներին, բայց թնդանօթների  
դիմուց յետոյ հարկ եղաւ շըջակայքի բարձ-  
րութիւններն էլ ամրացնել և 1877—78 ի  
պատերազմի ժամանակ, շըջապատից անջա-  
տուած տասն և մեկ ամրութիւնները մի պար-  
փակուած ճամբարի հետ միասին 18 քիլոմետր  
երկայնութեամբ պաշտպանողական շըջագիծ  
էին կազմում։ Այս ամրոցներն ու բազալտեան  
և վանաքարի (օբսիդիան) քարաժայռերն են  
միայն՝ սեւ տիսուր, հովանազուրկ, լերկ դա-  
հավէճներով շըջապատուած քաղաքի միակ

Հետաքրքրական բանը՝ Կարսը թէկ շինուած է  
1850 մետր բարձրութեան վրայ, բայց յա-  
ճախուած վաճառատեղի է։  
Մի կառագնաց ճանապարհ, որ իջնում է  
Կարս գետի հովտով դէպի արեւելք և գնում  
հասնում է Արփաշայի հովիտը՝ միացնում է  
Կարսը Ալեքսանդրապոլին, որ հին թուրքական  
ամրութիւն է, ոռևսական բերդով, և որի վըայ  
չեն դադարել աշխատելուց 1837 թուակա-  
նից ի վեր։ Այդ թուին այնտեղ գտնեւում էր  
լրկ Գիւմրի գիւղը, բնակուած փախստական  
Հայերով։ Ալեքսանդրապոլը շինուած է Արփա-  
շայի աջափակութիւնուում, մի դաշտում։ որին  
իշխումէ Արագածի զանգուածը, 400 մետր  
աւելի ցած իւրնախլին ախոյեանից՝ Կարսից, և  
շըջապատուած է աւելի լաւ մշակուած ար-  
տերով, որոնց Արփաշայը կամ «Գարեգիտը»,  
առատութեամբ մատակարարում է ոռոգման  
անհրաժեշտ ջուրը։ Ալեքսանդրապոլը Անիի  
ժառանգն է, Անիի, որ Հայաստանի Բագրա-  
տունիների թագաւորանիստն էր տասներորդ Ա-  
տամնեմեկերորդ դարում։ և որն աւելեցին  
Ալի՝ Արաւանի Սելջուքները և յետոյ՝ Բա-  
թուրիանի Մոնղոլները։ 1319-ին մի երկու-

շարժ քաղաքի մնացածն էլ կործանեց և  
բնակիչները ցըուեցան ամբողջ կովկասում,  
Խըմ և մինչև Աւհաստան։ Աւերակները  
ծածկում են ամբողջովին մի եռանկիւնի սա-  
րաւանդ, որին իշխումէ Արփաչայի աջ ափը,  
և որից արևմտեան բարձրաւանդակը բաժան-  
ուած է մի ցամաքած ձորով, որի ափափաները  
ծակծակուուած են քարանձաւներով և գե-  
րեզմաններով։ Հիւսիս արևելքում հզօր և կրկ-  
նակի պարիսպը պաշտպանում էր դքաղաքը։  
Միակ մատչելի կողմից, իսկ քարաժայուի ամե-  
նաբարձր ծայրում կանգնած էր մի միջնա-  
բերդ։ Եկեղեցիների, մզկիթների, պալատների  
մնացորդներ, միանգամայն բիւզանդական և  
մաւրիտանական ռճով շինուած, ցըիւ են ընկած  
քարաժայուի երեսին և գրեթէ իւրաքանչիւր  
փլատակ կրում է հայկական արձանագրու-  
թիւն։ Այսուղ երևում են նաև տամկանկար-  
ների (Փրէսք) հետքեր, իսկ քարանձաւներում՝  
ժայռի վրայ տաշուած կոպիտ քանդակներ։ Հայ-  
կական տարեգիրների՝ երևի շափազանցացրած,  
պատմութիւններին նայած՝ Անին ունեցած պէտք  
է լինի 100,000ից ոչ պակաս բնակիչ և հազար  
եկեղեցի բարձրացնում էին իրենց գլբէթները

քաղաքի միւս շինութիւններից վերև<sup>1)</sup>։  
Անիից հարաւ արևելք և արդէն երկու  
հսկայական լեռները՝ Արագածն ու Արարատը,  
միմեանցից անջատող ընդարձակ դաշտում  
աւերակների մի ուրիշ շեղջակոյտ՝ Թալիշը,  
թւում է որ եղած պէտքէ լինի հայկական  
թագաւորութեան մայրաքաղաք, ուր այժմն  
մի նոր փոքրիկ գիւղ բուն է գլուխ նրա բարձր  
պարիսպների, աշտարակների, պալատների  
մէջ։ Ստորին Ախուրեանը աւերակների երկիրէ։  
Այս գետից դէպի արևմուտք դեռ մինչև այսօր  
էլ երևում են Բագարանիւ այն է՝ «Աստուած-  
ների ժողովարանի»<sup>2)</sup> մնացորդները։ Փոքր ինչ  
դէպի հարաւ, երկու ուրիշ մայրաքաղաք,  
շինուած յաջորդաբար նոյն երուանդ Բ. թա-  
գաւորից<sup>3)</sup> երուանդաշտն ու Երուանդակելուր,  
որ ասում էն ոնեցած պէտք է լինի 30000 տուն  
Հըկայ և 20000 տուն Հայ բնակիչ, Կանգնած էին  
հնումը Արաքսի և Ախուրեանի գետախառնուր-

1) Hamilton, Asia Minor;—Carl Ritter, Asien, X;  
Dubois de Montpréoux, etc.

2) Carl Ritter.

3) Saint—Martin, Mémoires sur l' Armenia.

դից հիւսիսում, առաջինը արկելեան և երկրորդը արկեմուան ափին: Մի ուրիշ մայրաքաղաք՝ Արմավիրը, այս թափառող մայրաքաղաք-ներով տէրութեան մէջ, « նոյնպէս շինուածէ (վերանորոգուած) Երուանդ Ի—ից, վերոյիշեալ երկու քաղաքից առաջ և թողել է աննշան աւերակներ՝ մի բլրի գագաթին, որ բարձրացած է դաշտավայրում Սև—ջրի (Կարա—սու) ջրանցքի ափին, Արաքսից մօտիկ: Վերջապէս, գետից հարաւ, հրահոսանքի մի դարառավիկի վրայ, որ անջատուած է շրջակայ բլուրներից խորին պատառուածքներով, բարձրանումէ « Սև բերդը », Կարա—կալան կամ Կարա—կալէն, որը Դիւքուա գը Մոնպէրէօն կարծում է, սիսալմամբ, որ նախկին Տիգրանակերտը լինի: Նատ սակաւ հին ամրոցներ աշխարհի երեսին կարող են համեմատուիլ վայրենի նկարչականութեամբ այս փոփոխակի շերտերով՝ կարմիր պորփիրից և աւ լաւայից (հրահոսանք) շինուած աշտարակներին, որ կանգնած են անդնդախոր վհերի գլխին,

1) Այս աւերակներում գտնուել է բեռնագիր արձանագրութիւն, որ վկայում է Արմաւրի մեծ չնութեանը: Ծ.թ.

որոնց յատակում մոնջում են ջրերը: Հայկական աւանդութիւնն ասում է, որ այս մօտերքումն էր Յովբը, նատած աղբանոցի վրայ, խօսակցումն իւր երեք առակախոս բարեկամների հետու ուժիան: Հայերի այժմեան Հոռովմբ՝ Եջմիածինը և Երևանից արևմուտք՝ շինուածէ մօտաւորապէս դաշտավայրի կեդրուումը և մի մեծ քաղաք չէ: Վանքի կողքին խմբուածնեն և աղարշապատ փոքրիկ քաղաքի տները, իսկ ինքը Եջմիածինը մի լոդարձակ մենաստան է կատի պարիսպներով, որոնց մէջ տեղը բարձրանում է եկեղեցին, բըրդագած գմբէթով և կողմնական զանգակատներով: Քառասնիւնի պարիսպը, որի գորշագոյն պատերը չունին մինչև անգամ աշտարակներ, ծածկումն շինութիւնների պտորին մասը: Եջմիածնում մի միայն գեղեցիկը՝ նըա մաքուր ջրեւրնեն, ծաղիկները երարտուու մրգաբեր ծառների անտառակը, որ այն կանաչ պարտէզի մնացորդն է, որ տեսան այդտեղ տասնեօթե-

— 1) Եջմիածնի ջրերը սաստիկ պղտորւում են, անցնելով բաց առուներով և ցանքսերի միջով: Դեռ մինչև այսօր չեն շինուած յարմարաւոր ագուզաներ այդ մեծ չարիքի առաջն առնելու համար: Ծ.թ.

բորդ գարում Շարդէնը, Տաւերնիէն, Տուրնը Փողը, Էջմիածնի մենաստանը, որի անունը նշանակում է՝ «Միածին Որդին» իջաւ » այսուամենայնիւ հայկական աշխարհի մայրաքաղաքն է: Այդ տեղումն էր որ, ըստ աւանդութեան, «Միածին Որդին» երևեցաւ արեի ճառագայթի մէջ Քրիզոր Առևառառչին և կայծակի մի հարուածով գետինը մոտցրեց կոտպաշտութեան աստուածներին: Եւ իսկապէս Էջմիածինը դրան ըլուում է՝ Հայկականի հին հզօր քաղաքներից մինի տեղում: Այդտեղ էր կանգնած Արտիմեդ քաղաքը, այն է «Արտեմիսի» կամ Անահիտի «Հայկական Վենուսի» քաղաքը, ուր ամեն կողմից գիտում էին Հաւաստացեալները, աստուածուհուն երկրպագելու: Նոյնպէս այդտեղից մօտիկ, Արմաւիր ամրոցի ստորոտում, գնում էին սրբազն կաղնիներից <sup>2)</sup> իմանալու ապագան: Առաջ քուրմերը գուրմերը գուրմերը Դողմայի գուրմերի:

1) Carl Ritter, Asien, tome X; — Saint-Martin, Mémoire sur l' Arménie; Dubois de Montpéraux, Voyage autour du Caucase.

2) Աչ թէ կաղնի այլ սօսի: «Արամանեակի սօսիների մասին տես Խորենացի գիրը ա: գլ. 20 թ. թ.:

Նման, ծառելի տերևների սոսափինում լսում էին հողմերի մըմնւնջը և գուշակում ապագան: Տաճարի աստուածները փոխաւցան, բայց առնուազն քամն և Հինդդար շարունակ դաշտավայրի այս կետը սուրբ մեաց: Վանքի մատենադարները, որ և ամելի հարուստ է Վենետիկի Միաթեարեաններից մատինադարնիցը, ունի 635 հինգեւուագիր, իսկ տպարանը, որ բուն Հայաստանում եղածներից ամենահինն է, հրատարակում է մի ամսագիր և մի քանի ժողովը՝ զական երկեր հայերէն լեզուով: Էջմիածնի վանքի մի զանգակը կրում է իւր վըայ թիբետական պրէանագրութիւն խորհրդաւոր բառերով <sup>2)</sup>, որ բովանդակում են կեանքն և մահը, բոլոր յաւիտենական ճշմարտութիւնները: Այսպիսով ուրեմն Հայաստանը, անձանօթա ժամանակներում յարաբերութեան մէջ է եղել բուդդայական աշխարհի հետ <sup>3)</sup>:

ովզքը մարտնչուած

1) Moritz Wagner.

2) Այժմն չեռագիրների թիւն հասնում է 3000—ի թ. թ.

3) Օմ Մանի Պահ. Օմ Մանի Պադմի Հում:

4) Dubois de Montpéraux, Voyage autour du Caucase.

Երևանը՝ ուստական Հայաստանի վարչութեան գլխաւորքագրը և Արաքսի աւազանի երկրորդը, — որովհետև Ալեքսանդրապոլը անց է սրանից քնակիշների բազմութեամբ, — շինուած է Արաքսի հռածանախկին Ծային ջրաւազանի հիւսիս՝ արևելեան անկիւնում, Զանգի գետի որ տրոհում է ոստդման հազարաւորապես ների, երկու ափին; Երևանը բնակուած է մեծ մասամբ Հայերով, մինչդեռ պարսկական տիրապետող թեան ժամանակ Նրա քնակիշների մեծագոյն մասը Թաթարներ էին; Երևանը գտնուելով այն վերին հովտի մուտքում, որ Գեօլշայի բարձրաւանդակով տանում է գեղի Թիֆլիս և դեպի Առևի աւազանը, պէտք է պտանար առեւտրական և ռազմագիտական մեծ կարևորութիւն; Նրա քերդը, որ կագնած է բազալտեան սիւնաշարերից բաղկացած մի զանդուածի վրայ, յիշեցնում է բազմաթիւ պատերազմական անցքեր:

Երևանը՝ գրեթէ ամբողջապէս շինուած պարսկական ոճով, ունի մի քանի նկարչական շինուածքներ՝ մի գեղեցիկ մզկիթ արարանկարներով զարդարուած և հիանալի թեղիներով հովանաւորուած; Նշանաւոր են այստեղի պար-

տէզներն սիւն ծառատանները, որոնց մէջ վազում են մշտահոս ջրերը: Աքանչնի է հարաւարելու մուտքում բարձրացող երկճիղ Արարատի տեսարանը: Բայց ոռոգուած հողերի սահմանից դուրս սկսուկմ է լերկ և գորշ գաշտը: Յորի կլիման, իւր ցըտի և շոգի յանկարծական փոփոխութիւններով, փոշին և տենդերը շատումց դադարկած կլինէին քաղաքը, և թէ սա թուրքիայի և պարսկաստանի սահմանագծի վրայ առաջնակարգ կարևորութիւն ունեցող դիրք չունենար, և եթէ այդիներն ու շրջակայքի աղաքարի հանքերը չմատակարարեին նրան վաճառականութեան, ահագին նիւթ<sup>1</sup>: Ամառը բոլոր ուստ պաշտօնեանները փախչում ապանտանում են որ և է բարձր հովտում: Գեօլշայի բարձրաւանդակի վրայ գտնուող Մալոկանների գաղութ Ակմոնովկան և Թիֆլիս Երևաննեան ճանապարհի ամենաբարձր լեռնացքի մօտ գտնուող Դիլիջանը, որտեղից բաժանւում է Ալեքսանդրապոլի ճանապարհը, առողջապահական կայաններից և նշանաւոր-

1) 1876—ին Երևանի գաւառում աղի արգիւսաքերութիւնը — 12890 տակառաշատ:

ներն են ։ թէ Արաքսի և թէ Կուրի հովտի բնակիչների համար ։ Բարձրաւանդակի ամենամեծ գիւղաքաղաքը, որ Սևանի լճից 6 քիլոմետր հարաւ է գտնվում, Գաւառնէ, որ պաշտօնապէս կոչում է Նոր Բայազէտ։ Հայաստանի այս գաւառի պղնձահանքերը այլ եւստիւ մշակում։

Երեանից դէպի արեելք մի հովտ է բացւում հրաբիսային ժայռերի լեռնազանդուածի մէջ և պարունակում է Հայաստանի բազմաթիւ մայրաքաղաքներից մէկի՝ աւերակները։ Բաշ Գառնի կամ աւելի ճիշտ՝ Գառնին, որ Հայերի ասելով չորս հազար տարուց աւելի է որ շինուած է, ունի մի յունական ոճով տաճարի փլատակներ, որ թերեւ նուիրուած էր Հայկական Աստղիկին և յայտնի է այժմա՞ն Տրդաւտի թախտ։ Բաշ Գառնիում մինչեւ այսօր էլ մնացել են պալատների, ամրոցների աւերակներ,

1) Աչ թէ Սևմենովկան այլ Դարաշիչակ Շաղկաձորը։ Ծ. Թ.

2) Խորենացին ասումէ՝ որ Տրդաւտը շինեց այդ տաճարը կամ պալատը իւր Խորովիդուխտքրջ համար։ Ծ. Թ.

բայց բազալտեան բնական սինաշարերը, ահա գին պատառուածները, ուր թափւում է հեղեղատը, խանձուած քարաժայուերի զառիվայը և գոյնզգոյն՝ կապոյտ, կանաչ, կարմիր պատնէշները, որ բոլորը միասին վկայ են նախկին արտավիժութեանց, դեռ աւելի ևս նշանաւոր են, քան թէ մարդու ձեռակերտների բեկորները։

Այս խորդուբորդ բնադաւառի ամենավայրի զիբքերից մէկում գտնուում է Գեղարդ կամ Այրիվանք, այն է՝ «Դժոխքի վանք» մենաստանը\* որի կէս մասը փորուած է հրահոսանքի (լաւայ) և փխրաքարի (ուն) մէջ։

Այս դաշտի միջում, ուր Գառնու հեղեղատի ջրերը՝ Արաքսը թափուելուց առաջ, բաժանուում են ուռոգման ջրանցքների, կանգնած էր Արտաշատը (Արտաքսատէս), որ Անտիոքոսի զօրավար Արտաքսիասը (Արտաշէս) շինել տուեց Հաննիբալի ծրագրի համաձայն և որը Հայաստանի մայրաքաղաք դարձաւ մինչեւ այն օրը, երբ

(\*). Այրի վանք նշանակում է՝ այրի քարանձաւի վանք։ Ծ. Թ.

1) Ernest Desjardins; Notes manuscrites.

Հողվմեացի Կորբուլոնը աւերեց Նըրան, Ներոնի  
թագաւորութեան օրով։ Արտաշատին յաջոր-  
դեց Ներոնիա քաղաքը, որ այսպէս կոչուեց իւր  
հիմնադիր Տրդատից, ի պատիւ «Կեսարի», բայց  
այս էլ մայրաքաղաք դարձաւ միայն առաջին  
դարի վերջում, որպէս զի ի վերջոյ գահագուրկ  
լինի յօդուտ Վաղարշապատի։ Երբ որ Ներո-  
նիան աւերուեց, 370 թուին, Շապուհ Բ. ի. բա-  
նակից, հաշուում էր նա իւր պատերի մէջ  
200000 բնակչից աւելի Հայ և Հրէայ, որ բոլորն  
էլ սրակուոր եղան կամ գերի տարուեցան։

Այժմեան Արտաշատ գիւղը Նախկին Արտաշատի բերդում է . իսկ միւս տեղերում փոռածէ վաշտառողջ դաշտավայրը , իւր ցրիւ ընկած թշուառ գիւղերով ; Արաքսը , որ միժամանակ հոսում էր քաղաքի պարսպի տակովը , այժմն տեղափոխուել է և 10 քիլոմետր աւելի հարաւիցն է հոսում , Արարատ սարը կըող պատուանդանի առաջին բարձուների մօտով : Նախիջեան կամ Նախճաւանը Արարատից գէպի հարաւ—արեելք փոռած դաւառի կեդրոնատեղին է և հայերի ասելով գեռ Եջմիածնից

\*) Հին անունն է Նախճաւան և ոչ Նախիճեռ-  
ևան։ Ծ. Թ. Հայոց պատմության վկանական» (1)

<sup>4</sup>) Dubois de Montpereux, Voyage autour du Caucase.

սրբագան քաղաքներից մէկն է, բայց բնակուած է միծ մասամբ թաթարներով, որոնք զբաղւում են պարտիզանութեամբ և խաղողի մշակութեամբ։ Այս քաղաքը շատ նուազեց պարսկական տիրապետութիւնից դուրս գալուց յետոյ, առաջ քառասուն հազար բնակիչ խլունուած էին նրա պատերի մէջ։ Մերձակայց արշիւրների առատ ջրերը, Արաքսից հանած ջրեանցքները և Դարաբաղի սարերից իջնող վտակները ուսուգում են հարիւրաւոր այգիներ և մըրգաստաններ։ Մերձակայցի ժայռոտ հանդիպագոտիներում, քաղաքից հիւսիս-արևմուտք, ամենահին ժամանակներից սկսած շահագործում են աղաքարի հանքերը՝ որոնք Կողբի հանքերի նման ունին փոփոխակի կաւի ծալքեր, և պարունակում են նմանապէս քարի դործիքներ նախկին հանքագործներից մնացած։ Նախքեանի երկանաքարերը, որ կտրւում են քաղմերանդ աւագաքար ժայռից, շատ գնահատուած են ամբողջ Հայաստանում։

Նախիջևանի մաքսատունը պարսկական ահա-

1) Նախիջևանի աղահանքերի միջին արդինաքերութիւնը 4500 տակառաչափ. (Գուստավ Ռադգէ)։

դին առևտրի անցատեղին է, Սահմանապահ կայանը, քաղաքի հարաւարեւելքում, Զուղան (Զուլֆա) է, որ շինուած է Արաքսի ափին մի հին, պարսկական կարուսնորսահի հանդէպ, որի ետեւում բարձրանում են աւազաքարի կարմիր արիւնագոյն գահավէժներ, որոնց կատարին ցցուած մնացել են մի հին բերդի պատերը։ Տանեօթերորդ դարի սկզբին Զուղան քառասուն հազար բնակիչ ունեցող քաղաք էր, այնահարուստ ամբողջ Հայաստանում իւր արհեստներով և վաճառականութեամբ։ Եայց Եահ-Արքաս «մեծի» մտաղը ութիւնն էր անապատ դարձնել, այն երկիրը, որ բաժանում է Պարսկաստանը նախիջևանից և այն ժամանակը Թուրքերի ձեռքն եղած բոլոր հողերից։ Զուղայի բնակիչները հրաման ստացան իմբրովին գաղթել, նրանք որ չէին շտապում ձգուեցին գետը, իսկ քաղաքը կը ակի մատնուեց հալածականների ազքի

1) Տարեկան միջին արտածութիւնը նախիջևանից Պարսկաստան։ 1863—ից մինչև 1872—ը —

280. 000 բուրլու։

Ներածութիւնը Պարսկաստանից նախիջևան —

1100000 բուրլու։

առջեւ։ Այդ հայելն էին որ հաստատեցին Նոր-  
ջուղայի գաղութը, Սպահանի մօտ։ Հին ջու-  
ղայից մնացել են միմիայն աննշան հետքեր և  
հոյակապ կամուրջի մնացորդները, որ հաստա-  
տուած էր չորս անկիւնային աշտարակների վրայ  
և որի սիւներին էր զարնւում «զայբացած Ա-  
րաքը»<sup>1)</sup>։ Ջուղայի ամենահետաքրքրական  
յիշատակարաններն են նրա գերեզմանատան  
շիթիմները, որ ձգուած են Արաքսի ափով մէկ ու  
կես քիլոմետրից աւելի երկայնութեամբ։ Դերեզ-  
մանքարերիքանդակներից մի քանիսը ամենա-  
նուրբ բանուածք են։ 1854—ին, Ջուղայի բնա-  
կիներից մնացել էին ընդամենը տամն ընտանիք,  
որ բնակւում էին մի աւելակ կարուանսրահում<sup>2)</sup>։  
Սարսափելի կարիճներ են թագնուած գերեզ-  
մանատան սալերի տակ։

Օրդուպատը գտնառմ է Արաքսի վրայ, Ջու-  
ղայից ներքեւ, այն տեղին մօտ, ուր գետը միտ-  
նումէ Մեղրու կիրճը և իւր՝ Ղարաբաղի լեռների  
շուրջը կազմած աղեղիամենահարաւային կէտինէ  
հասնում։ Օրդուպատը Հայաստանի ամենադու-

1) Pontem Indiguatus Araxes, Ենէական VIII.

2) Dubois de Montpréoux, Ouvrage cité.

րեկան քաղաքն է։ Եօթանասուն աղբեկը թըղ-  
խում են այդտեղ, և իրենց յատակ ջրերը խառ-  
նում են ուոգման առուների ջրերին, որով  
փարթամանում է շրջակայքի պարտէզների բու-  
սականութիւնը։ Արաքսի աւազանի և ոչ մի մա-  
սում ծառերը այնքան բարձր, այնքան փար-  
թամ չեն, որչափ այստեղ։ Քաղաքի մի հրա-  
պարակի վրայ, մի կիսամեռ, գլխակոտոր սօսու-  
բունը 13 մետրից աւելի շրջապատ ունի։ Օր-  
դուպատից դուրս, շրջակայքի մրգատաններում  
և բլուների լանջերին ցըիւեն ընկած ամարա-  
նոցներ։ Սի քանի քիլոմետր դէպի հիւսիւարե-  
մուտք «Ուկու հովտում»։ Ագուլիս գիւղը, կադ-  
մուած խումբ խումբ տներից դինակուած է բագ-  
մաթիւ հայ վաճառականներով, որ զբաղուած  
են զիսաւորապէտ ապրեշումի վաճառականու-  
թեամբ և մեծ տնկուով փող ենափոխ տալիս  
Երևանի և Թիֆլիսի առևտրականներին։ Ագու-  
լիսը, որ վերջին դարում նշանաւոր քաղաք էր,  
աւերուեց նադիր—շահից, որ կարգով քան-  
դեց բոլոր տները, մինչև որ վաճառական-  
ներն համաձայնեցան պահանջուած փղկանքը  
տալու։ Շրջակայ եռների պղնձի հանքերը

1) Koch, Wanderungen im Oriente.

այժմ տնտեսական մեծ կարևորութիւն չունին.  
1877-ին նրանք տուել են միայն 117 տակա-  
ռաջափ զուտ պղինձ : Այս մասնաւում ունի առաջ-  
բարգուշատի և Հաքարի գետերի կրկնա աւա-  
զանը, որ բացուած է 0 ըդուպատի և Շուշուայ-  
լեռների միջև և վարչականապէս կազմում է  
Զանգազոսի գաւառը, իսկապէս ասած, քաղաք-  
ներ չունի, այլ բազմաթիւ կարեոր գիւղաքա-  
ղաքներ, որ բնակուած են Հայերով, Թաթար-  
ներով և Քուրդերով : Ա. մենաբազմարդն է  
Խնձորեսկը (Խինզիրակ), իսկ վարչական կենդ-  
րուատեղին է Գերուսին — Հայերի Գորիսը կամ  
«Սիւների գիւղը», որ այս անունն ստացել է այն  
կոթողներից, որ փորել են ջրերը փիրաքարից  
զառի վայր դարադափում, որի վրայ շինուած է  
գիւղաքարաքը : Տափարակ կտուրներով տնակ-  
ները, իբրև աստիճաններ են ծառայում մէկը  
միւսին, վերից վայր մի տարօրինակ սանտուի  
կազմելով, որի տակը ծածկուած են բնակիչ-  
ները, և նրաց ստորերկրեայ փողոցները:  
Շատ ուրիշ բնակարաններ, մառաններ, ախոռ-  
ներ փորուած են դարադափի հրաբխային մոխ-  
րի մէջ, որոնց մուտքերը պաշտպանուած են  
մացառապատ փլուածքներով : Ներքեւում, հե-

ղեղատի ափը բոնած են լայնատարած ուղղնե-  
րով թեղիներ : Այժմ եան Գորիս գիւղաքարաքը  
նոր ծագումն ունի, իսկ նախկին գիւղի տեղում  
փոռած են մշակուած դաշտերը, 300 մետր  
աւելի բարձրանում, այն է՝ 1300 մետր բարձր  
ծովի մակերեսոյթից : Ամառը, երբ որ շրջակայ-  
գաւառների յիսուն հազար թափառական հո-  
վիւները քշում են իրենց հօտերը դեպի Զան-  
գանի հօթնեակի համար դառնում է վաճառա-  
քանի հօթնեակի համար դառնում է վաճառ-  
շահ քաղաք և ամբոխը խոնուում է տնակների-  
ահագին ամիկիթէատրոնի աստիճանների վրայ :

---

Արաքսի աւազանի՝ 3000-ից աւելի բնակիչ  
ունեցող քաղաքները (1880-ին).  
ԿԱՐՑ

Կարս	10000 բն.	Ճանով միասին 12500 բն.
Կաղզուան	5000 "	Նախիջևան . 6900 "
Երեւան	11240 ն.	Նորբայազիս 5350 "
Ալեքսանդրապոլ	20450 "	Օրդուպատ 3500 "
Երևան	Երկու արուար	

Արաքսի աւազանի քաղաքների բնակիչների մօտա-

) N. Von Seidlitz, Mittheilungen von Petermanu.

լորեկան թիւը 1890-ին (Կավազ. կալենդարъ, 1890)

Կարս	7000	Նախիջևան	7000
Կաղզուան	4000	Նոր— Բայազիտ	5000
Երեւանի նահանգ		Օրդուպատ	3500
Ալեքսանդրապոլ	23000	Խնձորեսկ	3250
Երևան	15000	Վաղարշապատ	3000
Յանձնութ. Թուրքահայաստանի մի քանի կէտերի հեռաւորութիւնը անդրկավասեան սահմանից՝ ուու- սական վերստերով. (Կավказ. կալենդ. 1890). ·			
Սարիղամիշից մինչև Հասան—դալայ	99%	Վ.	
Հասանդալայից մինչև Երզրում	37	"	
Սարիղամիշից մինչև Երզրում	136%	"	
Սարիղամիշից մինչև Բաբերդ	251	"	
Սարիղամիշից մինչև Բաղեշ, Հասաղալայով	321	"	
Սարիղամիշից մինչև Խնուս	177%	"	
« Խնուսով մինչև Մուշ	277	"	
« Բաբերդով մինչև Սոււազ	723%	"	
« " " Թողաթ	613%	"	
« " " Շարին-Կարա-Հիսար	414	"	
« Երզրումով մինչև Մամախաթուն	157%	"	
« Մամախաթունով մինչև Երզեկան	330%	"	
Իգդիրից մինչև Բայազիտ	51	"	
Իգտիրից մինչև Վան	229	"	
Աղոլից մինչև Մելազկերտ	184	"	

**ՈՒՐՄԻԾ ԼԻՇ**  
ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԷՒՄԱՆ, ՈՒՐՄԻԾ ՄՈՎԱԿԵ  
ԵՒ ՍՈՂՈՄՈՆԻ ԳԱՀԸ.  
Իրանական բարձրանդական կամաց հանդ-  
չող օդը չափազանց չոր է: Թէ հասարակածից  
և թէ բեներից փշող հողմերը, որ գալիս անց-  
նում են այս բարձրանդականերով, միանման  
ցամաքեցուցիչ են: Դովտի կամ լուտի անա-  
պատում՝ Խանիկովը նկատեց որ օդի համեմա-  
տական խոնաւութիւնը միմիայն 11, 2 առ  
հարիւր է: Այս չորութեան ամենաբարձր աս-  
տիճանն է, որ մինչև օրս նկատուած է եղել  
երկրագնդիս վրայ: Քիրմանում, մշակութեանց  
մէջ, խոնաւութիւնը փոփոխւումէ 16-ից մինչև  
20 հարիւրերորդ: Ամառն և աշունքը օդն այն-  
պէս չոր է, մինչև անգամ արեւմտեան Պարս-  
կաստանում, որ մետաղեայ առարկաները,  
թողուած դուրսը հողի վրայ գիշերուայ ցըտին,  
ամբողջ ամիսներ փայլուն են մնում և չեն  
ժանգոտում:

Գիշերային ճանապարհորդութեան ժամանակ երեմն մարդ տեսնում է թէ ինչպէս ձիւ երը շարժելով ագիները՝ կայծերի խուզերեն արձակում։ Օր և գիշերուայ մէջ նկատուած եղանակի չափազանց տարբերութիւնը պէտք է վերազըել մթնոլորտի մէջ շողիների պակասութեան։ Յուլիս ամսում տէմնուել է ջերմաչափը միտիայն 19 աստիճան ցոյց տալիս արշալոյսը ծագելուց առաջ, իսկ առաւօտեան ժամը ութին արեկի տակ բարձրացել է 62 աստիճանի։ Պատահում է որ օդը մթնում է «չորթուխբով», որից ոչ ցող է ինսում և ոչ փոշի։ Փոշու փոքրիկ մըրիկներ դրեթէ ամեն օր են պատահում։ Նայելով արեկի ջերմութեանը, առաւօտեան ժամը իննի և ասանըմէկի միջև, մէկ էլտեսարբարձրացան այդ սատանայի քամիները և աստիճանաբար բազմացան և աճեցան մինչեւ ժամը երկուսը կեսօրից յետոյ։ Երբեմն էլ գոյանում են փոշու ամբողջ ամպեր, փակիւով հորիզոնը ինչպէս պատ։

Ա.մառնալին ջերմութիւնը յաճախ նոյն չպի

զօրեղէ, որչափ Անիբեկեմ Սահարայում։ Մեւ  
շեղի մօտն բնաճարալի (ստեղին) և կալի  
ծծմբատի (սիլվատ դը սուդ) պաշարը հալուեց  
օդի տարութիւնից, որ Ենթաղըում է 65<sup>0</sup>, 5  
ջերմութիւն այն արկղելի մէջ, ուր փակուած  
էին այդ նիւթերը։ Այդ ողջ հիստային Պարսկ  
կաստանի զուգածերմային (իզոթերմիք) գծերի  
դէօլի հարաւ խոնարհվը Խանիկովը վերա-  
գրում է Առւտ անապատի ջեռուցիչ վառարա-  
նին։ Մինչդեռ ուստական Թուրքեատանում այս  
գծերը տարանջատ են միմեանցից, Խորասանի  
եղերական լեռների հարաւում, ուր անցնում  
է 12 աստիճանի զուգածերմային աղեղը, Նրանք  
մօտենում և կաշում են միմեանց։ Առւտի գո-  
գաւորութեան ջեռուցիչ ազդեցութիւնը զգա-  
լի եղած պիտի լինի մինչև իսկ Մազանդարա-  
նում, որի բռնականութիւնը, Համեմատած  
կասպիական միւս ափերի բռնականութեան  
հետ, գլեթէ այրեցած գօտու բնաւորութիւն  
ունի. Բարդէ Ա Մուն թիւնաւոր քամին, բռ-  
լորդին զուրկ ջրի գուրշինելից, փշում է Եր-  
բեմնակի անապատից, գլխաւորապէս ծովափի՝  
Բանդար Արասի մօտենը։ Հանապարհողնե-  
րը սատիկ վախենում է են այդ քամուց

պատմում են որ գրանից խեղդուած մարդիկը  
խկոյն կապտում են և նրանց անդամները ան-  
ջատում են:

Հասկանալիէ ուրեմն թէ ինչ մեծ զենա-  
խանձաւոր հոգածութեամբ պարսիկ երկըա-  
դործները կամ գոնէ նրանք, որ հարստա-  
հարութիւններից ճնշուած, գեռ չեն փերկըցել  
(յետ կանգնել, խուսափել) մշակութիւնից՝  
ժողովում են լեռների ելքում ջրի վերջին կա-  
թիւնները գործադրելու նրանց իրանց դաշտե-  
րում և պարտէ զներում, ուր ջուրը պտուղ և  
հիւթ է դպանում: Ստորերկեայ ջրանցքները,  
որ յայտնի են պարսկաստանում կանոն կամ  
կանոն անուամբ, փորում են մի տեսակ գու-  
շակութեամբ կարծեա ինչպէս այդ անուում է  
նաև Աղուանիստանում: Մեծ խնամքով պահ-  
պանում են ջրանցքները, որովհետեւ բոլորի  
կեանքը դրանցից է կախուած: Երբ որ երկը  
ընդհանուր ցամաքութեան կամ փուլքերի  
պատճառով ստորերկեայ ջրերը կտրում են,  
այն ժամանակ գիւղերն էլ ամայանում են: Մշա-  
կութիւնը հնարաւոր է միայն լեռնային հո-  
վիտներում, որովհետեւ Պարսկաստանը ամառ-  
նային անձրւների երկիր չէ: Այնտեղ սովոր-

րաբար անձրւում է միայն ձմեռը և գարնա-  
նը: Ամբողջ ամառն անցնում է, առանց որ  
երկինքը երբ և իցէ խառնուի փոթորկով: Ամ-  
բողջ ամառը ուրեմն ոչ մի պուտ ջուր չկայ,  
բացի լեռնային գաւառներից, ուր ձիւների հալ-  
քը մնունդ է տալիս խոր աղբիւրներին: Դաշ-  
տում հողը կրկնակի չորացած է, մի կողմից  
արեւի ջերմութեամբ, միւս կողմից ստորերկ-  
ըեայ կանատներով — դունամնով): Վերին  
հովիտները մի կողմ թողած, այս պարսկան  
տիսուր, լերկ, այրուած երկիրը որչափ քիչ է  
նմանում այն իդէ ալական գաւառներին, որ  
յիշում են Հաֆիզի և Սադիի բանաստեղծու-  
թեանց մէջ: Պէտք է շատ երկար ճանապարհ  
կտրել բարձրաւանդակի վրայ և իջնել Տենգ-  
սիրի միջանկեալ գոգաւորութեանց մէջ, որ  
հանդիպսի հոտաւէտ անտառակների, լի եր-  
գող թռչուններով և ուր հօսում են զովարար  
վտակները վարդի թփերի տակ: Այս հրաշա-  
լիքները բանաստեղծի ստեղծագործութիւն-  
ներն են, որ իւր երեսկայութեան մէջն է  
փնտուում այն, ինչ որ բնութիւնը զլացել է

) H. Jule, The Book of ser Marko Polo.

Նրան։ Հոչակաւոր նախ Եմիրը, որ եր-  
գուելէ թէ արեւելքի և թէ արեւմուտքի բա-  
նաստեղծներից, իբրև մի դեղեցիկ դետուոր  
հոսում է զով հովանիների տակ, մի հասարակ  
ջրանցք է թումբով վեր առնուած մի փոքրիկ  
գետակից, որ անցնում է Պերսեպոլիսի դաշ-  
տով։ Այնչափ թանկագին են ջրերը այս երաշտ  
երկրում, որ մի հասարակ ջրամբար հոչակ-  
ւում է այնպէս, ինչպէս ուրիշ երկրում մի  
թափանցիկ ջրերով լիճ, շրջապատուած նը-  
կարչական ժայռերով և ստուերաշատ ցառի-  
վայրերով։

Խըանի բարձլաւանդակի հիւսիս — արե-  
մուտքում, բայց արդէն հայկական բարձր եր-  
կիրների սահմանում, գտնուում է Պարսկաս-  
տանի ամենամեծ ջրամբարը, միակը որ իսկա-  
պէս արժանի է լիճ անուանը։ Այս Կարբիաշա-  
կամ «ծովակն» է, Ուրմիայի, Մարաղայի կամ՝  
Արմենիստանի լիճը, որին արեւելքից իշխում է  
Զէհէնդի բարձր լեռնակոյտը<sup>\*)</sup>։ Անկողիները,  
հըուանդանները, լեռներ, որ սուն-

<sup>\*)</sup> Խորենացին այս լեռներն անուանում է՝ Սո-  
չունդ։ (Բ. 60) Ճ. թ.

ւում են ջրի մէջ, ձիւնապատ Արարատի մեծա-  
փառ տեսարանը անվերջ կերպով փոփոխում  
են պատկերները։ Ծովափն էլ ողողուելով աւելի  
առատ անձրւներից քան թէ հարաւային Պարս-  
կաստանը, աւելի շատ թաւուտներ ունի։  
Նոյնպէս չէ այնչափ ամայի և ունի քաղաքներ,  
գիւղագաղաքներ, ամբոցներ՝ ամբողջ ափի շը-  
ջապատում։ Սակայն «Ծովակը» չունի միջին  
եւրոպայի լճերի խորութիւնը։ Մոնտէ յթի  
չափած հիւսիս արեւմտեան ծայրում՝ այս ջը-  
րաւագանի ամենախոր մասը միայն 14 մետր  
խորութիւն ունի։ Միջին թուով ջրի թանձ-  
րութիւնը հաւանականաբար 5 մետրից չէ անց-  
նում, այնպէս որ Ուրմիան, թէև փուռած է  
4000 քառակուսի քելոմետր տարածութեամբ,  
սակայն իւր հեղուկ բովանդակութիւնը վեցից  
մինչև ութ անգամ փոքր է Լեմանի՝ համեմա-  
տաբար շատ փոքր տարածութիւն ունեցող  
լճի, բովանդակութիւնից։ Ուշադրութեան ար-  
ժանի է նաև այն, որ Ուրմիա քաղաքի առաջ  
լիճը արեւմտեան ափից դէպի արեւելեանը աս-  
տիճանաբար ցածանում է հինգ կանոնաւոր  
դարաստափներով։ Խորաչափը առաջ ցոյց է  
տալիս ամեն տեղ միապէս մի մետր խորութիւն,

յետոյ երկու և կէս և յաջորդաբար՝ չորս, վեց  
և եօթը մետք: Տեղ տեղ ճախճախուտ ծովա-  
փը ձգւում է հեռու ծանծաղուտներով, որ  
հազիւ մի քանի հարիւրամետը խորութիւն  
ունին: Յիսունից աւելի կղզի և խութեր բար-  
ձրացած են ջրից դուրս և սրանցից երեքը ջի-  
երի կղզին, Ոչխարների կղզին և Եշերի կղզին,  
այնչափ մեծ են, որ օդտակար են դառնում  
ափի բնակիչներին իբրև մշակութեան հող և  
արօտատեղի: Ուրմիա լճի ջուրը աւելի աղի է  
և հօգով աւելի հարուստ քան թէ ծովերի ջու-  
րը, քան թէ մինչև անդամ Մեռեալ ծովինը:  
Առջորդները չեն կարող նրա մէջ սուզուել  
և նրանց մարմինը իսկոյն ծածկում է աղի  
շերտով, որ փայլում է արևի տակ ինչպէս ա-  
ղամանդի փոշի: Բատ Վագների, այս աղի և  
եօդախառն ջրում ընդունած բաղանիքները  
կտրական աղեցութիւն պիտի ունենան մի քա-  
նի հիւանդու թեանց համար: Մինչդեռ ովկիա-  
նոսի ջուրը լիւ ծանրութեան միայն մի երեսներ-  
ը լորդն է աղ պարունակում, Ուրմիա լիճը — մի  
հինգերորդը<sup>1)</sup>: Քամին փշելուն պէս ջրի երե-

<sup>1)</sup> Ուրմիայի ջրի տեսակաբար ծանրութիւնն է  
1·1555.

սին կազմուում են աղային փրփուրի մեծամեծ  
սփոհցներ, որ և ափի տղմուտներում նստում  
են իբրև աղի սալ, մի քանի տասնամետը հան-  
տութեամբ և տեղ տեղ մինչև հինգ ու վեց  
քիլոմետր լայնութեամբ: Երկրի բնակիչները  
կարող են իրենց ուղածին պէս գալ և ինչպէս  
աղանդում իրենց աղի պաշարը բառնալ:  
Այս տեղերում, ուր ափի դիւրամատչելի է  
նրանք հաստատել են Միջերկրականի ծովեզ  
ըում դտնուած աղարանների նման աղարան-  
ներ: Բայց ընդհանրապէս գերադասում են  
նրանք մերձակայ լեռների հանքային աղը, որ  
աւելի դիւրին է ձեռք բերուում աւելի էլ գուտ  
է: Ոչ մի ձուեկը, ոչ մի թուլատարը, (մոլիսաք)  
չէ պարում այս լժի ջրերում, բայց գտնուում  
են այստեղ բիւրպար նուրը ագևոր սողոր  
կապատեաններ (crustacés), որ և կազմուցն  
մի առանձին տեսակ): Խրանցով են կերա-  
յումն իւ և աներաք զմազյալ թագավոր ուր-  
իւ և եւումար և առան սմբ ոցաւորմար որու-

Hitchcock;—Loftus, Quarterly Journal of the Geological Society, aug. 1885.

<sup>1)</sup> Moritz Wagner, Reise nach Persien und dem lande der Kurden.

Կըրւում կարասները և ուրիշ թռչունները՝ ուրոնք երամներով ժողովում են լճի վրայի։ Այսուտեղ գտնուում են նաև զեռունի որիշ տեսակը ներ, որ ոչ մի ուրիշ տեղում չկան, այլ և ծավափի տղմուտներում ծնունդ է առել մի առանձին աղային բուսականութիւն, որից լճի գրեթէ ամբողջ շրջապատը դարձել է բոլորովին անմատչելի։ Այս տղմային սեագոյն կամ մուք կանաչ զանգուածը, որ երբեմն մետաղի փայլ է տալիս և վատ հոտում, լճի ափին բըռնուում է մի լայն գօտի և ջրի տակովն էլ շարունակուում է մեծ տարածութեամբ։ Այս տիզմը պարունակուում է մագնեզի, երկաթ, նաև մեծ քանակութեամբ գործարանաւորական մնացորդներ։ Այս լուծուող խառնուրդի խւզային հիմքը այնպիսի յարակցութիւն է տալիս ջրի մակերեսոյթին, որ անգամ կատաղի քամու մղումից քարափին զարնուող ջուրը չէ ուռչում և ոչ էլ ալիքներ կազմում, իսկ ձմեռը այս զանգուածը, կես սառած, դառնում է մի տեսակ խիւս։

Լճի յատակից շատ տեղերում գուրս են ցայտում առ ատարուղիս աղբիւներ, իլենց յըստակ ջրի շատրուաններով թափանցելով աղային

զանգուածի միջից։ Ամենանշանաւոր աղբիւրները հոսում են լճի հիւսիսարեւունեան ափի մօտ (Սելմասի) Սալմաստի գաշտից ոչ հեռու, և Հարաւարեւելքում՝ Դիհկերխան գիւղի մօտ։ Այս աղբերակներն յայտնի են «մարմարի աղբիւր» անուամբ։ Ինիկների, ինչպէս նաև եւրոպացի ճանապարհորդների մեծամասնութեան կարծիքով, իսկ որ այս ջրերիցն են նստում մարմարինի շերտերը և անշուշտ այս ջրերին պէտք է վերագրել Դիհկերխանի մօտերը գըտնուած մարմարին հանքերի կազմակերպութիւնը։ Այս հանքերը մշակուում են և սրանք են տուել Պարսկաստանի և Առաջաւոր Ասիայի ամենագեղեցիկ պալատներինիւթը։ Այս՝ «թաւրիզի մարմարը», սովորաբար կաթնային սպիտակ, գեղնաւուն կամ վարդագոյն է, քուարցի պէտքայլուն, երբեմն էլ թանձրացած շթաքարի (ստալակտիտ) ձեռվ և իւր պարունակած թթուներից (օքսիտ) գունաւորուում է ամենանուրը և ամենագեղեցիկ երանգներով։ Այս մարմարի շերտերը կազմուել են ամենահաւանականականաբար այն ժամանակ, երբ այժմեան միայն 18 աստիճան (Հարբիւրաստիճանեան) ջերմութիւն ունեցող աղբիւրները աւելի տաք

էին։ Այժմս, մեր օրերում, այդ ջրերի ելքի մօտ, շատ բարակ փոքրիկ թերթեր են մի այն նստում, ձիւնի պէս սպիտակ, թէե բռնը րովին նման իրենց բազադրութեամբ մեր ձակայքի մարմարինին։ Բացի սրանից, այս ջրերից գոյանում է կոպիտ փիրաքար (trif), որից և շատ կայ խառնուած սեագոյն տղմի զանգուածի մէջ։ Յղբերակների մեծ մասը բղխում են հէնց իրենցից գոյացած արաստի (travertin, կարծր քար) կոներից։ Իսկ երբ ջրի անցքը խափանուում է, նրանք նոր ճանապարհ են բաց անում նախկին կոների ստորոտում և այսպէս աստիճանաբար կանգնեցնում են նորանոր բլրակներ<sup>1)</sup>։

Ուրմիա լճի մակերեսոյթը յաճախակի փոփխուել է։ Ափի բնակիչների աւանդութեանը նայած, նա երբեմն շատ մեծ տարածութիւն է ունեցել, բայց եղել է նաև ժամանակ, երբ նըրա մակերեսոյթը շատ փոքրկացել է։ Մի այլանդակ հրէշ, ասում են նրանք, սապըում է լճի յատակում, երբեմն խմում է, երբեմն էլ

<sup>1)</sup> Chardin, Voyages en Perse;—Moritz Wagner.

դուրս է ժայթքում ծովակի ջըերը։ Որ Ուրմիա լճի ծաւալը մի ժամանակ աւելի մեծ է եղել, այդ ապացուցւում է նոյն խկ երկը տեսքից։ այժմեան եզերքից ահագին հեռաւորութեամբ ձգուած են նախկին քարափներն ու ծովակը պատող քարաժայռերը, որ այժմս հեռու են ընկած ջըեր։ Նախկին կղզիներ, ինչպէս օրինակ՝ Շահի սարը կամ աւելի լաւ՝ Շահ - ի - Կուհը, լճի հիւսիս — արևմտքում, դէպի Թաւրիզ, այժմ դարձել են թերակղզիներ։ Խակ թերակղզիները՝ ամեն կողմից կպէլ են հաստատուն հողին։ Բայց, միւս կողմից, լիճը մի ուրիշ ժամանակ շատ աւելի ծանծաղ պէտք է եղած լինի, որ առասպելական դարերի մի տիրապետ՝ Ռուստէմը կամ Զէմշիդը (Ռուստոմ կամ Զումշուդ) կարողացած լինի լճի հարաւային մասում, Ուրմիա քաղաքի և նրա հակադիր ափի միջև, մի թումբ շինել, իբրև ճանապարհ թէ մարդկանց և թէ կառքերի համար։ Բնակիչներից շատերը կարծում են տեսած լինել այդ խճուղու հետքերը թափանցիկ ջըի տակ, խկ դարիս սկզբին մի ափշար իշխան չունենալով ուրիշ հնար լիճն անցնելու՝ գնացել է այդ թումբի վրայով, և ոչ մի տեղ ջուրը չորս ոտ-

քից աւելի խորը չէ եղել<sup>4)</sup>):  
 Եւրոպացիների այդ երկիրը այցելել սկսած  
 ժամանակից ի վեր լճային մակերևոյթի ցածաւ  
 նալլ շատ մեծ է եղել, որ հեշտութեամբ բաւ-  
 ցատրւում է նրանով, որ մշակութիւնները աւ-  
 ելի մեծ տարածութիւն են բոնել, ոռոգման  
 ջրերը աւելի կատարելապէս դործ դնուելով:  
 Մշակուած հողի քանակութեան աճիլը կամ  
 նուազիլը լճային աւազանի բովանդակութեան  
 վրայ ուղղակի ազդեցութիւն ունի, հաւանաւ-  
 կանաբար աւելի մեծ ազդեցութիւն, քան թէ  
 կլիմայի տարուքերումները երաշտութեան և  
 խոնաւութեան փոփոխութիւններով: Երբ որ  
 լճի շրջակայքը ծածկուում են մշակուած դաշ-  
 տերով, ջուրը կալնւում է ճանապարհին և այլ  
 ևս չէ կարողանում հասնել կեդրոնական գո-  
 գաւորութեանը — լճին, մինչեւ լնդհակա-  
 ռակը, երբ որ շրջակայքը ամայանում են և  
 հեղեղները իրենց ազատ ընթացքն են գտնում,  
 նրանց թափուած ջրաւազանը յորդանում է  
 նորից: Եղերական փոփոխուող դիմը այսպէս՝

) Carl Ritter;—H. Rawlinson.

իւր յառաջխաղացութեամբ և իւր ընկրկելով  
 ցոյց է տալիս միանգամայն և եղերական բնա-  
 կիչների փոփոխութեանց պատմութիւնը: Այս  
 երեսոյթին նման է՝ Հումբոլտի և Բուսինգոլի  
 ( Boussingault ) նկարագրածը Տիկարագուա կամ  
 Վալենցիա լճի մասին, սակայն Ատրպատակա-  
 նի ծովի ափերում հետեանքները աւելի մեծ  
 պէտք է լինին: Ումիա լճի աւագանը, պարփա-  
 կուած ջրբաժան գծով, որտեղից սկիզբն են  
 առնուում իւր օժանդակները, 50000 քառա-  
 կումի քելոմետրից աւելի է, իսկ այս տարա-  
 ծութեան վրայ թափուող անձրեային ջրի քա-  
 նակութիւնը, թէ կուզ՝ տարեկան միջին թուով  
 լինի միայն 25 հարիւրամետր, կանէ առնուազն  
 տասը միլիարդ խորանարդ մետր հեղուկ, կամ  
 մօտաւորապէս լճի ջրաւազանի բովանդակու-  
 թեան կիսի չափ: Նայելով շրջակայ հողերի  
 մշակութեան գործադրած ջրերի քանակու-  
 թեանը՝ լճի շրջագիծը փոփոխուում է և այն-  
 չափ աւելի արագութեամբ, որչափ որ ջուրը  
 աւելի փոռուած է և ծանծաղ: Մածեօու լճի,  
 որ այնչափ էլ խորն է, մակերեսոյթի փոփո-  
 խութիւնը՝ նայելով երաշտ կամ յորդ տարի-  
 ներին, հաւասարուում է մօտ քառասուն քա-

ռակուսի քիլոմետրի, ուստի և կարելի է դատել թէ ո՞րչափ մեծ պէտք է լինի Ուրմիա լճի մակերեսոյթի տարուբերումը, Ուրմիա լճի, որի մեծագոյն մասը լոկ ճահիճ է: Այս առանց խորութեան ջրաւազանի վրայ ի հարկէ նաւարկութիւնը չէ կարող ունենալ մեծ կարերութիւն, թէ և կան մի քանի առագաստաւոր նաւեր, որ շըջում են հեռաւոր խոր ափերում: Ապրանքների և սակաւաթիւ ճանապարհորդների փոխագրութիւնը կատարում է սովորաբար լաստերով: 1838 - ին, շահի հօրեղբայրներից մէկը իրեն անուանել տուեց լճի մեծ—ծովապետ և, նախ և առաջ իւր նաւարկութեան մենավաճառը հաստատելու համար, բռնել և ջարդել տուեց մասնաւոր մարդկանց պատկանող բոլոր նաւերը<sup>1)</sup>:

Ուրմիա լիճը ընդունում է բազմաթիւ գետեր, որոնցից ամենանշանաւորը Զաղատուն է, որ գալիս է հարավի լեռներից: Սրա գլխաւոր ճիւղերից մէկը՝ Սարուկը՝ իւր ջրերի մի մասն ստանում է 300 քայլ շըջագիծ ունեցող մի

հորից, որի բերանը բացւում է մի կըային բըլըրակի կատարին: Այս բլուրը, ինչպէս և ուրիշ շատ շատերը, կըում է Թաղթ-ի-Սուլէյման կամ «Սողոմոնի Գահ» անունը: Անկասկած այս ձուաձև և միայն 50 մետր բարձրութիւն ունեցող բլըրակը կազմակերպուել է աստիճանաբար նոյն խակ ջրից, որի բացուածքի շուրջը նստում են արաստի շերտեր: Ջրհորը ճշտութեամբ նոյն խորութիւնն ունի, որչափ որ արաստի շերտերի խորութիւնն է, սակայն ինչպէս երեսում է այս ջրերի ակը չէ գտնեւում բլըրի վհի յատակում, և պէտք է որ նա նախ և առաջ լցնէ լեռների խորքում ընդարձակ ջրամբարներ և ապա թէ այս ջրհորը, որովհետեւ շըջակայ հովտի ոռոգման համար որչափ և կուզէ մեծ քանակութեամբ ջուր են վերցընում, այսու ամենայնիւ այս ջրհորի մակերեսոյթը նոյն բարձրութեանն է մնում: Սողոմոնի Գահի շուրջը ցրիւ ընկած են քարացեալ շեղակոյտեր, որոնք կազմուել են մեծ ակից վեր առնուած ջրանցքներից: Այս շեղակոյտից մէկը վիշապի ձև ունի, և առասպելը պատմում է թէ իսկապէս սա մի հրէշ է եղել, որին քարացրել է Գահի որդին: Արևմտքում, մի ու

<sup>1)</sup> Rawlinson, Journal of the Geographical Society, 1880.

Եիշ փոքրիկ սար կոչւում է Զինդան և ի - Սու-  
լյաման կամ «Սողոմոնի Զնդան» և 60 մետրով  
աւելի բարձր է, քան թէ այժմեան ջրհորի  
բլուրը, սակայն նա էլ մի և նոյն ծագումից է  
և հետզհետէ կազմակերպուել է քարացնող  
ջրերից. իսկ կոնուսի մէջ տեղումն էլ մի ուղ-  
ղահայեաց հոր ունի, որ համարում է այն  
«բանդը», որի մէջ Սողոմոնը փակելիս է եղել  
յանցաւոր ոգիներին: Այդ տեղով բարձրանա-  
լիս է եղել մի ժամանակ կրային ածխատով  
ծանրաբեռնուած ջուրը, բայց այժմս այդ վի-  
ճը դատարկ է և ջուրը փախել է՝ ուլիշ ելք  
գտնելով ժայռերի ճեղքուածքում: Այս երկու  
հորի շուրջն էլ ամեն կօղմից դուրս են ցայտում  
հանքային և ջերմկային, թթւուտ, ծծմբային  
և կրային աղբիւրներ <sup>1)</sup>: այսունազ օն ար ա-  
մերժին զգացզ պա սմասմաս տար և կամ  
մերու: Եաւ և մասն ուղծող զնի զելո  
յանցաւոց մէ նոր ուղարկուածքում գո-  
րծիս օն մէ յանձնուի քնոյն որոշակարծ  
և բժիշքը ամ: բժիշքը բայց եւստան զի  
Կանուար պահանուա և օն մէ յա յրացքի ով  
այս մէս ուղարկ է շնոր մի առ սկսած մէ և  
1) Rawlinson.

Առաջին մեջ Շահումյան գործը ճանձվել  
- մասնաւուն պարտ է և աղօնական, զափառ ընդ  
- պարտին այլ ԱՊ ԱԶ ԱԿ ՈՐ է թու  
- աշխարհ իմաց և ԿՈՄ այս գործը է և այլ  
- ին է ուրաքանչափ զափառ ու Նազարեական է և այլ  
- առ պարտ զափառ ու Նազարեական է և այլ  
- անձնար մասնաւուն բազական միջեր  
- մասն և Եղբայրաց բարեկար զար պահար  
- ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՈՐՀԻ ԱՌՈՒԹՈՒԹԻՒՆՆԵՐ  
  
«Արիական» առաջին ընտանիքները իրենց  
երդի (օճախի) հիմնաքարը դրած լինին թէ  
կուզ՝ Բակտրիայի դաշտերում, կամ Հինդու—  
Քուշի և կամ Կովկասի հովիաններում, և կամ  
թէ Սկիւթիայի տափաստաններում, այսուամե-  
նայնիւ Եւրոպայի պատմաբանները հին յիշա-  
տակարանների ուսումնասիրութեամբ առաջ-  
նորդուել են դիսաւորապէս դէպի Առաջաւոր  
Ասիա և դէպի Եգիպտոս:

Մտքով բարձրանալով դարերի ընթացքով դէպի վեր՝ մարդ տեսնում է խաւարը թանձրացած այսօրուայ այնչափ փայլուն Արևմուտքի երկիրների վրայ, մինչդեռ լոյսը սփռուած է երեսում Միջերկրականից դէպի արևելք, [թէ

Ավրիկեան Նեղոսի ափերում, թէ սահմանակից Ասիայի երկիրներում, Յոնիայի ծովափներում և կղզիներում, Ասորական ծովեգերքում, Եփրատի ափերում և Իրանի բարձրաւանդակներում։ Մեր ծագումը անյայտ է մընում, սակայն Եւրոպայի և Նոր Աշխարհի ազգերին հասարակաց ժառանգութիւն դարձած՝ դարից դար զարդացող քաղաքակրթութեան սկիզբները գտնուում են Ասիայի Հարաւ—արևեմեան երկիրներում։ Զէ՞ որ այդ տեղ են դնում Հելլենների առասպելները առաջին Ոլիմպոսները և ճնունդ տալիս աստուածներին։ Զէ՞ որ այդտեղ էր Նոյնապէս՝ Հրէանների, Քրիստոնեանների և մուսուլմանների պահպանած աւանդութեանց Համեմատ, ծաղկում կենաց ծառը, որի հովանու տակ արթնացան առաջին մարդը և տիեզերական մայրը։ Երկրային դրախտը որոնուել է քաղդէական երկրում, Հնդկական Կովկաս սարերում, Իրանի ովազիսներում։ Հայաստանի Մասիսը, Քուրդիստանի Նիզիրը<sup>1)</sup>, Պարսկաստանի Դեմաւնդը և ուրիշ

<sup>1)</sup> Fr. Lenormant, Le Déluge et l' Epopée babylonienne; Les Premières Civilisations.

սարեր, Առաջաւոր Ասիայում, Համարւում են կրող այն տապանի մնացորդներին, ուր ապաստանեց յորդացած ջրերից խուսափող ընտանիքը։ Եւ յետոյ՝ քրիստոնեանները տարածուելով դէպի արևելք՝ անչափ կերպով բազմացրին «Զըհեղեղի վկայ» սարերի թիւը։ Այդպիսի սարեր ցոյց են տրուում Պիրէններում, Կապսիրում, Անդորրում, մինչև անգամ Աղուանիստանում՝ Նուր կամ Նոյի սարը, Սիահ-Փոշերի երկրում, և Խնդոսի դաշտերին իշխող «Սողոմոնի Գահը»։

Իսկական պատմութեան ծագման սկզբին՝ առաջին ճշգրիտ իրողութիւնները կատարւում են Ասիայի Հարաւ—արևեմեան երկիրներում և Եգիպտոսում, որ նախնիքներից, մասնաւորապէս Հերոդոսից<sup>1)</sup>, Համարւում է իբրև ասիական աշխարհին պատկանող՝ Նեղոսի աջ ափովը։ Այս տեղերումն են սկսում խումբ խումբ ազգեր դասաւորուել Սեմ, Յափէտ և Քամ անուններով, թերես նաև — ինչպէս

<sup>1)</sup> Գիրք Դ. 45.

Հաւաստում են բազմաթիւ արեելագէտներ — Սումէր և Ակկադ անուններով, մի հակաղըութիւն, որ գտնետում է նաև Պարսերի և Մարերի, Իրանի և Թուրանի մէջ ևս: Զանազան ազգութիւններ, սկսեալ միջին Ասիայի բարձրաւանդակներից մինչև Միջերկրականի կղզիները և մինչև Ափրիկէի անապատները, յիշուած են իրենց ցեղերի, սովորութիւնների, արուեստների հետ միասին: Գլանների և հատուածակողմերի (պրիզմա) վրայ կարդացւում են բարիոնեան արձանագրութիւններ, որ ցեղաբանական և աշխարհագրական ամենակարեռը յիշատակարաններն են: Ամենահին զրոյցներից մէկը պատմում է ազգերի ցրւումը Բաքելի աշտարակի տակից, բայց չնայած լեզուների «խառնակմանը» քաղդէական պատմութիւնը հետեւում է այս տեղափոխուող ազգերին, նշանակում է նրանց կայանները, պատերազմները և միմեանց հետ խառնուիլը:

Առաջաւոր Ասիայի, — անուն՝ որով Իիդերի հետ միասին պէտք է հասկանալ նախնիքների ամբողջ Ասիան մինչև Խնդոս, — աշխարհագրական ձեւը ակներեւ ցոյց է տալիս բոլոր այն առաւելութիւնները, որ ունի այս երկիրը

իրեւ քաղաքակրթութեան կենդրոն: Նա դըտնլուում է ոչ միայն Հին Աշխարհի երկիրների խմբի երկրաչափական միջավայրի մօտ, այլ նաև այս երկրումն են գտնետում ամենագիւղին անցքերը երեք մայր՝ ցամաքների և ծովահայեաց մէծ աշխարհների միջեւ: Նեղոսի աւագանից ասորական ծովափնեայ հովիանները հասնելու համար բաւական է աւագի մի նեղ շերտ — մի երիզ անցնել, Ասիայի ափերից Եւրոպայինը համնելու համար պէտք է ծովային մի բազուկ — մի նեղոց անցնել, որ շատ գետերից աւելի նեղ է: Հնդկական Ովկիանոսի աւագանից մինչև Միջերկրականինը, Առաջաւոր Ասիան ներկայացնում է երկու բնական ճանապարհ: Մինչ՝ Սուեզի պարանոցինը և միւսը, որ աւելի նշանաւոր է քաղաքակրթութեան պատմութեան մէջ, Եփրատի և Տիգրիսի միջագետքը, որ հաղորդակցում է Ասորիքի նաւահանգիստների հետ բազմաթիւ խրամատներով: Իսկ այն ճանապարհները, որոնք վերին Եփրատից գնում համեստմ են Սև ծովի եղերական հովիաններին, կարելի է ասել, որ միացնում են Հնդկական Ովկիանոսի երկիրները թէ Միջերկրականի աւագանին և թէ դէպի Ատլանտեան

ծովախորշերը դարձած երկիրների հետ։ Որովհետեւ՝ Եւրոպայի լեռնաշղթաների գլխաւոր առանցքը, Ալպերից մինչև Բալկանները, վերջանում է Եւրոպինեան Պոնտոսի ափում, իսկ Բեսսարաբիայի ծովափը, Կարպատներից արեւելք, պատկանում է արդէն Եւրոպական մայր ցամաքի Հիւսիսային երեսին։ Դանուբը, որի ջրերը թէւ օժանդակում են Վոսիորի և Դարդանէլի միջով անցնող և Միջերկրականը թափուող հոսանքին, է իսկապէս ատլանտեան զառիվայրին պատկանող դետ<sup>4</sup>։

Առաջաւոր Ասիայի մի մեծ մասը կազմուած է բարձրաւանդակներից, որոնց մի քանիսը հասնում է մինչև 2000 մետր բարձրութեան, բայց ծովեզերքները կտրատուած են խորին ծոցերով և ծովախորշերով։ Արաբիայի հարաւային ափերը լուացող Հնդկական Ովկիանոսը թափանցում է ներս մեծ տարածութեամբ Մելքանի և Օմանի երկիր միջև, յետոյ սեղմուելով նեղուց է դառնում Օրմուզ (Հիւրմիւզ) կղզեակից դէպի հարաւ, և կազմում է Պարս-

կական ծոց կոչուած Ներքին ծովը։ Արաբիայի միւս կողմում Կարմիր ծովը լցրել է Երկրի մի գոդաւորութիւն, որ զարմանալի կանոնաւոր ձեւ ունի, այնպէս որ աշխարհում չկայ դրա Երկըորդ օրինակը, և Սինայի եռանկիւնի լեռնակարկառի երկու կողմում բաժանեւում է Երկու Երկըորդական ճիւղերի, որ բոլորովին զուգաչափ են։ Միջերկրականը պատումէ Կիակըրոսը, Փոքր Ասիայի հարաւային ափերում կազմում է մի շարք ծոցեր, և հազարաւոր ճիւղաւորութիւններով և նեղուցներով՝ կղզիների և թերակղզիների մի նոր Յունաստանի է վերածում Եգէեան ծովի ամբողջ արևելեան ափը։ Մի ուրիշ ծով, որ աւելի շուտ մի մեծ լիճ է, — նախկին Պրոպոնտիդը կամ «Առաջածովը», — միացնում է Արխիպելակը Եւրոպինեան Պոնտոսի հետ, վերջինս էլ շըջուում է դէպի արևելք, տարածուելով Կովկասի և Հայաստանի լեռների միջև։ Վերջապէս՝ Կասպիականը լրացնումէ Առաջաւոր Ասիան պարփակող ծովային ջրերի շըջագիծը։ Պէտք է հաշուի առնել նաև լճերը, Աւրմիան, Վանը և Էլի ուրիշները, որոնք այնչափ ընդարձակ են, որ շատ տեղերում ովկիանեան ծոցերի կերպարանքն ունին։ Տեղ տեղ

դաշտելն են բոնել նախկին ծովային բազուկների տեղը։ Սրանցից ամենանշանաւորն է Բաբիլոնի անսահման դաշտը, որ Պարսից ծոցի շարունակութիւնն է Հայկական (Ալեքսանդրէտ) ծովախորշի ուղղութեամբ և երկու բոլորովին որոշ մասի է բաժանում ամբողջ մահմետական Ասիան։ Հարաւում՝ Արարիան, Պալեստինի և Ասորիի, Եգերական լեռնաշղթաներով իսկ Հիւսիսում և արևելքում՝ Փոքր Ասիայի լեռները և Իրանի բարձրաւանդակները։

Նորհիւ ծովերի, որոնցով չըջապատռած է ամեն կողմից, և Միջագետքի ընդարձակ դաշտերի, որոնք քիչ է մնում որ հասնեն Միջերկրականին, Առաջաւոր Ասիան, Հին Աշխարհի կեղրոնը, է միանգամայն դրեթէ Կղզիական երկիր, որով պատմութեան ընթացքում կարողացաւ դիւրութեամբ տարբեր ծագման և սովորութեանց ժողովուրդների հանդիպման կեղրոնափայր դառնալ։ Երկրագնտի ոչ մի ուրիշ երկրում՝ աշխարհի գլխաւոր, միմեանց հակակշռող ցեղերը չեն ունեցել այնքանի քաղաքակիրթ ներկայացուցիչներ, որ այնչափ ուրոշակի տարբերուելիս լինէին մէկը միւսից, ինչպէս այստեղ։ Ասիայի Հիւսիսի մանր ցեղերը,

որ այժմն Ուրալ ալտայեան ընդհանուր անուամբ են ճանաչուած, մի ժամանակ ներսիութեցին Օքսուս գետից շատ հարաւ գտնուած բարձր Երկիրները, մինչդեռ Օքսուսն էր համարում իրեւ Իրանի և Թուրանի սահման։ Պատմութեան բոլոր շըջաններում պատերազմը յարաւելի է այս երկու ցեղաբանական տարրերի մէջ։ Դեռ մեր օրերումն էլ կոիւը շարունակումէ Պարսիկների և Թուրքմէնների միջև։ Հինգուշից հարաւ շատ ժողովուրդներ, մասնաւորապէս Այմաք և Հեղարէ ցեղերը, յիշեցնում են Մոնղոլների արշաւանքը։ Բայց չէ որ կոիւը առաջնորդում է ուշ թէ շուտ գէպի ձուլում։ և, իսկապէս, Արևելքի ազգերի ամբողջ պատմութեան մէջ երեսում է քաղաքակրթութեան կրկին ծագումը, այլաբանօրէն արտայացածուած աստուածների մշտատե կոռուզ։ Յեղանական տարրեր, որոնք պատկանումէին եթէ ոչ զուտ Խափիշիներին, գոնէ սևամորթ արմատին, ինչպէս օրինակ՝ Եթովպացիների եղբայրակից Քուշերն են, ունէին նոյնպէս իրենց ներկայացուցիչները Առաջաւոր Ասիայի շատ ազգութիւններում։ Այս ցեղերի Նոշաստանի (Սուզիան) բարձրաւանդակներում բնակուած ի-

նելլ ապացուցանող մի քանի հետքեր երևում են Նինուէի պալատների հարթաքանդակներում (bas-relief) նկարուած թափօրի գերիների մէջ<sup>1)</sup>: Նեբրովթը (Նեմրուդ) «հսկայ որսորդ առաջի Տեառն Աստուծոյ», էր այս առասպելական ժողովուրդների հրաշապատում նախահաւը: Կարմիր ծովի երկու ափի դիւրին հաղորդակցութիւնը մշտապէս իրրե հետևանք է ունեցել Արար և Ափրիկեան ցեղերի միախառնութիւնը, սակայն բուն խափշիկ (Նեգը) տարրը երբէք չէ ունեցել քիչ թէ շատ կարեռութիւն արեւմտեան Ասիայի ազգերի պատմութեան մէջ: Գերակշռող ազդեցութիւնը Թուրանցիներին և Քուշեաններին պատկանելուց յետոյ, անցել է Սեմականներին՝ հարաւային երկիրներում, իսկ հիւսիսում՝ Արիական ցեղերին: Արարական ամբողջ թերակղին և Ասորիքը՝ մինչև Եփրատը, Սեմականների տիրապետութիւնն են, իսկ Իրանի բարձրաւանդակ-

<sup>1)</sup> Layard, Nineveh and Babylon, Narrative of Discoveries;—G. Perrot et Ch. Chipiez, Histoire de l' Art dans l' antiquité, vol. II.

ներում, Հայաստանի լեռներում և Փոքր Ասիայի մի քանի մասերում թուական գերակըշուութիւնը պատկանում է Արիաներին: Պատմական յառաջիսաղացութեան ամբողջութեան ընթացքում Առաջաւոր Ասիան Եւրոպայի նախորդն է, բայց վերջինումն էլ քաղաքակրթութիւնը տարածուել է ճիշտ նոյն ուղղութեամբ, ինչպէս և առաջինում: Հին Աշխարհի վաճառականութեան և գաղափարների ընթացքի առանցքը ձգւում է հարաւարևելքից դեպի հիւսիս — արևմուտք: Ազգերի պատմութեան մէջ ամենամեծ կենսունակ գոտին տարածում է Հնդկաստանից մինչև Բրիտանական կղզիները, անցնելով Միջագետքից, ասիական Յոնիայից, Արխիպելակի Հողերով, Միջերկրականի թերակղիներով և Ֆրանսիայով: Առաջ քան Եւրոպայի քաղաքակիրթ աշխարհին պատկանելը, և երբ Ասիայի վաճառականութիւնը Արևմուտքի հետ կատարւումէր բարբարոս ցեղերի ձեռքով, գլխաւոր տուրեաւոր — փոխանակութիւնը կեդրոնացած էր բնականաբար ասիական ծովափներում: Արդո՞նաւորդների և «Ոսկի գեղմի» առասպելը ցոյց է տալիս այն հաղորդակ-

ցութիւնը, որ երբեմն տեղի է ունեցել Կովչ  
կասի լեռնացիների և ծովագնաց Հելլենների  
միջև: Բայց պատմութիւնը առաւելապէս խօ-  
սում է այն մեծ շահաստանների վաճառաւ-  
նոցների մասին, որոնք կամսդնեցան Ասորիքի  
ծովեզրում: Յայտնի է Փիւնիկեցիների մարդկու-  
թեանը մատուցած ահազին ծառայութիւնը: Նրանք ոչ միայն առաջինը եղան Եւրոպայի արե-  
մտեան ափերը հետազօտող, այլ և ուղղեցին ի-  
րենց կարաւանները լեռների բնական խրամատ-  
ների միջով Միջերկրականի հովիտներից դեպի  
Ովկիանոսինը: Դեռ սրանից էլ աւելին, նրանք  
հաղորդեցին բոլոր ազգերին ձայնական այրու-  
բենը, փոխ առնելով Եգիպտոսի մեհենադրոշ-  
մից (Հերոդիթիքներից): Նրանց շնորհիւն էր, որ  
ամբողջ աշխարհը սովորեց այն հանճարեղ  
մեթոդը, որով Հնարաւոր եղաւ վերաբառա-  
դրել կամ գրի առնել բոլոր ազգերի լեզուները,  
մինչև անդամ առանց նրանց հասկանալու: Հանդիսկելով անդադար օտարականների, որոնք  
խօսում էին հազարաւոր այլասեր բարբառնե-  
րով և տարբեր տարբեր արտասանութեամբ,  
Փիւնիկեցիք զարմացած պէտք է լինէին մասնաւ-  
որապէս հնչիւնների տարբերութեամբ: Եւ

ինչպէս կերպարանել այդ ձայները—հնչիւննե-  
րը, եթէ ոչ գործ դնելով այն նշանները, որ  
գործ էին ածում Եգիպտացիք գաղափարներ և  
այդ գաղափարներին համապատասխանող ամ-  
բողջ բառերի հնչիւնը գրելու համար: Նրանք  
ընտրեցին այդ նշանագրերից մի քանիսը, բոլոր-  
վին ազատելովներանց գաղափարագրական յատ-  
կութիւնից և գործ ածեցին մի միայն բառերի  
արտասանութիւնը (իւրաքանչիւր ձայնի առան-  
ձին) վերարտագրելու համար, Այսպիսով միտքն  
ազատուեց նախնական նշանակերպութիւնից  
և գրութիւնը գարձաւ զուտ արտադրութիւն  
խօսքի: Եւ այս հետեւանք էր Ասորիքի վաճա-  
ռականների և Արևմուտքի բարբարոս ժողո-  
վուրդների անդիտակից աշխատակցութեան:  
Փիւնիկեցիների աշխարհագրական գիւտերը,  
նրանց հեռաւոր նաւարկութիւնը Եւրոպայի և  
Ափրիկէի շուրջը, նրանց ճանապարհութիւն-  
ները օտար աշխարհների խորքերում, գետերի  
երկարութեամբ և քարավագների (ջրվէժ) շուր-  
ջը տալով, նրանց բերած մետալները, փայտը,  
խէժերը, գործուածքները, խեցեղէն անօթ-  
ները, ամնն տեսակ ձեռակերտ առարկանե-  
րը, որ հնախօսները մինչև օրս էլ գտնում

են զանազան տեղերում, նախապատրաստեցին արեմտեան անտառների ցեղերին ապագայ քաղաքակրթութեան, դելով նրանց միմեանց հետ յարաբերութեան մէջ, ապրանքների փոխանակութեամբ։

Նրանց ենք պարտական մասնաւորապէս այս նախապատմական անցողական դրութեան աշխատանքի համար, առանց որին իսկական պատմութիւնը երբէք չէր սկսուի եւրոպական աշխարհի համար։ Նրանք կտակեցին ապագայ քաղաքակրթ ազգերին այն՝ ինչ որ պիտի ընդ-միշտ մօտեցնէր սրանց միմեանց հետ, ինչ որ պիտի վերածնեցնէր մարդկութիւնը թշնամի ցեղերի քառսի միջից, — այբբենական դրութիւնը<sup>1</sup>։ Այս իսկ պատճառով՝ Փիւնիկեցիների ընդհանուր քաղաքակրթութեան մէջ ունեցած մասնակցութիւնը ամենայն իրաւամբ այլարանօրէն ներկայացնում են տիւրոսեան Հերթիւլէսով, որ ճանապարհ է ընկնում աշխարհքին տիրելու։

) E. Renan, De la part des peuples sémitiques dans l'histoire de la civilisation.

Փիւնեկիցիներից հինգ կամ վեց դար յետոյ Փոքը Ասիայի ափում ապրող Հելլեներն էլ մեծ մասն ունեցան Արևմտեան աշխարհի գտնելում։ Նրանց գաղութները սփոռուեցին Միջերկում։ Նրանց կը կայանի եզերքներում, մինչև Ովկիանոսի ակրականի եզերքներում, մինչև Ովկիանոսի ափը։ Իբրև վաճառական նրանք Փիւնիկեցիների շունեցած մի նոր միջոց՝ այն է՝ դրամ ունէին, որ ամեն տեսակ ապրանք ներկայացնող նշանն է, մինչդեռ Տիւրոսի և Սիդոնի վաճառականները գլխաւորապէս բարբարոս ցեղերի հետ տուլ և առ ունենալով՝ փոխանակում էին ուղղակի իրենց մթերքը տեղական ապրանքի հետ։ Յոնիացիները լինելով յարաբերութեան մէջ իրենց նման քաղաքակրթ ժողովութիւն ունէին ճիշտ վուրդների հետ, կարօտութիւն ունէին ճիշտ արձէքի նշանի, որով հնարաւոր լիներ գնել, ոյն իսկ առձեռն չունենալով փոխանակութեան ապրանք։ Սակայն բացի շահադիտական ասպարիզում եղածներից, ո՞րչափ աւելի բարձր արջանի գիւտեր պարտական ենք այս՝ Ասիայի Յոյներին, որ Եւրոպացիների նախորդն են հան-

) Fr. Lenormant, Les Premières civilisations.

Ճարի գըեթէ բոլոր մեծ գործերում։ Բազմաթիւ գաղութների մայր քաղաքը՝ Միլետը, մեզնից քսան և հինգ դար առաջ աշխարհագրական ուսումնասիրութեանց կեդրոնատեղի էր։ Այդտեղ էր վարդապետում Թալէսը, այդտեղում Սնաքսիմանդը, Հեկատէն, Արիստադորասը կազմեցին մեզ ծանօթ առաջին քարտէները։ Միլետի դրակից Հալիկառնաս քաղաքը տեսաւ «պատմութեան և աշխարհագրութեան հօր՝ Հերոդոտի ծնունդը», Հերոդոտի, որ համեմատական ցեղագրութեամբ<sup>1)</sup> զբաղուող առաջին գրողն է, հիանալի պատմող, անպահոյն լեզուով, միշտ սրամիտ դիտողութեանց մէջ, արդարագատ և ճշգրիտ դատողութեանց մէջ, մտածողութեամբ բարձր, այնչափ անկողմնապահ, մինչև բարբարոսներին սիրող, թէե միշտ գերադասելով Յոյներին՝ մանաւանդ Աթէնացիներին բոլոր միւս մարդկանցից։ Եւ իսկապէս, որչափ նշանաւոր անուններ կան յիշատակիլու այն փառաւոր երկրում, դէպի որը

դառնում էնք մենք ողջունելու մեր արշալոյսը, և որտեղից գալու է Հոմերականների հեռաւոր արձագանգը, օրօրելով մեր նախահայը ժողովուրդներին իրենց նոր ծնուռող քաղաքակրթութեան գողում։

Ասիա կամ Ազիադ անունը երևում է որ սկզբում պատկանելիս է եղել լիդիական միհասարակ նահանգի և յետոյ ընդհանրացել և գործադրուել է՝ նախ Սնատոլիայի ամբողջ թերակղզին, և հուսկ ուրեմն, բոլոր մայրցամաքը նշանակելով, մեծանալով հետզհետէ, այսպէս ասսած, ճանապարհորդների քայլերի տակ։ Աստիճանաբար իմացան թէ Եգէեան ծովի արևելքում գտնուած Հելլենական հողերը որչափ փոքր էին համեմատած մեծ Ասիային։ Այսուամենայնիւ Փոքր Ասիա կոչումը շատ լաւ բովանդակում է իւր մէջ այդ՝ Եւքսինեան Պոնտոսի և Կիսիրոսի ծովի միջև գտնուած թերակրղու պատմական դերը։ Եւ, իսկապէս, գաղթող ազգերից նրանք, որ չանցան կովկասը, Աւ ծովի շրջապտոյտը անելով դէպի արևելուտք դիմելու համար, հանդիպեցան միմեանց մայրցա-

1) Oppert, Société d'Ethnographie, séances du 2 mars, 1882.

1) Հերոդոտոս, պատմութիւնք, Դ, 45.

մաքի այս ծայրում, այս երեք կողմից ծովերով սահմանաւորուած տարածութեան վրայ: Սեղմուելով միմեանց այս տարբեր ծագումի ժողովուրդները և ազգերը՝ չկարողացան բոլորն էլ պահպանել իրենց առանձնայատուկ գծերը, և շատերը իտառնուեցան և ձուլուեցին այնպէս, որ հեարաւորութիւն չկայ հաւաստիաբար վերաստուգելու նրանց ցեղաբանական տարբերը: Բայց ոչինչ չէ կորչում մարդկութեան ահագին գործանոցում (լաբորադորիա), իւրաքանչիւր բաղադրիչ ցեղի հանճարը երեան է գալիս Փոքր Ասիայի պատմութեան և նրա Եւրոպայի քաղաքակրթութեան վրայ ունեցած ազգեցութեան մէջ: Հիւսիսի ցեղերը, ընդհանրապէս «Թուրանցի», անուամբ կոչուածները, որ յաճախ արհամարհանքով են նկատուած իրեւ արիական ազգերից ստոր, երեսում է, որ ընդհանուր գործում կատարել են ուրիշ ցեղերից ոչինչ պակաս գեր: Նրանք սովորեցրին դըացի ժողովուրդներին երկաթի և ուրիշ մետաղների մշակութիւնը<sup>1)</sup>: Անկասկած նրանց է պատ-

1) G. Rawlenson, The five great Monarchies; — Fr. Lenormant; — Maspero, Histoire ancienne des Peuples d'Orient.

կանում նաև ընտանի անասունների մեծամասւնութեան մեջ աւանդելու փառքը: Այսպէս կամ այնպէս, կենդանաբանները՝ մարդուս գրլիսաւոր ընկեր դարձած անասունների ցրուըման կեդրոնավայրը որոնում են այն երկիրներում, ուր պատմութեան սկիզբումն ապրում էին Թուրանցիները:

Այստեղ՝ Տիգրիսի և Եփրատի հովիտներում, Արարատի ստորոտում, Կովկասի զառիվայրերում, Իրանի բարձրաւանդակի վրայ ժողոված էին շան, եզան, այծի, ոչխարի, խոզի, թերես նաև ուղտի վայրենի նախնիքը<sup>2)</sup>: Զիու երկու սկզբնական տեսակից մէկը «արիական» ձին է լինելու, միւսը՝ «մոնզոլականը կամ «Թուրանականը»<sup>3)</sup>: Նմանապէս Առաջաւոր Ասիայիցն են եկել հաւանականաբար ամենաօգտակար մշակուած բոյսերի ամենամեծ մասը, ինչպէս են՝ ձիթենին, սալորենին, նշենին, որթը, թերես դեղձին, վուշը, առուց-

1) Gabriel de Mortillet, Le Préhistorique.

2) Sanson, comptes rendus de l'Academie des Sciences; — Piétrement, Chevaux dans la période préhistorique et historique.

տը, բակլան, ոլոռը, մանաւանդ՝ վարսակը, գարին և ցորենը<sup>1)</sup>: Եթէ այս այսպէս է, ուշը եմն իրաւունք չունի<sup>2)</sup> հին զրոյցը այժմեան մարդու ծնունդը դնել այդ երկիրներում: Ի՞նչ էր մարդկային անասունը առաջ քան իմացաւ բուսցնել հողից սննդարար հատիկները, որ Յոյները ներկայացնում էին այլաբանօրէն Դեմետրի դուստը դիցուհու կերպարանքով, որ մերթ խաւար և սարսափելի՝ գնում է թագաւորելու մեռեալների ուրունների վրայ, մերթ պայծառ և զուարթազին՝ երևումէ երկրի վրայ, աղբերակների եղը, պսակուած ծծմորի կապոյտ ծաղիկներով:

Հիւսիսի ցեղերը նոյնպէս մեծ ազդեցութիւն ունեցան Փոքր Ասիայի ընդարձակ քառակողմում բնակուող ազգերի բարոյական զարդացման վրայ: Նրանց ողին երևում է Արևելքի կրօնների, մանաւանդ մոդական ծէսերի մէջ, որ նման են Սամոյեզների և Տունդուզների շամանականութեան: Այս ցեղերը կտակեցին նաև իրենց աստուածները, որոնց Յոյները

1) Alfonse de Candolle, Géographie botanique raisonnée; Lieux d'origine des plantes cultivées.

վայր մղեցին ստորերկրեայ աշխարհը, իբրև ստորին ցեղի աստուածների, որ հարիւր—բազկանի հրէշներ են, տձեւ էակներ, որ խլում են երկրի խորքերից քըսյական նիւթը, մետաղներ են կոռում արձագանդաշատ քարայրներում և որոնց վրայ հսկում է Գուլկանը, կաղ աստուածը, Ոլիմոպոսի ընակիչների ծաղրատեղին: Քաղցէացիների երեսուն անգամ դարաւոր աստղաբաշխական վարդապետութիւնը յաւերժացել է մեր կենդանակամարի (զոդիակոսի) կենդանակերպերում, մինչև անգամ մեր երկոտասսնեան տրոհումներում, օրերի եօթնական հաշւում<sup>3)</sup>: Սոյնպէս և Փոքր Ասիայի սեմական կամ սեմականացած ժողովուրդները կրկնակի մասնակցութիւն ունեցան ազգերի զարդացման գործում, նախ՝ իրենց վաճառականութեամբ և երկրորդ՝ կրօնական ազդեցութեամբ: Մինչդեռ հելլենական աշխարհում քաղաքացիների խմբաւորութիւնը մասնաւորապէս քաղաքացիական բնաւորութիւն ունէր,

3) Fr. Lenormant; — Oppert, anciennes Populations de la Mésopotamie, société d'Ethnographie, 1883.

նրանցն ընդհակառակը կազմում էր «միաբանութիւններից», ինչպէս օրինակ՝ Փոխոգիտում և դրակից տէրութեանց մէջ, ուր քահանան էր հրամայում յանուն աստուածների, և սրբավայրը լինում էր միշտ քաղաքի կեղունում<sup>1</sup>: Այս արեւելան նրբահնար (subtile) կրօնները, որ կապուած էին գլխաւորապէս մահուան պաշտաման հետ, կապակցելով մահն ու կեանքը յարութեամբ, որ մշտապէս յաջորդում էր զոհաբերութեան, այս կրօններն, ասում ենք, սպառնում էին յաղթել Յունաստանի ուրախ պաշտամունքին, երբ յանկարծ մի ուրիշ կրօն, քրիստոնէութիւնը, աւանդութեամբ վերագրուած սեմական աշխարհին, բայց ամբողջովին թափանցուած արիական տարրերով, նախապատրաստուած յունական և աղեքսանդրեան փիլիսոփայութեամբ, տարածուեց արեմտեան աշխարհում, կործանելով աստուածների տաճարները: Այս կրօնական յեղափոխութեան մէջ Փոքր Ասիան թերևս ամենամեծ մասն ունեցաւ: Մի Կիլիկեցի Հրէայ՝ Պօղոսը, որ յու-

1) W. Ramsay, Atheneum, 23 déc. 1882.

նացած էր իւր հանճարով, նոր վարդապետութեան ամենաջերմեռանդն առաքեալլը դարձաւ, տալով նրան իբրև ժողովուրդ ոչ թէ իսրայէլի որդիների նեղ շըջանը, այլ հեթանոսների ահագին ամբոխը: Հէնց նոյն իսկ քարոզութեան սկզբում, Ասիայի Եօթն Եկեղեցիքը՝ եղան հաւատոյ ծաւալման և դարձի գլխաւոր վառարանները, և երբ Քրիստոսի հաւատը, վերջապէս կազմակերպուելով, ձեակերպեց ճշգրիտ սահմանաւորութեամբ իւր հաւատալիքները, այդ էլ փոքր Ասիայի մի քաղաքում՝ Նիկիայումն եղաւ, ուր հրատարակուեց հաւատոյ հանգանակը, որ մինչև օրս էլ կարգացւումէ քըիստոնեայ հասարակութեանց մէջ: Քրիստոսի կրօնը դէպի Եւրոպայ տանող ալիքներին յաջորդեցին, մի քանի դար յետոյ, մի ուրիշ կրօնի կոհակները, և այն մեծ պատերազմները, որ վճռեցին Խոլամի յաղթանակը Սեծովի շըջապատում, մղուեցին նոյնպէս Անատոլիայի թերակղզում:

Եւ այն երկիրները, ուր կատարուեցան այս բոլոր մեծ անցքերը, ընկած են լուսեթեան, գրեթէ մահուան գիրկը: Այս ծագումների աշխարհում, ուր գնում է աւանդութիւնը ա-

ուազին մարդկանց, և ուր գոնէ մեր քաղաքա-  
կրթութիւնն է ծնունդ առել, այս սրբազնի  
երկիրը, ուր պատմութեան արշալոյսին ցոյց է  
տալիս մեզ բանաստեղծը մարդկանց և աս-  
տուածների գուպարումը իլիոնի (Եղիոնի) պա-  
տերի տակ, այս հոչակաւոր քաղաքները, Բա-  
րիլոննունինուէն, Եկբատանն ու Շօշը (Սուզա),  
Բաալեէքն (Արեգ) ու Պալմիրը, Անտիոքն ու  
Դամասկոսը, որ ծաղկեցան այնպիսի մեծ փայ-  
լով անցեալում, ի՞նչ են դարձել այսօր համե-  
մատած Եւրոպայի հետ, ուր երբեմն բարբա-  
րոս ցեղերն էին թափառում: Ի՞նչ են դարձել  
դրանք, Արևմուտքի քաղաքների հետ համեմա-  
տած, ուր խոնուած են միլիոնաւոր մարդիկ,  
Նախնեաց ամայացած երկիների տիրապետնե-  
րը: Երեք հազար տարի միջոց, և ի՞նչ զարմանալի  
հակադրութիւն: Այն ժամանակ Եփրատի  
հովտում, որ յաջորդել էր Նեղոսի հովտին  
գտնուում էր արեմուեան աշխարհի կեդրոնը,  
իսկ Եւրոպան խաւարի աշխարհ էր, անծանօթ  
տարածութիւնը: Այժմս լոյսի վառարանը  
տեղափոխուել է գետի արեմուտք և աղջա-  
մուղջը ծանրացել է Արևելքի վրայ: Կարելի  
է ասել թէ Առաջաւոր Ասիան աւելի կենդա-

նի է իւր անցեալով, քան թէ իւր ներկայ պատ-  
մութեամբ: Մինչեւ անգամ՝ Հիւանի պարիսպ-  
ն երում զջելիս մարդ կըկնում է Բարիլոնի ա-  
նունը, և բեդուինի թափառած անապատում  
մարդուս մտքին առաջ յարութիւն են առ-  
նում Մովսէսի և Մահմետի, Շամիրամի և  
Ալեքսանդրի մեծ կերպարանքները:

Ինակիչների թուով, որ յայտնի է մօտաւո-  
րապէս, Առաջաւոր Ասիան պակաս չէ ընկել,  
քան իւր քաղաքակրթութեան համեմատական  
կարեորութեամբ: Մեկրանի ափից մինչեւ Ա-  
նատոլիայի յունական ափը տարածուող Եր-  
կիրները իրենց ամբողջութեամբ ունին Եւրո-  
պայի մայր - ցամաքի Երեք քառորդին հաւասար  
տարածութիւն, բայց բնակիչ՝ հաւանականա-  
բար տամն անգամ պակաս \*), որ և ոչ միայն  
չէ աճում, այլև թւում է թէ պակասում է:  
Ի՞նչ է այս անկման պատճառը, որ այնչափ  
ճարտարախօս էջել զրել ներշնչեց պատմա-  
բաններին և բարոյագէտներին: Պէտք է ար-  
դեօք այդ վիճութել ներքին Երկպառակութիւն-

(\*) Ծանօթութիւնը տես միւս Երեսում:

ԳՐԱՄԱՐ. 6 969 525 բ. 21. 32290 000 բ. 4, 6 բ.

Ների - կոխվաների և ասպատակութեանց մէջ, որ  
այնչափ յաճախաւ աւերեցին այս երկիրները :  
Բայց Առտիղասից սկսած՝ քանի կոտորիչ բըռ-  
նականեր անցել են աւրոպան ամենայն ուղ-  
ղութեամբ, սակայն երկիրը նորից ծաղկել է,  
բնակիչները շատացել են աշխարհակալի անց-  
նելու ց յետոյ : Բայց պէտք է խոստովանիլ,  
որ Առաջաւոր Ասիայում քաղաքակրթութեան  
հողի շերտը համեմատաբար նեղ էր և աւելի  
ենթարկուած արշաւանքների, քան թէ մի-  
ջերկրական և ատլանդեան եւրոպայի երկիր-  
ները : Պարսկաստանի և Փոքր Ասիայի միջև  
մշակութեան և բնակչութեան գոտին մի նեղ  
պարանոց էր, նոյնպէս էլ Եգիպտոսի և Փոքր  
Ասիայի միջև : Ներքին երկպառակութեամբ  
հերձոտուած՝ Խրանի, Միջագետքի, Ասորիքի  
և Փոքր Ասիայի ժողովուրդները երկիւղ էին կրե-  
լունակ իրենց հիւսիսի և հարաւի դրացիներից,  
մի կողմից Արաբներից, միւս կողմից՝ ամեն լե-  
զուի և ամեն ցեղի ալտայ—ուրալեան թէ Մոն-  
գոլ և թէ Թուրքմէն թափառաշրջիկներից :  
Այս՝ անապատներին ապաստանած թրշնա-  
միներն անյաղթելի էին, որովհետև ան-  
ըմբռնելի էին, պասում էին յաջող դէպքի,

երեսում էին յանկարծակի, քաղաքները հիմ  
նայատակ տապալելու, ժողովուրդները ամբի  
քաշելու կամ գերի վարելու համար: Պատ  
մական աղարերի պղղնաւորութիւնից սկսած  
արդէն շատ անգամ արեւմտեան Ասիայի ինք-  
նաբոյս քաղաքակրթութիւնը պարբերաբար  
քաղուել, հնձուել է մարդերի խոտի նման: Իրա-  
նից արեւմուտք գոնուած ասիական երկիրնե-  
րին տիրող Թուրքերի նախահայրերը այս սար-  
սափելի աւելիչների ժւումն էին: Եւ որչափ  
սակաւաթիւ ցեղեր ունեցել են իրենց մէջ  
վերածնուելու ընդունակ տարրեր, որպէս զի  
ազգութիւն դառնան: Մեծամասնութիւնը մը-  
նացել է ամօթալի ստրկութեան մէջ և մոլո-  
րութիւնները ուրկութեան նման վարակել են  
այդ՝ առանց ազատութեան ժողովուրդներին:

Արեւմտեան Ասիայի բնակիչների նուազումը  
բացատրելու համար առաջ են բերել իրեւ-  
պատճառ նաև հացահատիկ արտադրող երկ-  
րի ուժասպառութիւնը: Հարց է թէ արդեօք  
Առաջաւոր Ասիայի հողը չէ կորցրել երկար  
մշակուելուց իւր մննդարար ուժը և թէ կա-  
րո՞ղ է արդեօք նա վերստին ստանալ իւր  
կորցրածը պան թէ դարեր շարունակ

անմշակ կմնար: Հաստատ է այն, որ բարձ-  
րաւանդակների և զառիվայրերի հողերը,  
որոնք չեն ենթարկում պարբերական յոր-  
դութեան, ծիգրիսի և Եփրատի ոռոգած դաշ-  
տերի նման, վերջ ի վերջոյ զրկում են իրենց  
տարրաբանական (քիմիական) բաղադրութիւն-  
նից և աստիճանաբար անբեր են դառնում:  
Նրանց յամառութեամբ մշակող երկրագործը,  
որի ստացած արդիւնքը յաճախ ուրիշներն են  
խում, ուշ թէ շուտ ստիպուած է լինում իւր  
ապարդիւն աշխատանքը դադարացնել, սովերն  
էլ գալիս են պարբերաբար, պատերազմների  
սկսած գործը շարունակելու համար: Մինչև  
խկ երբեմն ամենաօդտակար եղած ձեռակերտ-  
ները դարձել են ի վնաս մարդկանց: Քարքան-  
տուած շինութիւնները իրենց փլուածքներով  
ծածկել են գետինը և հողը կարմրացրել իրենց  
աղիւսների փոշով, խափանուած ջրանցքները  
փոել են իրենց կանդնած ջրերը դաշտերի վրայ:  
Մի կողմից անապատն է աճում մշակութեանց  
նուազմամբ, միւս կողմից ճահիճները՝ սփռելով  
հեռուն ջերմախտ և մահ: Պահանջման  
Պլչակ էլ որ մէծ լինի ասիական ժողովուրդների  
անկան պատմութեան մէջ այս երկու տարրի

արշաւանքների՝ պատերազմների և հողի ու-  
ժառագառութեանը ազդեցութիւնը, այսուամե-  
նայնիւ կայ և մի ուրիշ պատճառ այդ ազգերի  
պատմական դերի փոքրանալուն և այդ պատ-  
ճառն է երկիրների պատիճանաբար ցամա-  
քիլը: Առաջաւոր Ասիան թէ և ամեն հողմից  
Մջապատռած է ծովային ջրերով, սակայն ու-  
նիցամաքային կլիմայ, այնպէս՝ իբրև թէ շըր-  
ջապատռած լինէր ցամաքներով: Եւ իսկապէս  
հիւսիսային կիսագնութիւնուուրու հիւսիս  
արևելեան բեւեռային հողմիւ հոսանքը և  
անդրադարձ հոսանքը որ գալիս է հասարակա-  
ծից անցնելու են երկուսն էլ Հին Աշխարհի ամբ-  
բողջ կէսը, հազարաւոր քիլոմետր տարածու-  
թեամբ, առաջ քան միմեանց հանդիպելը իրա-  
նի բարձրաւանդակներում և Բարիլոնեան դաշ-  
տերում: Այս աշխարհագագաւառներում երկու  
հակադիր հողմերը երկրի ամենաչօրերիցն են:  
Նրանց ընթացքը Ասիայի և Աֆրիկէի միջով  
որոշում է Գորի և Սահարա անպատճերի  
լայն գծոտով: Արաբիան և Պարսկաստանն էլ,  
մասաւանդ առաջինը, ունին իրենց քարային և  
առաջուտ ամայութեանց մեծ բաժինը: Եթէ  
հողի ջերմութեամբ ծովից առաջացած մու-

սոնները (վեցամետայ պարբերական կանոնաւոր  
հողմերը) չբերէին իրենց հետ ջրի սակաւ քա-  
նակութիւն, որի մի մասն էլ մնումէ եզերական  
լեռներում, այն ժամանակ այս աշխարհները  
գլխովին անբնակելի կլինէին: Առաջաւոր Ա-  
սիայում այնպէս մեծ է վազող ջրերի պակա-  
սութիւնը, որ Արաբիան չունի և ոչ մի մնա-  
յուն մշտական գետ, իսկ Կարաչիից մինչև  
Թէհրան, ուղիղ գծով 1600 քիլոմետր տարա-  
ծութեան վրայ, մի ճանապարհորդ անցել է  
բոլոր գետերը, առանց որ նրանցից որևէ է մէ-  
կի ջուրը մինչև իւր ծնկները բարձրանար:  
Խնքնաբերաբար հարուստ բուսականութիւն  
ծնեցնելու համար բաւարար խոնաւութիւն  
կայ միմիայն Կասպիական և Սև ծովերի հարա-  
ւային ափերում, ուր հիւսիսի հողմերը անցնե-  
լու են նախապէս ծովային տարածութիւններ  
առաջ քան եզերքին գալնուիլը, և տեղ տեղ  
էլ Միջերկրականի ափերում, ուր խոնաւու-  
թեամբ ծանրաբեռնուած հողմերը հակում են  
դէպի ծովափիք: Հաւանական է որ ամբողջ Ա-  
ռաջաւոր Ասիան, որ տասն և հինգ անգամ  
մեծ է Ֆրանսիայից, ծովն է թափում իւր գե-  
տաբերաններով ջրի մի քանակութիւն, որ հա-

զիւ թէ շատ լինի ֆըրանսիական ոգետերի ծովը  
թափածից:

Հազարաւոր տարիներ առաջ, ինչպէս նաև  
մեր օրերում, կլիմայական ընդհանուր պայ-  
մաններ արդիլում էին Առաջային  
անձերեային ջրերի մեծ քանակութիւն ընդու-  
նել և նրա գետերը իրենց աւազանների համե-  
մատութեամբ շատ աւելի նուազ էին քան թէ  
արևմտեան Եւրոպայինը: Սակայն բազմաթիւ  
նշաններ թոյլ են տալիս հաւատալու, որ երկ-  
ըագնդի այս աշխարհները պյսուամենայնիւ  
աւելի լաւ էին ոռոգուած առաջ՝ քան թէ այժ-  
մս: Էին հեղինակների մեզ թողած նկաւ-  
ըագըութիւնները իրենց ամբողջութեամբ չեն  
տալիս մեզ հողի վազող ջրերով այդչափ մեծ  
աղքատութեան գաղափարը: Մինչև անգամ  
անապատի սահմանագծում՝ քարքարուաննե-  
րում և աւազուտներում ապօղ թափառա-  
շջիները մեր օրերում չեն համարիլ Քա-  
նանի հողերը «մեղք և կաթ բզիսող երկիր»:

Նախկին բերքի երկիները այժմ կորցրել  
են իրենց ծառերը, գաշտագետիները, մինչև

անդամ արօտներն եւ մացառները <sup>(1)</sup>: Ի՞նչպէս  
արդեօք Փոքր Ասիայում յոնիական ծովափի  
շահաստան քաղաքները կարողացան ստանալ  
այնպիսի մեծ կարևորութիւն, ի՞նչպէս արդեօք  
տեղական քաղաքակրթութիւնը կարողացաւ  
բարձրանալ փառահեղութեան այնպիսի վերին  
աստիճանի, եթէ եզերական նեղ գոտու եւ  
տեղ չկար, իբրև կենսական ուժերի շտե-  
մարան, բաւարար կերպով ոռոգուած տարած-  
ծութիւն, կերակրելու համար մեր օրերում  
եղածից անհամեմատ աւելի խիտ բնակիչներին:  
Անապատի քաղաքները՝ Պալմիրն ու Բաալբէքը,  
որոնց բնակիչները գանձել էին այնչափ հա-  
րըստութիւն, որ կանգնեցրին հոյակապ տա-  
ճարներ, որոնց աւերակներն անգամ հիաց-  
նում են մեզ, ի՞նչպէս կարողացան շինուել ա-  
մայութեանց մեջ, եթէ շըջապատուած չինէին  
աւելի ընդարձակ ովազիներով, որտեղից կա-  
րողանային, ստանալ անհրաժեշտ պարէն թէ  
բնակիչների և թէ բազմամբոխ օտարականնե-  
րի համար:

<sup>(1)</sup> 0. Fraas, Aus dem Orient; — Khanikov, Mémoire sur la partie méridionale de l'Asie Centrale.

Նորագ ոյն ճանապարհորդների Առաջաւոր Աւստրան Հետագութել սկսելուց իվեր յայտնուելէ, որ Ասիական Թուրքիայում Իրանում և Բալու ջիստանում կան բնդարձակ տարածութիւններ, որ երբեմն բազմամարդ են եղել իսկ այժմ դարձել են անապատ աւագով պաշարուած քաղաքները մասամբ նորից թաղուել են աւագի տակ, նախկին մշակութեանց հետքերը երևում են ժայռերի կողերում ուր այժմս ոչ մի ծիլ խոտ չի բռնիլ, երբեմն նաւարկելի գետերը չեն կարող նաւակ անդամ կրել, նախկին լճերի տեղը ճանաչումէ ճահիճներից, աղի նստած շերտերից և կամ կաւի փոռուածքներից<sup>1)</sup>:

Չնայելով Առաջաւոր Ասիայի հողի ցամաքելուն, չին Աշխարհի այս աշխարհագաղաւառը անկարելի է որ նորից չստանայ առաջին կարգի կարենորութիւն։ Այն աշխարհագրական դիրքը՝ որ երբեմն պատճառ եղաւ նրան քաղաքակրթութեան դունենալ գերակշռող մասնակցութիւն, կորցրեց իւր նշանակութիւն։

1) Gold smid;— Mac Gregor;— Griesbach;— O, Fraas; Blanford;— H. Rawlinson. — R. Burton;— Alf. von Kremer, Culturgeschichte des Orients,

նը, երբոր վաճառականական գլխաւոր ուղին ները շեղուեցին և ովկիանոսովն անցան, բայց ուղիղ գիծը նորից ձեռք է բերում իւր բոլոր արժեքը միջազգային յարաբերութեանց մէջ և Եւրոպայից Հնդկաստան գնացող մեծ ճաշ նապարհը ձգտում է հետզհետէ նորից անցնիլ Եփրատի հռվտով և Իրանի բարձրաւանդակը ներով, Արևմտեան Ասիան նորից ձեռք է բերելու բոլոր այն առաւելութիւնները, որ ունի նա իբրև չին Աշխարհի աշխարհագրական կեդրոն։ Երեք մայր ցամաքի՝ Եւրոպայի, Ասիայի և Աֆրիկէի կազմած անկանոն ձևի ճիշդ միջակէտը հեռու չէ այն դաշտերից, ուր Կանքանեցան Պարսկաստանի և Ասորեստանի հոչակաւոր քաղաքները. նա գտնեւում է Կասպից ծովի հարաւարեմտեան անկիւնում։ Բաշբելոնի աշտարակը հորիզոնի ամեն կողմերից իջնող ցեղերի կեդրոնական սահմանագլուխն էր, և ինչպէս աւանդութիւնն ասումէ, կանգնած էր երեք աշխարհի սահմանագծի վրայ. Արևելքում՝ անսահման Ասիան տարածւում էր հեռուն, մինչև Ովկիանոսը, ուր «արևն է ծնում»՝ հարաւում՝ այրուած Արաբիան կոյց էր տալիս Ափրիկէ մայրցամաքի մերձաւորուց

թիւնը, հիւսիս — արևմուտքում՝ Անտոռիան  
արդէն Եւրոպայի նախադուռն էր։ Սուեզի նեւ-  
զուցով, որ նրան բաժանում է Նդիպոսից,  
Առաջաւոր Ասիան նորից դարձաւ մայրցամաք-  
ների ծովային վաճառականութեան ծանրու-  
թեան կեդրոնը, իսկ ապագայ Երկաթուղիւ-  
ների միմեանց կտրելովը և խաչուելովը, ուշւ-  
թէ շուտ նա լինելու է խորից չին Աշխարհի  
կեդրոնական հրապարակը։ Ինչ վերաբերում է  
ժողովուրդների ճշգրիտ միջակէտին, դժուա-  
րին է գեռ ես այդ որոշել, մինչեւ իսկ մօտա-  
ւորապէս, որովհետեւ մի կողմէց Ափրիկէցիւ-  
ների թիւը, միւսից Զինացիներինը հաշուած են  
մեծ մասամբ ենթադրական վարկածներով։  
Ստիպուած ենք այս միջակէտը նշակակել հիմ-  
նուելով սովորապէս ընդունուած փաստերի  
վրայ)։ Այս առժամանակեայ հաւաստիքներին  
նայած, որ տարեցտարի ուղղում են, չին Աշ-  
խարհի բնակիչների կեդրոնավայրը ընկնելու է  
տիրետեան բարձրաւանդակի հարաւ արեւ-  
նատօնայու մոխամ մահամա նաու կա մաս ու

(1) Behm und Wagner, Bevölkerung der Erde, Ergänzungsheft, № 69, Mith. von Petermann.

մտեան մասում, այսինքն է, մի երկրում, որ  
ամբողջովին անապատ է։ բայց Եւրոպացիների  
արագ աճեցողութիւնը կամաց կամաց հաւա-  
սարակշռութեան միջակէտը բերելու է արեւ-  
մտեան ուղղութեամբ, դէպի չինդու և քուշի  
անցքերը, որ պայնչափ նշանաւոր են պատմու-  
թեան մէջ իբրև յարաբերութեան ճանապարհ  
արիական աշխարհի Երկու կիսի միջև։ Անկա-  
րելի է որ ժողովուրդների ցրուելու շարժողու-  
թեանը չյաջորդէ, իբրև բնական ձգողական  
երևոյթ, նրանց կեդրոնացման հակադարձ  
շարժումը։ Ցրումը առաջ եկաւ քաղաքակըր-  
թութեան դէպի Արևմուտքը ընթանալովը,  
բայց միջավայրերը փոփոխում են անդադար,  
եթէ ոչ ինքն ըստ ինքեան, գոնէ մարդու վրայ  
իրենց ունեցած ազդեցութեամբ։ իսկ մարդս  
ժամանակի հետ անդադար վերանորոգում և  
փոխակերպում է իւր շրջապատի հետ յարմա-  
րուելու ընդունակութիւնը։  
Անկասկած է որ Առաջաւոր Ասիայի արևու-  
մտեան աշխարհի հետ միացումը՝ կրթու-  
թեամբ, վաճառականութեամբ, արուեստների  
մշակութեամբ, մի երկար և ծանր գործէ։  
նոյնպէս կարծիք չի վերցնիլ, որ արևմտքից

Ներածուած նիւթականք քաղաքակրթութիւնը  
Արևելցիներից ստանալու է նրանց համեմարի  
դրոշմք, հանճար, որ արտաքուստ այնչափ ճկուն  
է երեռւմ, սակայն սաստիկ դիմացկուն է ներ-  
քուստ։ Ասխացին երբէք չի ընդունիլ ձառայա-  
բար օտարականի իրեն սովորեցրածը։ նա ա-  
սիացնում է ինչ բանի որ ձեռք է տալիս։)։  
Հնումը Յոյները և Հոռվմէացիք լաւ իմացան  
դառն փորձով թէ ի՞նչ է նշանակում արելցի  
ժողովուրդների շըջանում ապրել։ Ոչ թէ ի-  
րենք քաղաքակրթեցին արևելցիներին այլ  
ընդհակառակը, իրենք ընկան իրենց ապրած  
երկրի սովորութիւնների և կրօնների լծի տակ  
և նոյնը տարածեցին Արևմտքում։ Բայց մեր  
օրերում Ասիայի Յոյները, Հայերը և Ասորի-  
ները, ինչպէս և լինի նրանց ազգային բնաւո-  
րութեան ինքնուրոյնութիւնը, մտնում են հետ-  
զհետէ ժամանակակից գիտնական շարժման  
մէջ։ Նրանք աւելացնում են իրենց ձեռների-  
ցութիւնը գաղութների և օտար այցելուների  
գործնէութեանը և այսպիսով երկիրը կամաց

1) De Gobineau, Les Religions et les Philosophies dans l'Asie Centrale;—Trois ans en Asie.

կամաց կերպարանափոխուելով ափերից դէպի  
ներսերը, մտնում է եւրոպական ձգողութեան  
մէջ։ Դիտութեան գործադրութիւնը աշխարհի-  
բոլոր երկիրներում նոյն հետեանքն է ունե-  
նում։ Եւ որչափ անխնամ թողուած հարըս-  
տութեան աղբիւներ, որչափ առանց գործա-  
դրութեան գանձեր ունին այս երկիրները։  
Սիդինի և Տիւրոսի ժառանգորդները ի՞նչ մեծ  
հարստութիւններ կարող են ունենալ իրենց  
արամադրութեանը։ Թէև երկիրը նեղում  
է ջրի պակասութիւնից, և բաւական ջուր է լ  
կորցրել է գրաւոր պատմութեան սկզբնաւո-  
րութիւնից ի վեր, սակայն կան շատ վտակներ,  
որ կորչում են անապատում, կամ անօգուտ  
կերպով թափւում են ծովը և կամ Եփրատը։  
Նատ հեղեղներ են գոյանում լեռներում ժա-  
մանակաւորապէս և չկան ոռոգման ջրանցք-  
ներ կամ ազուգաներ այդ ջրերը ժողովելու  
համար։ Բերբի աշխարհներ, աւերուած պա-  
տերազմներով և թափուր մնացած բնակիչ-  
ներից կշննան խաղաղ վարչութեան  
տակ։ Դէպի արևելք ընթացող քաղաքակրթիչ  
տեղատութեան շարժումը, որ կապեց Հուն-  
գարիան, Դանուբի Տէրութիւնները, Յունա-

տանը, Առուսաստանը՝ եւրդպական կըթութեան  
և արուեստագիտական աշխատանքի աշխարհ  
հին հետո, և որ արդէն Առաջաւորը Ասիայում  
կերպարանափոխել է բազմաթիւ ուղղունական  
և ասորական քաղաքների տեսքը, ո շարունա-  
կուելու է դէպի Եփրատ և դէպի Իրանի քարձ-  
րաւանդակը: Այս միտու դժմուր մասնաւոյ  
Արևելքի տիրապետութիւնը՝ եւրոպական  
ազգերից արդէն մի անդամ փորձուեց խաչա-  
կիրների ժամանակ: Մօտ երկու հարիւր տարի  
շարունակ, տասներորդ դարի վերջեց մինչեւ  
տասներկուերորդ դարի վերջը, երբ Արևեմուտ-  
քի կաթոլիկ ժողովուրդները և իսլամ դար-  
ձած Թուրքերը իրենց հաւատքի բոլոր ջերմե-  
ռանդութեան մէջն էին և երբ Արևելքի թան-  
կագին ձեռակերտները՝ մետաքս, թաւիշ, մուս-  
լին, զէնքեր, բանուած մետաղներ թւում էին  
Արևեմուտքի շացած կիսաբարեարուներին իբրև  
ամենացանկալի դանձ, գաղթականութեան  
մի դրեթէ անընդհատ շարժումն ակսուեց,  
Եւրոպայից դէպի Ասիա: Հարիւր հազարաւոր  
մարդիկ կորան կոփուներում, որոնց մէջ կըօ-  
նական ջերմեռանդութիւնից աւելի մեծ մա-  
սրն ունէին տիրապետութան սէրը և աւար-

ձեռք բերելու ագահութիւնը: Միլիոնաւոր  
պատերազմողներ, գերիներ, աղախիններ ոչնչա-  
ցան բանակներում և ճանապարհներին, և  
սակայն, երկու դար կոտորածից և ժանտախ-  
տից յետոյ էլ, խաչակիրները ստիպուեցան  
թողնել Արևելքը, առանց կարողանալու գոնէ  
միայն մի բերդ պահպանել հաստատուն ցամա-  
քի վրայ: Սակայն Արևեմուտքի ճնշումը Արև-  
ելքի վրայ իբրև հետեանք ունեցաւ Բիւ-  
զանդական կայսերութեան տեղութիւնը  
երկարացնել, և ոսկովից շատ հեռու տանե-  
լով երկու ոսոխ կըօնների կռուի թէատրո-  
նը: Բացի այս, չնայած եւրոպական բանակ-  
ների պարտութեանը՝ այդ ազգերի ընդհաւ-  
րումը մատեցը միմեանց վաճառ ականու-  
թեամբ Միջերկրականի խաչի և մահիկի ժո-  
ղովուրդներին: Խտալացի վաճառականները սո-  
վորեցին յաճախել Առաջաւոր Ասիայի բոլոր  
ճանապարհները, և կամաց կամաց ձեռք բերին  
նրանք խաղաղ տուրեառով աւելի մեծ հարըս-  
տութիւն, քան թէ ասպետները իրենց սրով:  
Անշուշտ Եւրոպայի քաղաքական ազդեցու-  
թիւնը աճելու էր ստուգութեամբ Արևելեան  
աշխարհում, չնայած կոստանդնուպոլսի ան-

կույին, եթէ Ափրիկէի շըջագնաց նաւարկութիւնը և մանաւանդ նոր Աշխարհի գիւտը չեղէին գործառնութեանց հոսանքը և իտալիայի վաճառական գերիշխանութիւնը իբերական թերակղու ազգերին չտային։ Այսպէս՝ մի թումբի յանկարծակի քանդուիլը փոխում է յորդացած ջրերի ուղղութիւնը։ Կոլոմբոսի գիւտերը հարկադրեցին Եւրոպային, այսպէս ասած, թիկնադարձ լինել, որով Արևելքի ժողովուրդները օգտուեցան, ձեռք բերելով երեք հարիւր տարուայ զինադուլ, այս՝ մայրցամաքից մայրցամաք տրուած ժառանգական պատերազմում, որ սկսուած է գեռ առասպելախառն ժամանակներից Արգոնաւրդների արշաւանքով և Տրոյական պատերազմով։

Ներկայումս Արևմուտքի ճնշումը զգացւում է անհամեմատ աւելի ուժգնութեամբ, քան երբ և իցէ, սակայն առանց որ կրօնական ջերմեռանդութիւնը, ինչպէս նաև Պետրոս Անապատականի կամ Գոտիէ Անինչի (Gautier Sans -Avoir) ժամանակ, ունենայ որ և է կար եղրութիւն «Արևելեան խնդրում»։ այդ ջերմեռանդութիւնը կարող է լինել միայն իբրև պատրուակ։ Եթէ արևմտեան Եւրոպայի ազ-

գերը ուզենային տիրել Սուրբ Գերեզմանին, բաւական էր նրանց այդ ցանկանալ միայն։ Միակ գժուարութիւնը կլինէր պահապաններ նշանակելը և եթէ մուսուլմանները դեռ տէր են մնում, կամ աւելի շուտ պահապան Ա. Գերեզմանին, այդ միայն խաղաղութիւնը պահպանելու համար է՝ նախանձաւոր Բողոքականների, Հռովմէական կաթոլիկների և Յունադաւանների միջև, որոնք վիճում են գերեզմանին տիրելու համար։ Ինչ վերաբերում է բուն տիրապետութեանը, եւրոպական Տէրութիւնները հաւասարակշռութիւն են պահպանում, որպէս զի արգիլեն իրենցից մէկին կամ միւսին աւելի մեծ մաս խլելու վիճելի երկիրներից։ Տիրապետութիւնը ուշացնող և նրանից առաջընթաց է բուն միացումը Եւրոպայի հետ՝ աշխատանքի և շահերի ընդհանրութեամբ։ Այսուամենային մահմետական աշխարհի բաժանումն արդէն սկսուած է, ոչ միայն Եւրոպական Թուրքիայում, այլ և ամբողջ Առաջաւոր Ասիայում։ Բուսաստանը չբաւականանալով անդրկովկասեան Ռիոնի և Կուրի հովիտներին տիրելով, խլեց նաև Հայաստանի լեռների ամենահարկու բերդերը և բոնել է այն

անցքերը, որով կարող է ուզածին պէս մղել  
իւր բանակները Կոստանդնուպոլիսի, Հալէպի  
կամ Բաղդադի վրայ: Կասպիականի միւս առ  
փում Ռուսները Նմանապէս տիրել են զանա-  
զան դիրքերի, որտեղից դիւրին կլինի նրանց  
յարձակուել Պարսկաստանի կենսական գա-  
ւառների վրայ, իսկ Թուրքմէնների ովազիսնե-  
րի տիրապետութեամբ՝ նրանք Հնդկաստանի  
ճանապարհի դրանն են, Հերի — ըուղի Հովի-  
տով: Անգլիացինները, Ասիայի քաղաքական  
հեգեմոնիայի ինչը ուղարկելով ախոյեաննե-  
րը, իբրև գրաւական առնելով՝ հաստատուե-  
ցին արեւելեան Միջերկրականի մի անկիւնում՝  
Կիպրոս կղզում, որ իշխում է միանգամայն  
թէ Փոքր Ասիայի հարաւային եզերքին և թէ  
Ասորիքին, ոչ հեռու Եփրատի մեծ արմուկից  
և Հայաստանի՝ Ռուսների առաջխաղացու-  
թեամբ վտանգուած գաւառներից: Արաբա-  
կան ծոցի մուտքում, շոգեշարժ նաւարկու-  
թեան մեծ ճանապարհի վրայ, նրանք ունին  
նաև Աղենի նաւահանգիստը, և ցեղապետնե-  
րին ցրուելով քիչ թէ շատ դրամական նպաստ  
նրանց կառավարութիւնը գերիշան է դարձել  
գրեթէ եզերական ամբողջ բնակիչների վրայ:

Այս ամենը չէ: Պարսկաստանի, Անատոլիայի,  
իրաք Արաբիի ներսի շատ քաղաքներում բրի-  
տանական հիւպատները աւելի տէր են, քան  
թէ տեղական նահանգապետները, և այդ հիւ-  
պատների — կոնսուլների հրատէրները համա-  
զօր են հրամանների: Ասորիքի լեռներում,  
Դրոզների և Մարոնիների մօտ, իսկական  
գերիշխանութիւնը շատ անգամ վերադրուել  
է ֆրանսիային, շատ անգամ էլ վէճի է ենթար-  
կուել, նայելով քաղաքական տատանումներին:  
Նմանապէս Երուսաղէմն էլ գտնուում է՝ դես-  
պանների միջոցով, բոլոր եւրոպական Տէրու-  
թիւնների իշխանութեան տակ: Այդ Տէրու-  
թիւններից Երբեմն մէկն է ունենում գերա-  
կըշող ձայն, երբեմն միւսը, նայած Ոսկեղ-  
ջերում փչող քամու ուղղութեանը:

Պալեստինում ծնունդ առած երկու կրօն՝  
Հրէութիւնն և քրիստոնէութիւնը Առաջաւոր  
Ասիայում ունին համեմատաբար շատ փոք-  
րաթիւ հասարակութիւն: Հրէանները մեծ խըմ-  
բաթիւ բնակւում են միայն Երուսաղէմում և  
ըստ ցակայ հողերի մի քանի քաղաքներում:  
Քրիստոնեանները նոյնպէս ջերմեռանդն եկեղե-  
ցիններով խմբուած են Սուրբ Գեղեղմանի և

ուրիշ սրբավայրերի շուրջը: Ուրիշ կողմերում քրիստոնեայ կայ միայն Փոքր Ասիայի հելլենական նահանգներում, մէկ էլ՝ Արքանանում: Ասիական Թուրքիայի բնակիչների ամենամեծ մասը և Առաջաւոր Ասիայի միւս աշխարհների բնակչութեան ամբողջութիւնը պատկանում են Խոլամին: Արաբիան, ուր գտնւում են մահմետականութեան սուրբ քաղաքները և որտեղից հաւատը ծաւալել է մնացեալ աշխարհում, դեռ այժմն էլ է այդ կրօնի իսկական կեդրոնավայրը և այդտեղ են ապրում նրա ամենաջերմեռանդն առաքեալները: Իսյօ որչափ էլ որ ջերմն լինի այս մի քանի երկիրներում մուտումանական հաւատը, այսուամենայնիւ մայրցամաքի այս մասում այդ կրօնի միութիւնը բնաւ չէ տալիս իւր հաւատացեալներին քաղաքական յարակցութիւն — ամբողջութիւն: Համիլամական դաշնակցութիւնը, որի մասին յաճախ խօսւում է, երկիւղալի չէ ամենեին՝ Արևելքի տիրապետութեան համար վիճող Եւրոպական տէրութեանց համար: Նախ և առաջ Վահաբիների ջերմեռանդն աղանդը, որ խզմորէն և խստութեամբ կատարում է մարգարէի պատուէրները, չունի բնաւ թուաւ

կան կարեռութիւն, բացի թերեւս Արաբիայի խորքերից, ուր նա ուղղակի շփումն չունի օտարականների հետ: Մահմետական Ասիայի ամենամեծ մասը, մի կողմից՝ Թուրքիան, միւսից՝ Պարսկաստանը տարանջատուած են Սիւննիներով և Եիաներով, որ փոխադարձաբար միմեանց ատելով ատում են: Եատ նահանգներում գիտուրը չէ համարում այնչափ պիղծ, որչափ հակառակ աղանդի մուսուլմանը: Ուրիշ երկիրներում՝ անտարբերութիւնն ընդհանուր է. Բեղուինների մեծամասնութիւնը երբէք մի այլ աստուածութիւն չէ ճանաչել բացի իրենց նիզակից, մինչև անգամ պատահացի իրենց նիզակից, մինչև անգամ պատահացի իրենց վրայ են տուել Մեքքայից վերադարձող ուխտաւորներին: Վերջապէս՝ Թուրքերի մեծ մասը կորցրել է հաւատի ներգործական գօրութիւնը: Ուժասպառ հաւատքը դարձել է մուայի ճակատագրութիւն — ֆատալիզմ, որ մահուան նախերգանքն է: Եթէ մահմետականի քրիստոնեայ դառնալը գրեթէ չտեսնուած բան է, այդ չպէտք է վերագրել նրանց համոզման դիմադրական ուժին, այլ այդ ծագում է երկարատև ոսոխութիւնից, ցեղից ցեղ փոխադարձաբար աւանդական ա-

տելութիւնից և ոխից, և այն հազարաւոր տարբերութիւններից, որ կան բարքի և մը-տածման եղանակի մէջ։ Ամենաանտարբերները ամենաըմբռստներն են քրիստոնեայ դառնաւլում։ Ի՞նչ փաստ կարող են բերել քրիստոնեաները, որ նրանց աւելի պինտ չկապէ իրենց նախ-նեաց հաւատքին հետ։

Սակայն Առաջաւոր Ասիայի բնակիչները թէ և ունենան էլ իրենց ամբողջութեամբ աւելի մեծ ջերմեռանդութիւն, աւելի սերտ բարոյական յարակցութիւն, այսուամենայնիւ նրանց բնակած երկիրների աշխարհագրական հանդա-մանքները թոյլ չեն տալիս նրանց յաջողու-թեամբ դիմադրելու եւրոպական Տէրութեանց մի հաւաքական պատերազմով։ Լայնածաւալ անապատներ, անջրդի տարածութիւններ բա-ժանում են Ասիայի նահանգները առանձին աշխարհների, առանց հաղորդակցութեան մէ-կը միւսի հետ, իսկ արտաքին, ծովային մեծ ճանապարհը արեւմտեան նաւատորմիջների Ճեռքումն է։ Ծովափի խորին կտրուածքները կը կնակի բաժանում են բնակիչներին, թոյլ տալով եւրոպական նաւերին հեռաւոր տա-րածութեամբ երկրի ներսերը թափանցել։

Մինչեւ անգամ իւր գլխաւոր երկու գետով, Եփրատ և Տիգրիսով, Առաջաւոր Ասիան, այսպէս ասած, երկուսի է կտրուած ուազմա-գիտական տեսակէտից։ գետային նաւարկու-թեան գլխից մինչեւ ոռւսական Կովկասը մու-սուլմանական Ասիայի երկու բաժնի միջև մը-նում է միմիայն լեռնային երկիրների մի նեղ պարանոց։ Քաղաքականապէս համիսամակա-նութիւնը շատ աւելի անվտանգ է իւր որրա-նում։ քան թէ արեւելքում՝ Հնդկաստանում, ուր քառասուն և ութ միլիոն մուսուլման միացած են լնդհանուր կրօնով, հայրենասի-րական շահերով, — և քան թէ Ասիրիկէի մայր-ցամաքում, ուր ահագին բազմութիւններ, որոնց թիւը դեռ անծանօթ է, ունին այն ուժը, որ տալիս է աշխարհագրական համախմբու-թիւնը և մանաւանդ՝ այն աւելի ևս մեծ ուժը, որով ներշնչում են նրանք կրօնի ծա-ւալման նախանձայուզութեամբ։

---

ԲԱԼՈՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- |    |                      |         |
|----|----------------------|---------|
| 1. | ՈՒԽԱԿՄՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԱՄ |         |
|    | ԱՐԱՔՍԻ ԱԽԱԶԱՆՔ . . . | 1— 82   |
| 2. | ՈՒՐՄԻԱ ԼԻՁ . . . .   | 83—100  |
| 3. | ԱՌԱՋԱԻՐ ԿԱՄ ՑԱՌԱՋԱ-  |         |
|    | ԿՈՂՄԱՆ ԱՍԻՍ. . . .   | 101—149 |

## ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աբին 9·  
Աբուլ 3·  
Ագուլս 79· 81·  
Ադեն 126· 144·  
Աղիազ կամ Ասիա 117·  
Ալեքսանդրապոլ 18· 30·  
63· 70· 71· 81· 82·  
Ալպեր 11· 28· 106·  
Ալփ-Արուլսն 63·  
Ախալքալաք 20·  
Ախտազ 11·  
Ախուրեան կամ Արփա-  
չայ 4· 18· 30· 36· 63-65·  
Ակկադ 104·  
Ակոռի կամ Արկոռուի  
16· 17·  
Ալեքսանդր մակեդոնացի  
31· 125·  
Աղըր-Դաղ կամ Ադրի-  
դաղ 8·  
Աղուանիստան 86· 103·  
126·  
Աղ-Ջուր կամ Տուղլասուն 4·  
Ամանոր 50·  
Ամուրատ Գ· 61·  
Այլըր-Դեօլ 19·  
Այսուցել 109·  
Անահիտ 68·  
Անատոլիա 48· 117· 125·  
136· 145·  
Անաքսիմանդր 116·  
Անդորր 103·  
Անդր-Կովկաս 2· 3· 29·  
30· 42· 43· 49· 52· 57·  
Անհ 63-65·  
Անիբաշ կամ Հաննիբաշ  
73·  
Անտիոք 124·  
Անտիքոս 73·  
Առան կամ Առաան 26·  
Առաջաւոր կամ Յառա-  
ջակողման Ասիա 32· 93·  
101-149·  
Առասբար 31·  
Ասիա 42· 48· 102-105·  
108· 110· 111· 115· 117·  
128· 130· 135· 140· 144·  
147-149·

Ասորեստան 135.  
 Ասորիք 105, 108, 110,  
 112, 113, 127, 144, 145.  
 Աստղիկ 72.  
 Ատտիլաս 127.  
 Ատրպատական 97.  
 Արաբական ծոց 144.  
 Արաբիա 106—108, 126,  
 130, 131, 135, 146, 147.  
 Արաբներ 127.  
 Արագած կամ Ալագեազ  
 1, 17—19, 24, 30, 33,  
 57, 63, 65.  
 Արամանեակիսօսիներ 68.  
 Արարատ (ամսադիր) 60.  
 Արարատ սար (մեծ և  
 փոքր), տե՛ս և Մասիս 1,  
 2, 7—9, 12—17, 19, 38,  
 39, 51, 57, 65, 71, 74,  
 75, 89, 119.  
 Արաքս 1—82.  
 Արգոնաւորդներ 111, 142.  
 Արեգ քաղաք կամ Բա-  
 ալբէք 124, 133.  
 Արևելք 109, 120, 124,  
 140—142, 146.  
 Արեւմուտք 101, 111.

113, 115, 124, 137, 138,  
 140—142.  
 Արիստագորաս 116.  
 Արխիպելակ 107, 111.  
 Արկուռի, տե՛ս Ակոռի.  
 Արմաւիր 19, 66, 68.  
 Արմէնիա 38.  
 Արքէնքն 38.  
 Արմէնիստան 88.  
 Արտաշատ (Արտաքսա-  
 տէս) 73, 74.  
 Արտաշէս (Արտաքսիաս  
 73.  
 Արտեմիս 68.  
 Արտիմէդ 68.  
 Արփաչայ, տե՛ս Ախու-  
 րեան.  
 Ափրիկէ 85, 104, 113,  
 130, 135, 142, 149.  
 Բաալբէք, տե՛ս Արեգ.  
 Բաբել 104.  
 Բաբերդ 82.  
 Բաբիլոն 42, 108, 125,  
 135.  
 Բագարան 65.  
 Բագրատունի 44, 63.

Բագէհ, Սիմոն (Տողմ) 85.  
 Բաթու-Խան 63.  
 Բալկան Լեռներ 106.  
 Բալուջիստան 126, 134.  
 Բակտրիա 101.  
 Բաղդադ 144.  
 Բաղէշ 82.  
 Բաղր կամ Բաղաց գա-  
 ւառ 29.  
 Բամբակի Լեռներ 20.  
 Բայազիդ (Նոր) 4, 9, 16,  
 72, 81.  
 Բայրոն 55.  
 Բանդար-Արաս 85.  
 Բանդ-Էմիր 88.  
 Բարգուշատ 27, 31, 80.  
 Բարդող կամ Թէքէլ-  
 Բու 4.  
 Բարեյուսոյ Հրուանդան 7.  
 Բեդուիններ 147.  
 Բեսսարաբիա 106.  
 Բերինդիսան Նեղուց 7.  
 Բերլին 2, 40.  
 Բիւզանդական կայսերու-  
 թիւն 141.  
 Բիւրակնեան կամ Բիւ-  
 կաձոր 72.

Գեօլ Լեռներ 29.  
 Բոշաներ 57.  
 Բուսինդոյ 97.  
 Բուքովին 42, 46.  
 Բրիտանական կղղիներ  
 111.  
 Գալիցիա 42.  
 Գառնի (Բաշ) 72, 73.  
 Գեղարդ կամ Այրի-  
 վանք 73.  
 Գեօկ-չայ 11, 21, 23, 26,  
 27, 30, 57, 70, 71.  
 Գէմիշ 26.  
 Գիւմրի 63.  
 Գորի 130.  
 Գոտիէ Անինչ (Gautier  
 Sans-Avoir) 142.  
 Գորիս կամ Գերուսի 80,  
 81.  
 Գրիգոր Լուսաւորիչ 49,  
 51, 68.  
 Գամասկոս 124.  
 Գանուր 106, 139.  
 Գարաշչակ կամ Թաղ-  
 կաձոր 72.

Դարդանէլ 106.  
Դարիաչա, տե՛ս Ուրմիա  
լիճ.  
Դաւիթ 44, 99.  
Դել-Բովէ 14.  
Դեմաւընդ 102.  
Դեմետր 120.  
Դիագին 2.  
Դիլիջան 71.  
Դինկերլսան 93.  
Դիրի-դաղ 31.  
Դիւրուա, դը Մռնպէրէ 66.  
Դիւլորիէ 41, 58.  
Դոդոնա 68.  
Դրուզներ 145.  
Եղէեան ծով 107, 117.  
Եղիպատիք 113.  
Եղիպտոս 101, 103, 112,  
127, 136.  
Եղիդիներ կամ Եղի-  
դիներ 57.  
Եթովպացիք 109.  
Երզնկան 82.  
Երեւան 4, 6, 9, 16, 18,  
20, 25, 30, 32—34, 67.

70, 72, 79, 82.  
Երուանդ բ. 65, 66.  
Երուանդակերտ 65.  
Երուանդաշատ 65.  
Երուսաղէմ 145.  
Եւսերիսու 55.  
Եւրոպա 11, 28, 48, 55,  
60, 89, 101, 102, 105,  
106, 111, 112, 118,  
123-125, 127, 132, 135,  
136, 140—143.  
Եւրոպական Ուռչսաստան  
41.  
Եւքսինեան պոնտոս (տե՛ս  
նաև Աւ ծով) 106, 107,  
117.  
Եփրատ 2, 3, 7, 8, 30,  
38, 40, 49, 62, 102, 105,  
110, 119, 124, 129, 135,  
139, 140, 144, 149.  
Զանդաղոս 27, 57, 80, 81.  
Զանդի կամ Հրազդան  
21, 70.  
Զէշէնդ կամ Սոհունդ  
88.  
Զինդան -ի - Սուլէյման

կամ Սողոմոնի Զնդան  
100.  
Զրադաշտ 50, 51.  
Էդնա 10.  
Էլլորուս 11.  
Էլիզէ Ռէկլիւ 58, 59.  
Էշակ-մէյդան 20.  
Էշերի Կղղի 90.  
Էջմիածին 2, 9, 36, 46,  
48, 51, 67—69, 74.  
Էրզրում 29, 82.  
Թաթարներ 1, 21, 36,  
37, 40, 46 . . .  
Թալէս 116.  
Թալիշ 65.  
Թարթառ 26.  
Թաւրիզ 95.  
Թէհրան 131.  
Թիֆլիզ 6, 20, 32, 33,  
42, 48, 70, 71, 79.  
Թողաթ 82.  
Թուրքան 104, 109.  
Թուրքանցիներ 110,  
118 . . .  
Թուրքեստան 85, 126.

Թուրքեր 8, 29, 39,  
52, 53, 128 . . .  
Թուրքիա 1, 40, 41, 49,  
57, 58, 126, 134, 143,  
146, 147.  
Թուրք մէններ 109,  
127 . . .  
Ժընէւի լիճ կամ Լեման  
22, 89.  
Իբերական թերակղղի 142.  
Իգդիր 82.  
Իլիոն (Եղիոն) 124.  
Ինդոս 103, 104.  
Իշկիլի կամ Քաչալ-դաղ  
27.  
Իսրայէլ 123.  
Իտալիա 142.  
Իրան 1, 88, 102, 104,  
108—110, 119, 127,  
128, 130, 134, 135, 140.  
Իրաք-Արաքի 145.  
Լանկիթամուր 47, 61.  
Լեհաստան 42, 64.  
Լեման, տե՛ս Ժընէւի լիճ.  
Լիբանան 146.

- Լիդյ 48.  
Լոնդոն 42.  
Լուս կամ Առվտի անապատ 83, 85.  
Խանիկով 83, 85.  
Խափշի կներ 109 . . .  
Խնձորեսկ կամ Խնզիրակ 80, 82.  
Խնուս 82.  
Խորասան 85.  
Խորենացի 26, 68, 72 88.  
Խոսրովիդուխտ 72.  
Խոցկոյ 10.  
Խուղաքերին 31.  
Խրիմ 64.  
Կաղզուան 60, 81, 82.  
Կապուտան 21.  
Կապսիր 103.  
Կասպից կամ Կասպիական ծով 1, 31, 107, 131, 135, 144.  
Կարա-կալա կամ Ակերգ 66.  
Կարաչի 131.  
Կարմիր կամ Կըզըւսար 3.
- Կարմիր ծով 107, 110, 107, 111, 143, 144.  
Կարսատ Լեռներ 106.  
Կարս 3, 40, 61—63, 81, 82.  
Կարսի դետ 62.  
Կափուջիշ 26, 27.  
Կիպրոս 107, 117, 126, 144.  
Կիւննինդամ 37.  
Կոլոմբոս 142.  
Կոհ-ի-Նուհ (Արարատ) 8.  
Կողբ 4—6, 76, 82.  
Կոստանդնուպոլիս 42, 48, 51, 52, 141, 144.  
Կովկաս 3, 11, 19, 20, 38, 41, 64, 101, 107, 112, 117, 119, 126, 149.  
Կորբուլոն 74.  
Կուր 1, 31, 32, 38, 40, 57, 70, 72, 143.  
Հալէպ 144.  
Հալիկանաս 116.  
Հայաստան 1, 7, 12, 13, 25, 26, 34, 36, 38, 39, 41, 44, 45, 47, 49, 60, 61, 63, 68, 69, 70, 72.

- 73, 75—78, 82, 102, 107, 111, 143, 144.  
Հայկ 44.  
Հայկական կամ Ալեքսանդրեալի ծոց 108.  
Հասան-Դալա 82.  
Հաքար 27, 80.  
Հաֆիլ 87.  
Հեղարէ ցեղ 109.  
Հելլեներ 102, 112 . . .  
Հեկատէ 116.  
Հերի-բուդ 144.  
Հերոդոսոս 42, 103, 116, 117.  
Հերքեւլէս 114.  
Հիլահ 125.  
Հին-Աշխարհ 7, 105, 108, 111, 130, 134—136.  
Հինդու-քուշ 101, 109, 137.  
Հնդկական Կովկաս 102.  
Հնդկական ովկինոս 105, 106.  
Հնդկաստան 111, 135, 144, 149.  
Հումբուլս 97.  
Հունդարիս 139.
- Հռովմ 67.  
Հրազդան, տե՛ս Զանդի.  
Հիերի կղզի 90.  
Գաղան-գեօլ-գալ 26.  
Գաղար (Ս.) 48.  
Գարաբաղ 25, 28—30, 43, 53, 76, 78.  
Գովտի կամ Լուտի անապատ 83, 85.  
Ճենք 44 . . .  
Ճորիս 40.  
Մազանդարան 85.  
Մաժեոռ լիճ 97.  
Մահոմէտ 125.  
Մամախաթուն 82.  
Մամիկոնեան 44.  
Մասիս (մեծ և փոքր)  
տե՛ս Նաև Արարատ 7, 9,  
10, 12, 14, 17, 18, 24, 102.  
Մարաղա 88.  
Մարսնիներ 145 . . .  
Մարք 104.  
Մելազկերս 82.

- Մեկրան 106, 125.  
Մեղի 78.  
Մշշետ 85.  
Մեքքա 147.  
Միւլետ 116.  
Միշը 51.  
Միջագետք 108, 111, 127.  
Միջերկրական ծով 33,  
91, 101, 104—108, 111,  
112, 115, 131, 141, 144.  
Միկթար 48.  
Միկթարեանք 49, 55, 69.  
Մուկոկաններ 71.  
Մուկուլներ 63, 109,  
127 . . .  
Մոնջիբելլյ 14.  
Մոնտէթ 89.  
Մոռիէ 10.  
Մոսկուա 48.  
Մովսէս 125.  
Մուշ 82.  
Մուրատ կամ Արևելեան  
Եփրատ կամ Արածանի  
39.  
Մուբաւիով 61.  
Յաբէթ կամ Յափէտ 103.
- Յակովիի (Ս.) սառցա-  
րան 13.  
Յակովիի (Ս.) վանք 16.  
Յիսուս 49.  
Յոնիա 102, 111.  
Յովիր 67.  
Յունատան 107, 122,  
139.  
Նագիբ-Ծահ 79.  
Նախիջևան կամ Նախ-  
աւան, Նաքսուանա 9,  
16, 74—77, 81.  
Ներովթ կամ Ներուդ  
110.  
Նեղոս 102, 103, 105,  
124.  
Ներսն 74.  
Ներսնիա 74.  
Նիզիր 102.  
Նիկիա 123.  
Նինուէ 110.  
Նոյ 6, 8, 16, 75.  
Նոր-Աշխարհ 102, 142.  
Նոր մանգներ 45 . . .  
Նուր կամ Նոյի-սար 103.  
Նարին-Կարս-Հիսար 82.

- Ծահ-Աբբաս 77.  
Ծահ-ի-կուչ կամ Ծահի-  
սար 95.  
Ծամիրամ 125.  
Ծանխայ 42.  
Ծապուչ Բ. 74.  
Ծարդէն 21, 68.  
Ծիրուան 46.  
Ծուշի 27, 80.  
Ծօշաստան կամ Սուզիան  
109.  
Ոլիմոս 8, 102, 121.  
Ոչխարների կղզի 90.  
Ոսկեբերան 55.  
Ոսկեղիներ 145.  
Ուրալ - ալտայ եան  
ցեղեր 109, 127.  
Ուրմիա լիճ 39, 83—100,  
107.  
Ուրմիա կամ Որմի քա-  
ղաք 89, 95.  
Զինաստան 5, 45.  
Զինկիլ 4.  
Զլոր 3.  
Պալմիր 124, 133.  
Պաղէստին 44, 108, 145.  
(Հին) 77, 78.
- Պասկեիչ 61.  
Պարիզ 48.  
Պարսեր 104 . . .  
Պարսիկներ 25, 35,  
44 . . .  
Պարսից կամ Պարսկական  
ծոց 106, 108.  
Պարսկաստան 39—41, 57,  
77, 83, 85, 86, 88, 89.  
Պոշաստան կամ Սուզիան  
135, 144, 145, 147.  
Պարուս 10, 12.  
Պետերբուրգ 22, 52.  
Պետրոս Անապատական  
142.  
Պերսեպոլիս 88.  
Պիրենեանլեռներ 12, 13.  
Պիրէնէ 103.  
Պոմպէոս 31.  
Պտղոմէոս 75.  
Պրոպոնտիդ (Առաջածով)  
107.  
Պողոս Առաքեալ 122.  
Զաղոս 98.  
Զաղատու 98.  
Զուղա կամ Զուլֆա

Զուղա կամ Զուլֆա  
 (նոր) 78.  
 Զումշուդ կամ Զէմշիդ  
 95.  
 Բարդէ Գուստավ 76.  
 Բանի 25.  
 Բաւէնստայն 41.  
 Բէյնեգս 17.  
 Բիդէր 104.  
 Բիոն 53, 143.  
 Բոստոմ կամ Բուստոմ  
 95.  
 Բուսաստան 2, 42, 58,  
 60, 140, 143.  
 Ապէհ 87.  
 Ամբաստ կամ Աելմաս 93.  
 Ամշարա 85, 130.  
 Ամմոյ եղներ 120...  
 Ամմոս 126.  
 Ամմար 3.  
 Ամեն-Ստեփանյշ 2, 40.  
 Ամսանեան դրամներ 23.  
 Ամրդարապատ 36.  
 Ամրի-Դամիշ 82.  
 Ամրուկ 98.

Սաւալան 11.  
 Սելջուքներ 63.  
 Սեմ 103.  
 Սեմականներ 110...  
 Սեմենովկա 71, 72.  
 Սեւան 1, 20, 21, 24,  
 57, 72.  
 Սեւծով 2, 21, 105, 117,  
 123, 131.  
 Սեւջուր 19, 66.  
 Սիահ-Փոշ 103.  
 Սիդոն 115, 139.  
 Սինա 107.  
 Սինդապուր 42.  
 Սլաւներ 54.  
 Սկիւթիա 101.  
 Սողանի 3.  
 Սողոմոն 100.  
 Սողոմոնի գահ կամ  
 Թաղթի-Սուլեյման 83,  
 99, 103.  
 Սոմիթ 20, 45.  
 Սուազ 82.  
 Սուել 105, 136.  
 Սումեր 104.  
 Սպահան 78.  
 Ստրաբոն 32.

Վագներ 12, 14, 90.  
 Վալենցիա 97.  
 Վահարշապատ 67, 74, 82,  
 Վան 82.  
 Վանայ լիճ կամ ծով 39,  
 107.  
 Վանայ երկիր 46.  
 Վառէգներ 45.  
 Վենետիկ 48, 49, 55, 69.  
 Վենուս 68.  
 Վիէննա 48.  
 Վոսփոր 106, 141.  
 Վուլկան 121.  
 Վրաստան 42, 44, 60.  
 Վրացիք 1, 26, 52,  
 53...  
 Վաճիկներ 45...  
 Տենգսիր 87.  
 Տիգրանակերտ 66.  
 Տիգրիս 105, 119, 129,  
 149.  
 Տիկարագուա 97.  
 Տիւրոս 115, 139.  
 Տունգուղներ 120...  
 Տուրնըփոր 10, 55, 68.  
 Տրանսիլվանիա 46.  
 Տրդատ 72, 74.  
 Տրյա 142.

Փերլի-Դաղ 4.  
 Փիլոն 55.  
 Փիւնիկեցիներ 112.  
 Փոքր Ասիա 41, 107,  
 108, 111, 115, 117, 118,  
 120—123, 127, 133,  
 144, 146.  
 Փոխւղիա 122.  
 Քամ 103.  
 Քաղեցագիք 121...  
 Քանան 131.  
 Քիրէջի 3.  
 Քիրման 83.  
 Քուշեր կամ Քուշ-  
 եաններ 110...  
 Քուրդեր 1, 49, 57...  
 Քուրդիստան 57, 102.  
 Քսենոֆոն 58.  
 Քրիստոս 49, 123.  
 Օլուզներ 23...  
 Օման 106.  
 Օրդուպատ 26, 31, 78—  
 82.  
 Օրմուզ կամ Հիւրմիւզ  
 106.  
 Օքսուս 45, 109.  
 Քառլիորն 12.  
 Քրանիա 52, 111, 131,  
 145.

## ՑԱՆԿ ՀԵՂԻՒԱԿՆԵՐԻ

- Abich 4, 17.  
Bayern 24  
Behm 136.  
Bergé 24.  
Blanford 134.  
Bodesntedt 50, 54.  
Burton 134,  
Candolle (Alfonse de) 120.  
Chardin 94.  
Chipiez (Ch.) 110.  
Ciribied (*Հրաբոս*) 50  
Creagh (James) 9, 56.  
Desjardins (Ernest) 73.  
Dieulafoy (M.) 84.  
Dulaurier 55.  
Duponchel 106.  
Fraas (O.) 133, 134.  
Gobineau (de) 138.  
Goldsmid 134.  
Gregor (Mac) 134.  
Griesbach 134.  
Hamilton 65.  
Hellwald (Fr. von) 45.  
Hitchcock 91.  
Issaverdens (*Իսաւերդնեց*) 41.  
Jule (H.) 87  
Кеслеръ 22.  
Khanikov 133.  
Khodzko 17.  
Koch (K.) 4, 30 79.  
Kremer (Alf von) 134.  
Layard 110  
Lenormant (Fr.) 102, 115, 115, 118, 121.  
Marko Polo 87.  
Maspero 118.  
Montpäreux (Dubois de) 19, 22, 31, 65, 68, 69, 75, 78, Mortillet (Gabriel de) 119.

- Oppert 116, 421.  
Parrot 37.  
Perrot (G.) 110.  
Petzholdt 37.  
Piérement 119.  
Radde (Gustave) 7, 11, 29, 34.  
Ramsay (W.) 122.  
Rawlinson (G.) 118.  
Rawlinson (H.) 96, 98, 100, 134.  
Reclus (Elisée) 111, 201 (33), 211, 311.  
Renan (E.) 114.  
  
Ritter (Carl) 7, 8, 18, 44, 65, 68, 96.  
  
Saint-Martin (Vivien de) 8, 45, 65, 68, 74.  
Sanson 119.  
  
Schweiger-Lerchenfeld 45.  
Seidlitz (N. von) 23, 31, 35, 37, 43, 51, 58, 81.  
Семеновъ 21  
Statkovskiy 12  
  
Wagner (Moritz) 14, 17, 28 50, 69, 91, 94, 136.

## ՎՐԻ ՊԱԿՆԵՐ

ԵՐԵՒ  
ՍԻՄՈՆ  
Ա-ՂԵՂ  
54 Հաղուգիւտ Հաղուագիւտ  
57 տարբարւում են տարբերւում են  
63 աջ ափից արևելեան ափից  
113 Ճանապարդութիւնները Ճանապարհորդութիւնները

128 Ճողորութիւնները Ճողութիւնները



ԳԻՆՆ է 30 ԿՈՊԵԿ

